



ԱՆԱԿԻՏ

ՀԱՆՔԻՍ ԱՄՍԵԱՅ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԹԵՆՍԵԱԿԱՆ

Թ. ՏԱՐԻ 1907

ՅՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ

ԹԻԻ 1-2

ԲԱՐԻԶ

« Խօսք » եւ « լոյս » երկու համանուն բառեր են նախնական սրբազան լեզուին մէջ : Եւ առանց պատճառի չէ այդ : Լոյս կերպով մը բնութեան խօսքն է : Եւ խօսքն ալ մտքին լոյսն է : Տիեզերքը մտիկ կ'ընէ եւ կը պատասխանէ : Յախտեմական խօսակցութիւն մը կ'անցնի բնութեան եւ հոգիին միջեւ : Եւնէ հոգին չճարգմանէր, չլուսաւորէր ինչ որ միւսը կ'ըսէ, այդ չհասկցուած մտին բնութեանը չեղածի պէս պիտի ըլլար :

Ժ. ՄԻՇԼԷ

Ի Ս Յ Ո Ւ Ս Ծ Է



Ա Ն Ա Ն Ի Տ Ի

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԵԾՐԶԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄՈՒ ԴԵՏԻ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼ

1907

Բ Ս Զ Մ Ա Վ Է Պ

1907

ՎԱԹՍՆԵՐՈՐԴ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Բազմալիկ, հանդէս Հայկական Ճեմարանի, նուիրուած ազգային դիտութեանց, գեղեցիկ դպրութեանց, հայկական այժմէութիւններու, կը ներկայացնէ Բանասիրութիւններ եւ Թղթակցութիւններ՝ Հայոց պատմութեան, մատենագրութեան, գեղարուեստներու մասին. գրական բաժնին մէջ՝ Բնաբանութիւններ, Թատրերգութիւններ, Վիպեր. նորութեանց բաժնին մէջ՝ տեղեկութիւններ նորագոյն գրքերու, հանդէսներու, ղէպերու մասին: Իր նպատակն է բարձրացնել հայ ժողովուրդը՝ Գիտութեամբ, Գեղարուեստով, լիակատար գիտակցութեամբ իր Անցելոյն եւ իր Դարուն: Գինն է ֆր. 10, առլար՝ 2, ըստպի՝ 4: Գիմել ուսումնական թղթակցութեանց համար. Rédaction de la Revue Bazmavep. բաժանորդագրութեան համար.

Imprimerie Arménienne — St. Lazar Venise (Italie)

ԲԱՅՈՉԱՍԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

1907 թ.

Ա Խ Ո Ւ Ր Ե Ա Ն

ԳՐԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐՍԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹԻ
Որ լոյս տեսնելու է առաջիկայ Յունւարի մէջ
Ալեքսանդրապօլում

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՄՈՒ Է

	Տարեկան	Կէս տարի
Ալեքսանդրապօլում	3 ֆր.	2 ր.
Ուրիշ տեղեր	4 »	2 » 50 Կ
Արտասահման	12 ֆր.	7 ֆր.

Առանձին համարը ամէն տեղ 2 կոպեկ
Կարելի է վճարել նաեւ ամսէ ամիս
Խմբագրութեան հասցէն՝ Alexandropol,
Rédaction "Akhourian," (Caucase)

Խմբագիր-Հրատարակիչ՝ Կ. ԱՓԻՆԵԱՆ

LES TROUVÈRES ARMÉNIENS

Traduction française

AVEC UNE INTRODUCTION

par

ARCHAG TCHOBANIAN

Գինն է 3 ֆր. 50

Գնել ուզողները պէտք է դիմեն՝

Librairie du Mercure de France
26, Rue de Condé, Paris

ԱՆԱՏԻՏ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Ազգային, Գրական, Կեղարուեստական

Թ. ՏԱՐԻ 1907


ՅՈՒՆՎԱՐ-ՓԵՏՐՎԱՐ

Թիւ 1-2

ԴԵՄՔԵՐ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՔԵԱԼԸ

Ն. Վ. ՄԿՐՏԻՉ ԽՐԻՄԵԱՆ¹



ցիկ կեանքերէն: Դեռ կանգուն՝ անխոնջ կորո-

յնակ, Հայաստանի սրբավայրին՝ Էջմիածնայ՝ դարաւոր հովանակայ տակ, մարդ մը կայ որուն կեանքը մին եղաւ ժամանակակից պատմութեան ամենէն ողբերգական ու ամենէն բարձրորէն գեղե-

վով մը. հակառակ իր անհուն ցաւերով ծանրացած ութսունեւվեց տարիներուն բեռանը, Ն. Վ. Մկրտիչ Ա., Հայ Եկեղեցւոյ Հայրապետը, ժողովրդեան պետի իր դերը կը շարունակէ կատարել:

Հայերու պատգամաւորութեան մը, որ 1896ին կ'երթար երախտագիտութեան զգացումներ յայտնել կլատտինին, « մեծ ծերունին » խանդաղատանքով լուր կը հարցնէր մեծանուն եկեղեցականին մասին, որուն հետ տեսակցութիւն մը ունեցած էր Լոնտոն, 1878ին,

(1) Այս յօդուածին ֆրանսերէն բնագիրը հրատարակուեցաւ «Մերքիւր տը Ֆրանս»-ի Նոյ. 15ի Թիւին մէջ: Ամբողջական ուսումնասիրութիւն մը չէ տարիա. Խրիմեանի կեանքն ու տիպարը ստուար հատորի մը նիւթ կրնան կազմել, և այդ հատորը օր մը պիտի գրուի անշուշտ և պիտի ամփոփէ ամենայն մանրամասնութեամբ՝ այդ եզակի զէմբին բոլոր գծերը, — և Թերութիւններն ալ: Այս յօդուածով մենք նպատակ ունէինք յարգանքի և երախտատագիտութեան պարտք մը կատարել այդ մեծ Հայուն հանդէպ, ճանչցնել Եւրոպացւոց իր կեանքին գլխաւոր կէտերը և միևնոյն ատեն՝ անգամ մը ևս՝ մեկնել ու լուսաբանել « հայկական հարցը », որ Խրիմեանի կեանքին հետ սերտ կապուած է: Կ'երևայ Թէ մեր նպատակին հասած ենք որոշ չափով մը: Այն կարծի ճշմարտութիւնները որ այս յօդուածին մէջ ըսուած են Թուրքերու մասին, մեծ փորի ցաւ

են պատճառեր արտասահմանեան Թուրքերէն մէկ քանիին, որոնցմէ մին Պուլկարիա հրատարակուող Էնալի անուն Թերթի մը մէջ հայհոյանքներով լեցուն յօդուածով մը երեւակայեր է պատասխանած ըլլալ մեր տուած փաստերուն: Հաճոյքով իմացանք միևնոյն ատեն՝ որ Լոնտոնի նորահաստատ անգլո-ուսական ընկերութիւնը ուշադրութիւն ընծայեր է այդ ուսումնասիրութեան եւ որոշեր է անոր ամփոփումը հրատարակել իր պաշտօնական ամսագրին մէջ: Այդ ընկերութիւնը, որուն կ'անդամակցին ռուս եւ անգլիացի բազմաթիւ ծանօթ գրական և քաղաքական անձնաւորութիւններ, և որուն նպատակն է անգլո-ուս մերձեցումն ամրապնդել, իր անդամներուն մէջ ունի նաև երկու Հայ, Բաբֆիի երկու որդիները, որոնք քանի մը տարիէ ի վեր եւանդուն ջանքերով կ'աշակցին Լոնտոնի մէջ հայկական իրոփականտի գործին:

Պերլինի Վեհաժողովէն առաջ , եւ կ'աւելցնէր՝ « Մեծ մարդ մըն է անիկա » :

Այդ « մեծ մարդ » ուն կեանքը եւ գործը կ'արժէ որ ծանօթացուին , իրենց ամբողջական գծերով , բովանդակ քաղաքակիրթ աշխարհին :

. . .

Մկրտիչ Խրիմեան ծնած է Վան , 1820ին , աղքատ ծնողքներէ : Այդ թուականին թրքական Հայաստանը ընկղմած կը գտնուէր ստրկութեան ու ազիտութեան թանձր խաւարի մը մէջ : Թուրք բռնապետութիւնը , որ իր բարբարոսութեան ամբողջ արհաւիրքովը կը ճնշէր Պետութեան բոլոր ազգաբնակչութեանց վրայ , մասնաւորապէս կը ջախջախէր հպատակ քրիստոնեայ ժողովուրդները :

Այն կացութիւնը որուն Թուրքերը ենթարկեցին իրենց նուաճած քրիստոնեայ ժողովուրդները , առերեւոյթ եւ հաշուած թոյլտուութեան մը քողին տակ՝ ամենագարչելին է որ կարելի ըլլայ երեւակայել : Կացութիւն մըն էր ստրուկներու , որոնք պարտականութիւններ միայն ունէին եւ ոչ իրաւունքներ , որոնք ոչ մէկ ապահովութիւն կը վայելէին իրենց կեանքին , ինչքերուն եւ ընտանեկան յարկի պատւոյն համար , եւ որոնց համար տիրապետող « քասթ » ին քմահաճոյքը արդարութեան տեղ կը բռնէր : Թուրքը « թոյլ կուտար » որ ըստան գլուխն ուսերուն վրայ կրէր , եւ ըստան պարտաւոր էր , բաց ի միւս տուրքերէն , երախտագիտութեան մասնաւոր հարկ մը հատուցանել այդ գերագոյն շնորհին համար : Բացարձակապէս զինաթափ , զինուորական ու վարչական կեանքէն վտարուած , ըստան նկատուած էր ինչպէս փարիա մը որ պէտք էր աշխատէր իր տէրերուն ծառայելու համար : Եւ որպէս զի անջրբար միշտ մնար տէրերուն եւ ստրուկներուն միջեւ , Թուրքը « թոյլ կուտար » դարձեալ որ հպատակ ցեղերը իրենց լեզուն , կրօնքը , սովորութիւնները պահպանէին : Բայաները մինչեւ իսկ պարտաւոր էին մասնաւոր զգեստ մը կրել որ զիրենք զանազանէր տիրապետող ցեղէն , տեսակ մը համազգեստ ստրկութեան . իրաւունք չունէին ձի հեծնելու : Կարող էին եկեղեցիներ կառուցանել , բայց պայմանաւ որ

անոնց տային համեստ բարձրութիւն մը , պարզ ու աղքատիկ երեւոյթ մը : Այդ թոյլտուութիւնն իսկ ոչինչ ունէր կայուն . երբ քէֆն ուզէր , Թուրքը քրիստոնեայ ուսերը կը զրկէր թոյլտուած գլուխներէն եւ կամ այդ գլուխները կը բռնադատէր ապարօջ փաթթելու . արդէն ըստաները պէտք էր որ ամէն տարի տային իրենց զաւակներուն 100ին 5ը , որոնք կ'իսլամացուէին եւ կ'երթային կայսերական զօրագունդերուն թիւն ստուարացնել : Թուրքերու հաստատած այս ահռելի ընծիմին վրայ կ'աւելնար , Հայաստանի մէջ , մասնաւոր բռնութիւնը Կիւրտներուն , որոնք , մահմետական ըլլալուն համար՝ վայելելով առանձնաշնորհումներ որոնցմէ քրիստոնեաները զուրկ էին , իրենք ալ իրենց կարգին կը կեղեքէին զանոնք եւ անոնցմէ կը կորզէին հարկեր այնքան ապօրինի որքան վայրագօրէն գանձուած :

Չափազանց սկար՝ թօթվել փորձելու համար այսքան անհանդուրժելի լուծ մը , ջախջախուած՝ զինուորական ահագին զօրութեանը տակ Թուրքին որմէ Եւրոպան իսկ կը սոսկար , Հայերը , տանելով հանդերձ գոյութեան այս ամօթալի պայմանները որոնք զիրենք բոնի կը մղէին դէպ ի բարոյական եւ մտաւորական անկում , անեղձ պահած էին , զժբաղդութեան մոխիրներուն տակ , քանի մը կայծ « սրբազան կրակ » էն : Զէյթունի , Սասունի եւ այլ քանի մը լեռնոտ տեղերու մէջ , յաջողած էին պահպանել իրենց զէնքերը , եւ պահել գոյութիւն մը գրեթէ անկախ : Մտաւորական կեանքի քանի մը նշոյններ կը պլպլային հոս հոն . վանքերուն խորը , սակաւաթիւ դպրոցներուն մէջ՝ ուր մանչերը միայն կ'երթային , եւ ժողովրդական բանաստեղծներու հոգւոյն մէջ : Ուժեղ խառնուածքով անհատներ , եւրոպական մտածման հետ չփման մէջ մտած եւ հին քրոնիկներուն մէջ իրենց ժողովրդեան անցեալն ուսումնասիրած , կը ջանային պատրաստել ազգային զարթումը :

Ամենէն կարեւորը մտաւորական առողջութեան այս վառարաններուն , Վենետիկի Մխիթարեանց հմուտ Մխարանութիւնն էր : Այդ մեծանուն վանականները կը վերակազմէին հին Հայաստանի պատմութիւնը , կը հրատարակէին մէկ ստուար մասը հայ դասական գրականութեան գործերուն , որ թաղուած կը մնային ձեւ

նազիրներու փոշույն մէջ . հայերէնի կը թարգմանէին Արեւմուտքի գրական հրաշակերտներէն շատերը , եւ հիմը կը դնէին հայկական նոր գրականութեան մը եւրոպական ձգտումներով տոգորուած , ազատութեան , գեղեցկութեան , ներդաշնակութեան խանդոտ սիրով մը թրթրուուն , մարդկային արժանապատուութեան պաշտամունքը փառարանող :

Օժտուած՝ ճոխ եւ ուժեղ բնութեամբ մը , կրակոտ ու անկախ խանուածքով մը, Մկրտիչ Խրիմեան՝ իր պատանութեան օրերէն իսկ , ուսանելու անդիմադրելի պէտք մը զգաց՝ շրջակայ անկումէն վեր բարձրանալու եւ իր շղթայակից եղբայրներուն բարձրացման նպատակ կարենալու համար : Չգոհանալով այն նիհար կրթութեամբը զոր ինքզինքին տուած էր ընթերցմամբ այն բոլոր գրքերուն զոր կրցած էր ձեռք անցնել , փափաքելով ընդլայնել իր ծանօթութեանց դաշտը եւ մասնաւորապէս ուսումնասիրել հայ ժողովրդին ներկայ պայմանները աշխարհիս ամէն մասերուն մէջ , քսան տարեկանին մօտ՝ ձգեց իր հայրենի քաղաքը , իր կրնն ու մէկ հատիկ զաւակը , եւ մեկնեցաւ երկայն ճամբորդութեան մը համար : Անցաւ պարսկական Հայաստանէն , ուսական Հայաստանէն , եւ եկաւ Պոլիս ուր բաւական ատեն մնաց : Այդ միջոցին , նշանակելի փոփոխութիւն մը յառաջ եկած էր թուրք կառավարութեան վարմունքին մէջ դէպ ի բայաները :

1827ի ուսուցիչ պատերազմը , յունական ապստամբութեան բարեյաջող ելքը , տկարացուցած էին թրքական զօրութիւնը եւ Օսմանեան պետութեան մէջ Եւրոպայի ազդեցութիւնը զօրացուցած : Թրքական Հայաստանին եւ պարսկական Հայաստանին մէկ մասը անցած էր ուսական տիրապետութեան տակ , եւ Հայերը , այս նոր կացութեան մէջ , գտած էին կեանքի ապահովութիւն , օրէնքի առջեւ հաւասարութիւն , եւ որոշ չափով ազատութիւն՝ ցեղին վերանորոգման նպատակով : Գալով Թուրքիոյ հպատակ մնացած Հայոց , ստոնք կը տեսնէին մեծ խրամատ մը՝ բացուած , որմէ ազատութեան շունչը , Եւրոպայէն գալով , կը մտնէր Օսմանեան անհուն Պասթիլին գարշահոտ ու հեղձուցիչ մթնոլորտին մէջ :

Կիւրանէի իսթիլը , զոր Սուլթան Մէճիտ

արձակեց 1830ին՝ ա՛յնքան Եւրոպայի ճնշման տակ որքան Մեծ Եւրոպոս Րէչիտ փաշայի անկեղծօրէն վերանորոգչական ներշնչմամբ , առաջին անգամ ըլլալով կը ճանչնար պետութեան բոլոր հպատակներուն՝ առանց կրօնքի ու ցեղի խտրութեան՝ օրէնքի առջեւ հաւասարութեան սկզբունքը , կը ձգտէր եւրոպացնել վարչութիւնն ու դատարանական կարգուսարքը , կանոնաւորել տուրքերու գանձումը եւ զինուորական ծառայութիւնը , հաստատել ամենուն համար՝ կեանքի , ինչքերու եւ պատուոյ ապահովութիւնը : Այս իսթիլին մէջ յայտնուած սկզբունքները՝ ճշգրտապէս ու ամբողջապէս չգործարուեցան , որովհետեւ մահմետական զանգուածները դեռ պատրաստ չէին այսպիսի հիմնական բարենորոգումներ ընդունելու եւ կենսունակ դարձնելու համար . բայց ատոր հետեւանքով բայաներու կացութիւնը բաւական զգալի բարւոքում մը կրեց , մանաւանդ մեծ քաղաքներուն մէջ (գաւառներուն մէջ , պայմանները գրեթէ անփոփոխ կը մնային) . քրիստոնեաները կարողացան այնուհետեւ , կեդրոններու մէջ՝ ինչպէս Պոլիս , Իզմիր , եւն. , բաւական մեծ ազատութիւն մը վայելել զպրօցներ հիմնելու , գրական շարժում մը զարգացնելու համար . Եւրոպայի Համալսարաններու կամ Միթիթարեանց զպրօցին մէջ կազմուած Հայեր այդ մտաւոր վերականգման ջանքերուն նախաձեռնակներն եղան , շարունակելով , ընդլայնելով եւ հանրայնացնելով գործը որուն հիմը իրենք իսկ Միթիթարեանները դրած էին :

Խրիմեան յարաբերութեան մտաւ Պոլսոյ հայ մտաւորական բարձր դասին հետ : Այդ հմուտ մարդոց շրջանակին մէջ իր կրթութիւնն ընդլայնեց , իր գրական մշակումը ճոխացուց . մասնաւոր խնամքով մը կարգաց եւ ուսումնասիրեց մանաւանդ Միթիթարեանց հրատարակած պատմական , բանաստեղծական , բանասիրական արտագրութիւնները :

Այդ թուականին հրատարակեց իր առաջին գործը , Հրաւիրակ երկրիս աւեհեաց : Քերթուած մըն է՝ եօթ գրուագով , դասական հայերէնով գրուած եւ հայկական հին տաղաչափութեամբ : Հեղինակն այնտեղ կը ներկայանայ իրբեւ հայրենիքի պատուիրակ մը , որ օտար երկինքներու տակ ծնած Հայերը կը հրաւիրէ երթալ իրեն

հետ այցելել նախահարց երկիրը, սքանչացմամբ
 դիտել անոր բնական գեղեցկութիւններն ու
 հինաւուրց յիշատակարաններու պատկասելի
 աւերակները, արթնցնել փառասոր անցեալին
 յիշատակները որ հոն կը քնանան մոռացութեան
 մոխիրներուն տակ: Խանդոտ առաջնորդը իր
 պանդուխտներու կարաւանը կը տանի նախ
 Արարատ եւ շրջակայքը, կը վերակենդանացնէ
 հին գրոյցներն ու աւանդութիւնները, բնանը-
 կարներու շքեղութիւններն ու հոգին հարստու-
 թիւնները կ'երգէ, երկրագործներու եւ հովի-
 ներու կեանքը կը պատկերացնէ, կը փառաբանէ
 ազատ անցեալը եւ ներկայ ինկածութիւնը
 կ'ողբայ. յետոյ՝ կ'անցնի Վաղարշապատ, բնու-
 կավայր Արշակունի թագաւորներուն, յետոյ
 աւերակներն Անիի, Բագրատունեաց մայրաքա-
 ղաքին, այդ հոյակապ ոստանին ուր հայկական
 ճարտարապետութիւնը իր բարձրագոյն զար-
 քացմանը հասաւ, յետոյ յաջորդաբար կ'եր-
 թայ Սեպուհ լեւոր, ուր կանգ կ'առնէ բարոյա-
 խօս բանաստեղծ Յովհաննէս Պլուզի գերեզմա-
 նին վրայ, Օշական՝ ուր կը խոնարհի շիրմին
 առջեւ Մեսրոպի, մեծ վարդապետին որ Ե. դա-
 րուն հնարեց հայկական այբուբենը եւ ազգային
 գրականութիւնը հիմնեց. յետոյ կ'անցնի Աւա-
 րայրի զաշտը, ուր վարդան Մամիկոնեան,
 Հայոց սպարապետը, կոռուցաւ՝ Ե. դարուն՝
 Պարսից զէմ որոնք կ'ուզէին զրազաշտական
 կրօնքը բռնի ընդունել տալ Հայոց. յետոյ՝ Վան,
 Վարազ, Արտամետ, Հոգւոց վանքը, ուր կը
 հանգչի Մեծն Տրդատ, որ, Դ. դարուն սկիզբը,
 քրիստոնէութիւնը Հայաստանի պաշտօնական
 կրօնքը դարձուց եւ այդպէսով հայ միաքը վերջ-
 նականապէս ուղղեց զէպիստոսեան քա-
 ղաքակրթութիւնը. յետոյ՝ Նարեկայ վանքը,
 ուր ապրեցաւ, Ժ. դարուն, Գրիգոր Նարեկացի,
 հանճարեղ միստիքական բանաստեղծը. ուղեու-
 թութիւնը կ'աւարտէ այցելելով Տարօնը, ծննդ-
 դավայր Մամիկոնեանց, յետոյ Աշտիշատը, ուր
 գահեց Սահակ, մեծ կաթողիկոսը, որ, Ե. դա-
 րուն, խումբ մը դեռատի Հայեր Բիւզանդիոն
 զրկեց որպէսզի հոն ուսանին, եւ անոնց վերա-
 դարձին՝ այդ Արեւմուտքի ոգով տոգորուած
 Հայերու աջակցութեամբ՝ եւրոպական քաղա-
 քակրթութեան մը հիմնը դրաւ Հայաստանի

մէջ. կանգ առնելէ յետոյ Հայաստանի մեծ
 պատմագրին Մովսէս Խորենացւոյ գերեզմանին
 առջեւ, կը վերագոտնայ Բիւրակնեան լեռները,
 ուր իր քերթուածը կը փակէ խօսքը տալով
 նոյն ինքն Հայաստանին, որ, Մօր մը զէմքով
 անձնաւորուած, օտար երկիրներու մէջ ցրուած
 իր զաւակները կը հրաւիրէ յիշել զինքը, գալ
 խմբուել իր շուրջը եւ վերականգնել զինքը այն
 թշուառութիւնէն ուր կը մնայ զետնամած:

Կարելի չէ անշուշտ նկատել այս քերթը-
 ւածը, ինչպէս բոլոր զրքերը զոր Խրիմեան
 հրատարակած է յետոյ, իրեւ գեղեցկագիտա-
 կան տեսակէտով անթերի դարձ մը: Խրիմեան
 երբեք չէ ձգտած զէպիստոս արուեստը. գրա-
 կանութիւնը, իրեն համար, ամէն բանէ առաջ՝
 գործունէութեան միջոց մը եղած է, բայց իր
 մէջ կայ ճշմարիտ բանաստեղծ մը, որ կը յայտ-
 նուի արդէն, ու փայլով, այս առաջին գործին
 մէջ. բանաստեղծ մը քնքուշ ու տաք զգայ-
 նութեամբ, բնական ու պարզ ներշնչմամբ, որ
 ինքզինքը կ'արտայայտէ ոճով մը համեղ թէպէտ
 անհաւասար, քնարերգութեամբ ու սրամտու-
 թեամբ լեցուն, մերթ հօր, միշտ տոգորուած՝
 սոհմային շեշտուած նկարագրով մը, գեղջկա-
 կան կեանքի տեսարանները զոր այս քերթուա-
 ծին մէջ նկարած է, զմայլելի են գունազեղու-
 թեամբ ու կենդանութեամբ. վեհ տրամութիւն
 մը կ'արտաշնչուի այն հատուածներէն ուր վա-
 ղընջուց աւերակները կը խուզարկէ եւ հին հե-
 րոսներու ստուերները կ'ողգէ, ինչպէս հետեւեալ
 կտորին մէջ:

Այլ արդ ս'ը մեր քաջահաւաս իշխանք փառաց
 եւ զօրութեան,
 Այս ամեն քաջաց որդիք այսպէս մեռան արիապան:
 Մրեցցի մարտ ծնան ըզնուին եւ զոն ետուն վասն
 Հայրենեաց.
 Եւ արդ չի' քայնց ի միջի ոչ հարտ ոչ մարտ ա-
 ռաւիքիքի,
 Որ դարձեալ ըստ սուաջնոյն ծնանին մանուկ դի-
 ցազն եւ քաջ:
 Մե' ք որդիք եմք այն քաջաց * այլ յոյժ յետեալ եւ
 հեղգացեալ,
 Որ սովորոյք ունիմք միայն պարծիլ զնախնեօք մեր
 քաջագործ,

Կամ իբրև զլավան մանուկ նրսիլ ողբայ զադէսս մեր .
 Արիական հոգին ի մեզ , ա՛հ , մեռեալ է , եւ չի
 ի կեանս .
 Ո՞վ գոգի նախնի քաջաց նոր դարձուսցէ յորդիս
 յիսին :
 Ասուա՛ծ միայն , որ ի քառանց գիտես հանել դու
 մարդ հրաւիր ,
 Հրամա՛ն տուր Մրոյ քառանց , բող նոր յառնեն
 Մուսեղի , Վահանի՛ ,
 Հրամա՛ն տուր Ասեբասայ , բող ի շիրմեն ելցի
 Սահակ ,
 Հրամա՛ն տուր Հացիկ գիւղին , բող բուսանի Մես-
 րոպայ հասկն :

Այս գրքին երեւումէն քիչ յետոյ , նրբիմ-
 եան մեկնեցաւ Պոլսէն ու գնաց Կիլիկիա , յե-
 տոյ Երուսաղէմ , ուր մնաց ատեն մը՝ Ս . Յա-
 կոբայ հայկական վանքին մէջ . այնտեղ շարադ-
 րեց եւ ի լոյս ընծայեց իր երկրորդ մեծ երկա-
 սիրութիւնը , քերթուած մը՝ Հրաւիրակ երկրին
 աւետեաց տիտղոսով , նմանապէս զասական
 հայերէնով գրուած , (այդ միջոցին հայ գրագէտ-
 ները զեռ կը կարծէին թէ արդի հայերէնը ան-
 կարող էր իբր գործիք ծառայել բարձր գրական-
 նութեան) : Այս քերթուածին մէջ , հեղինակը
 կը յարասէ եւ կը մեկնաբանէ , ջերմ ու երփ-
 նագեղ քնարերգութեամբ մը , Գրիստոսի կեան-
 քը , մահը եւ գործը , նկարուած՝ բնական տե-
 քորին մէջ իսկ այն վայրերուն որ շրջանա-
 կեցին Վահագուր Դէմքին երեւումը :

1853ին , նրբիմեան դարձաւ Վան : Իր կրինն
 ու զուստրը մնաած ըլլալով , որոշեց եկեղեցա-
 կան ասպարէզն ընդգրկել՝ ամբողջապէս անձ-
 նատուր ըլլալու համար հանրային գործին , եւ
 Աղթամարի վանքին մէջ վարդապետ ձեռնադ-
 րուեցաւ :

Այնուհետեւ , իր բոլոր ուժերով սկսաւ
 աշխատիլ իր Հայաստանի հայրենակիցներուն
 մտաւոր ու բարոյական վերականգմանը . ջանաց
 մասնաւորապէս թօթվել թմրութիւնը որ կը
 տիրէր վանքերուն մէջ , գրեթէ բոլոր եկեղե-
 ցականներուն մօտ , յիշեցուց անոնց քաղաքա-
 կրթիչի ու դաստիարակիչի դերը զոր կատարած
 էին անոնց փառաւոր նախորդները՝ Դ . եւ Ե . դա-
 րերէն սկսեալ , հրաւիրեց զանոնք հետեւիլ նա-

խահարց օրինակին , վանքերուն մէջ հիմնել
 դպրանոցներ՝ հմուտ կղեր մը պատրաստելու
 համար , հանրային վարժարաններու թիւը բազ-
 մապատկել եւ տալ անոնց անհրաժեշտ կատա-
 րելագործումները . ցոյց տուաւ մասնաւոր կա-
 րիքը աղջկանց վարժարաններ հիմնելու , ինչ որ
 բոլորովին կը պակսէր՝ ազդեցութեամբ մահմե-
 տական բարքերու որ մինչեւ աստիճան մը թա-
 փանցած էին Հայոց մէջ : Այդ կոչն արձագանք
 չգտաւ . նոյն իսկ նրբիմեանի ղէմ յարոյց , տգի-
 տութենէ ու նախապաշարումներէ՝ կուրացած
 կղերական շրջանակներուն մէջ , խուլ թշնա-
 մութիւն մը :

Նրբիմեան չվհատեցաւ . հասկցաւ , միայն ,
 թէ ամէն բան ի՛ր ձեռքովն ընելու էր , եւ թէ
 ատոր համար հարկաւոր էր որ ունենար նիւ-
 թական ու բարոյական աջակցութիւնը Պոլսոյ
 Հայոց , որ այդ պահուն թուրքիոյ հայ հասա-
 րակութեան ուղեղը կը կազմէին : Ծամբայ ելաւ
 ուրեմն զէպ ի մայրաքաղաքը :

Թեւաբաց ընդունուեցաւ այնտեղ , Իր համ-
 բաւն արդէն մեծցած էր Պոլսոյ հայ գաղութին
 մէջ . հոն կը գնահատէին իր այնքան լուսամիտ
 որքան կրակոտ հայրենասիրութիւնը , ուժն ու
 գեղեցկութիւնն իր նկարագրին , որուն բաղկա-
 ցուցիչ տարրերն էին՝ խանդավառութիւն , անձ-
 նուիրութիւն , անշահախնդրութիւն եւ անսահ-
 ման բարութիւն մը . իր երկու քերթուածները
 իրեն գրաւած էին գրանմուտներուն համակրու-
 թիւնն ու յարգանքը . քարոզները զոր յաճախ
 արտասանեց քաղաքին բոլոր եկեղեցիներուն
 մէջ եւ զոր խուռնամբոխ կ'երթային ունկընդ-
 ըիլ , կը հրապուրէին , կը յուզէին , կ'ելեկտրա-
 կանացնէին ժողովուրդը . այդ քարոզները , որոնց
 մտերիմ ազդուութեանը ոչ մէկ հայ քարոզիչ
 կրցած է հասնիլ . խօսուրդառուքներ էին աւելի ,
 պարզ , ինքնեկ գնացքով մը , բնական ու թա-
 փանցող շեշտով մը , ուր սրտէ բղխած ար-
 ցունքներ՝ եւ որ կը փոխանցուէին ունկընդի-
 րներուն՝ պարզուկ «իւմուր»ի մը սիրուն ցայտ-
 քերուն կը խառնուէին . կը կարծէին լսել նոյն
 ինքն հոգին հինաւուրց հայրենիքին որ կը խօ-
 սէր այդ անձնեղ ու գեղեցիկ եկեղեցականին
 ըներնով :

Մտաւորական վերածնութեան շարժումը

կ'երագէր ու կը զօրանար այդ միջոցին . շատ մը ամսաթերթներ ու լրագիրներ, Պոլիս ու Իզմիր տպուած, կը տարածէին ազատական գաղափարներ, հայ հասարակութեան կը ծանօթացնէին արեւմտեան ձգտումները, գիտութեան յառաջդիմութիւնները, անոր կը ճանչցնէին իր անցեալը, զինքը կը հրաւիրէին վեր կանգնիլ այն անկումէն ուր ստրկութիւնը հասուցած էր զինքը: Իպրոցներու թիւը կը բազմապատկուէր. կը սկսէին ազգային թատրոն մը հիմնել: Խրիմեան Պոլսոյ Հայոց մտաւորական շարժման պարագլուխներուն բացատրեց որ, եթէ կ'ուզէին լրջօրէն վերականգնել հայ ժողովուրդը, ամէն բանէ առաջ պէտք էր ցեղին բնավայրին մէջ իսկ ուսում տարածել. « Եթէ կ'ուզէք, կ'ըսէր իր պատկերաւոր լեզուով, ծառը զօրացնել, պէտք է արմատին հոգ տանիլ »: Պոլսոյ Հայերը ջերմօրէն պատասխանեցին այս կոչին: Խրիմեան նորէն մեկնեցաւ Վան, իր առաքելութիւնը լիովին կատարած ըլլալով. այնտեղ կ'երթար, վանահայր կարգուած Վարազայ վանքին, քանի մը խանդոտ ու օժտուած աշակերտներով ընկերացած, եւ հետը տանելով տպարանի մը ամբողջ նիւթեղէնները եւ գումար մը իր ձեռնարկելիք գործին սահմանուած:

Վան հասնելուն պէս, հիմնեց դպրանոց մը Վարազայ վանքին մէջ, հոն հաստատեց փոքրիկ տպարան մը, եւ սկսաւ հրատարակել գրական ամսաթերթ մը՝ Արծուի Վառպուրական տիտղոսով: Այդ ամսաթերթը կը պարունակէր պատմական, տեղագրական ուսումնասիրութիւններ, քերթուածներ, բարոյական խորհրդածութիւններ, քրոնիկներ, եւն. իրեն նպատակ ունէր հայ ժողովրդին ճանչցնել իր անցեալը եւ անոր մէջ արթնցնել ազգային արժանապատուութեան զգացումը, իր իրաւունքներուն գիտակցութիւնը, յառաջդիմութեան սէրը: Շատ տարածուած էր թրքական Հայաստանին մէջ, Պոլիս, եւ նոյն իսկ Կովկաս ու պարսկական Հայաստան, եւ իր բարոյական ազդեցութիւնը շատ մեծ եղաւ: Իպրանոցը, ուր Խրիմեան իբր աշակերտ ընդունեցաւ բազմաթիւ պատանիներ Վանէն, Շատախէն, Մոկաց երկրէն, Մուշէն, պարսկական Հայաստանէն ու ռուսական Հայաստանէն, արտադրեց քանի մը սերունդներ ուսեալ ու գիտակից հայրենասիրութեամբ մը համակուած

եկեղեցականներու, որոնցմէ ոմանք յետոյ եղան մեծարժէք զրագէտներ, ֆուլբրագէտներ, բեմբասացներ ու գործիչներ, ինչպէս Գարեգին Սրուանձտեանց եպիսկոպոսը, Արսէն Թոխմախեան, Արիստակէս Տէր-Սարգիսեան, Եղիշէ Տէր-Սարգսիանց վարդապետները, եւն. նոյն ինքն Րաֆֆի, Հայոց ազգային մեծ վիպասանը, որ, ծագմամբ պարսկահայ, յետոյ՝ Թիֆլիս հաստատուեցաւ եւ արտադրեց ամենակարեւոր գործեր՝ ազատութեան ուժեղ շնչով մը համակ թրթռուն, քանի մը ամիս անցուց՝ իր ասպարէզին սկիզբը՝ Վարազայ վանքին մէջ, եւ Խրիմեանի կրակոտ ու լուսամիտ հոգւոյն բեղմնաւոր ազդեցութիւնը կրեց:

Քանի մը տարի հտքը, Խրիմեան Մուշի մէջ հիմնեց Վարազայ գործունէութեան մասնաճիւղ մը. դպրանոց մը եւ տպարան մը իր խնամքով հաստատուեցան Ս. Կարապետի վանքը, եւ ամսաթերթ մը, Արծուիկ Տարունոյ տիտղոսով, սեսաւ լոյս տեսնել հոն՝ խմբագրապետութեամբ Վարազայ վարպետին ամենէն փայլուն աշակերտին՝ Գարեգին Սրուանցտեանցի:

Վերանորոգման այս բոլոր գործունէութիւնը մեծ դժուարութեանց մէջ է որ կատարուեցաւ, զոր կը յարուցանէին՝ մէկ կողմէ՝ թուրք իշխանութիւնները, եւ՝ միւս կողմէ՝ հոյ կղերամու ու խաւարեալ միջավայրերը. Թուրքերը գէշ աչքով կը նայէին այդ լուսաւորութեան ու հայրենասիրութեան վառարանին զարգացումը Հայաստանի սրտին մէջ. եւ սակայն Խրիմեանի գործը ո՛չ Թուրքիոյ դէմ ուղղուած էր ո՛չ մահմետական կրօնքին դէմ. ան ուզուած էր տգիտութեան, բռնութեան եւ մոլեռանդութեան դէմ. շատ լաւ հասկնալով տգէտ ու աւազակութեամբ ապրող ցեղերով պաշարուած ըլլալու անպատեհութիւնը որուն ենթարկուած էին Հայերը, Խրիմեան պատուական գաղափարն ունեցած էր Բիւրտերը հրաւիրելու որ իրենց զաւակները Հայոց դպրոցները ղրկեն, եւ իր կոչը ապարդիւն չէր մնացած. Թուրք կառավարութիւնը խոչընդոտները բազմապատկեց Խրիմեանի գործունէութեան դէմ, այնպէս որ քիչ յետոյ ան ինքզինքը ստիպուած տեսաւ Վարազայ վանքը ձգել ու նորէն Պոլիս երթալ: Այնտեղ ինքզինքը պաշտպանեց, յաջո-

ղութեամբ, Բ. Դրան մօտ, այն ամբաստանութեանց պէմ գոր իր վրայ ծանրացուցած էին, ինքզինքը Մուշի Ս. Կարապետ վանքին վանահայր անուանել տուաւ, եւ գնաց հոն՝ իր գործունէութիւնը վերսկսելու, շարունակելով հանդերձ Վարագայ գործին վերին ղեկավարութիւնն իր ձեռքն ունենալ:

Մուշ, գրած է անգլիացի հիւպատոս մը որ հոն պաշտօն վարած է, Թուրքիոյ ամենէն յոռի վարչութիւնն ունեցող քաղաքն է. հասկանալի է թէ ո՛րքան անուելի պէտք է ըլլայ թայաներու կացութիւնը ամենէն յոռի վարչութիւնն ունեցող քաղաքին մէջ պետութեան մը ուր ամենուրեք անձոնքի է վարչութիւնը: Խրիմեան մօտանց տեսաւ այն ողբալի պայմաններն ուր կը գտնուէին Հայերը՝ ձգուած Թուրքերու եւ Քիւրտերու քմահաճոյքին, որ գանոնք իբր իրենց ճորտերը կը նկատէին, կը կեղեքէին, կը շահագործէին, կը վիրաւորէին զանոնք իրենց կրօնական զգացմանց մէջ՝ փողոցներէն պտըացնելով շուներ սկիհ մը վզերնուն կախուած, առանց երեք պատժուելու պաշտօնեաներէն, որոնք՝ ընդհակառակն՝ անոնց հարստահութեանց կ'օժանդակէին տուրքերն հաւաքելու իրենց կամայական ու յելուզակային եղանակով: Սկսաւ մանրամասն տեղեկագիրներ ուղղել Պոլսոյ Պատրիարքարանին եւ Դրան, բողոքելով իրերու այս զղուելի դրութեան դէմ, թուելով անհամար եւ ամբապէս ապացուցուած իրողութիւններ՝ կեղեքմանց, անարդարութեանց, վայրագութեանց. հուսկ ապա՝ ինքն իսկ գնաց Պոլիս, այս տաժանելի կացութիւնը կառավարութեան անձնապէս պարզելու եւ Դրան աղերսելու համար որ միջոցներ ձեռք առնէ անոր վերջ մը տալու:

Իսուր ոչ մէկ միջոց ձեռք առաւ: Ան միշտ կը շնորհէր բաւական մեծ ազատութիւն մը Պոլսոյ, Իւմիրի Հայոց, ինչպէս բոլոր մեծ քաղաքներուն, ուր կը տիրապետէ Եւրոպայի ազդեցութիւնը, բայց կը կարծէր ճարպիկ քաղաքականութեան մը հետեւիլ՝ ձգելով որ Քիւրտերն ու պաշտօնատարները քամէին, տկարացնէին, ջախջախէին ժողովուրդը Հայաստանի մէջ: Խորապէս խաղաղասէր, աշխատասէր ու պետութեան օգտակար տարր մը՝ այդպէսով՝ յուսահատութեան մղուելով, ըմբոստացման տարրի կը փոխարկուէր: Մուշի տպարանը, ինչ-

պէս եւ Վարագինը, քիչ յետոյ խափանուեցան, եւ Դուռը որոշեց որ այլ եւս ո եւ է տպարանի մը հաստատումը պիտի չարտօնուէր Հայաստանի մէջ:

1869ին, Խրիմեան Պոլսոյ Հայոց Պատրիարք ընտրուեցաւ: Այդ պաշտօնին գլուխն անցնելով՝ ան աւելի ուժգնութեամբ շարունակեց իր բողոքները, Բ. Դրան մօտ, « հայկական խնդրոյն » նկատմամբ, որ միջազգային հարց մը դաճնալէ առաջ, երկայն ատեն ծեծուեցաւ Թուրք կառավարութեան եւ Հայոց միջև: Թուրք կառավարութիւնը ոչինչ ըրաւ գոհացում տալու համար Հայոց արդար եւ տարրական պահանջներուն, որ ուրիշ բանի մէջ չէին կայանար բայց եթէ սղելու օրէնքի առջեւ հաւասարութիւնը, Քիւրտերու ղինաթափումը, տուրքերու կանոնաւոր գանձումը: 1873ին, շատ մը զժուարութեանց հետեւանքով գոր Թուրք կառավարութիւնը կը յարուցանէր իրեն դէմ, Խրիմեան ստիպուեցաւ հրաժարիլ Պատրիարքութենէ: Իրեն յաջորդեց Ներսէս Վարժապետեան արքեպիսկոպոսը, որ կորովի կերպով շարունակեց Խրիմեանի սկսած գործը: Այս վերջինը ատեն մը գրական գործունէութեան մէջ ամփոփուեցաւ. յաջորդաբար հրատարակեց հետեւեալ երկերը, « Մարգարիտ արքայութեան երկնից », « Դրախտի ընտանիք », « Խաչի ճառ », « Սիրաք եւ Սամուէլ », « Պապիկ ու Թոռնիկ », եւն: Այս գործերէն — որ բոլորն ալ արդի հայերէնով եւ արձակ գրուած են — առաջինն մէջ, Աւետարանի գլխաւոր պատուէրները կ'ընդլայնէ եւ կը մեկնէ: « Դրախտի ընտանիք »-ը կը պարունակէ նկատողութիւններ ու խրատներ ամուսնական կեանքի, այր եւ կնոջ, զաւակներու եւ ծնողաց փոխադարձ պարտականութեանց վրայ: « Խաչի ճառ »-ը տեսակ մը արձակ քերթուած է, որ յաճախ կ'ելլէ մինչեւ բարձր քնարերգութիւն մը, երգելով ու մտնաբանելով Քրիստոսի չարչարանքը: « Սիրաք եւ Սամուէլ »-ը խրատներու շարք մըն է՝ երիտասարդներու ուղղուած՝ բնական եւ ընկերական օրէնքներու, մարդկային պայմաններու անհաւասարութեան, ժողովուրդներու եւ կառավարութիւններու յարաբերութեանց, աշխատութեան, յառաջդիմութեան, ազգերու զարգացման եւ անկման, « հանձարի դուստր, յա-

նաջգիմութեան մայր» գիտութեան մասին : « Պապիկ ու թոռնիկ »ը , գմայելի գիրք մըն է որ յուզուած վրձինով մը կը նկարէ հայ գիւղացիներու կեանքը , բարքը , աշխատանքը , սովորութիւնները , հանդէսները , եւ գեոատի գեղջուկներուն խրատներ կուտայ՝ իրենց սիրցնելու համար գաշտերու պարզ ու առողջ կեանքը , անոնց բացատրելու համար ինչ որ կայ գեղեցիկ ու յաւիտենական՝ հայրենի աւանդութեանց մէջ , եւ յորդորելու համար զանոնք որ առաքինութեան եւ յառաջգիմութեան ճամբէն ընթանան :

1877ին , երբ՝ Միտհաթ փաշայի « պետական հարուած »ին հետեւանքով՝ Սուլթան Համիտ արձակեց համբաւաւոր Ֆէրմանը որ օմանեան կայսրութեան Սահմանադրութիւն կը շնորհէր , իրիմեան , խանդավառուած այս դէպքէն , զոր Արեւելքի համար նոր թուականի մը բացումը կը նկատէր , հրատարակեց գրքոյկ մը « Ժամանակ եւ խորհուրդք իւր » տիպառոյով : Անոնք որ կը կարծեն թէ Հայերը մղուած են ետական հայրենասիրութեամբ մը եւ թէ անտարբեր են զիրենք շրջապատող ժողովուրդներուն յառաջգիմութեանց , կը բաւէ որ կարգան այդ ազնիւ գրուածքին հետեւեալ կտորները :

« . . . Հասաւ , հասաւ այն ազատաբեր ժամանակ . քեզ աւետիս կուտամ , ժողովուրդ , լուսով լեզուդ եւ փակուած բերանդ բա՛ց այտուհետեւ , խօսի՛ր եւ գրե՛ որչափ սահմանադիր Օրէնք քեզ ազատութիւն կուտայ . խօսի՛ր երբ կը գրկուիս , խօսի՛ր դասաւորաց առաջ երբ ապերախս ձեռք գեղ կ'ապսակեն . խօսի՛ր եւ իրաւունք խնդրե՛ :

« . . . Ո՛վ բարեգուշակ ժամանակ , դու բարի եկիր մեր աշխարհ . քեզ կ'ակնկալեիր եւ կը սպասէր Թուրքասանի հիմաւուրց Մայր՝ որ ամուլ էր եւ հրաւելի դացաւ . ցաւ երկունք կալաւ զինքն իբրեւ ծննդականի . երկնեց երկնեց եւ այսօր ծնաւ մեզ համար մի նոր մանուկ՝ Սահմանադրութիւն : Յնծացե՛ք , ստրուկ ժողովուրդ , ցնծացե՛ք եւ ողջունեցե՛ք այս նորածին մանուկ եւ միանգամայն աղօթեցե՛ք որ կայսաւ մնայ , ապրի , զօրանայ եւ զարգանայ ի կասարեալ հասակ :

« . . . Ո՛վ դուք որ նորածին « Մանուկ Սահմանադրութեան » իբրեւ իմաստուն դայեակ կը հանդիսանայ աշխարհի առաջ , աւագ աչքով հրկեցե՛ք այդ մանկան վրայ , պինդ բռնեցե՛ք եւ զուրգուրալով պասսպարեցե՛ք զինքն . . . : Եւ գիտե՛ք ու կը տեսնե՛ք քաջ որ քե՛ օտար եւ քե՛ նոյն խկ մեր աշխարհին մէջ դորա բեւաբնեւեր շատ կան , որ կը օրջին ամենուրեք : Գուցէ դարան գործեն տգէտ ու խաւարագնաց մարդիկ , անտեսանելի մըքութեան մէջ գողնան այդ մեր սիրական մանուկ եւ կամ անդէն իւր խանձարուրին մէջ ննջելով ու նեղելով խեղդեն : Եւ ի՛նչ կը լինի յայնժամ , գիտե՛ք դո՛ւք , ո՛ն , յետինն չար քան զառաջինն :

« Տեսնեցե՛ք ուրեմն , տեսնե՛ք , որպէս անուրապահապան , հզօր կամեով զինուեցե՛ք ամեն դարաւազործ բեւաբնեաց դեմ , շուրջանակի պատե՛ք փակելով՝ մանուկ Սահմանադրութիւն ընդ մէջ առնելով ողջ պահեցե՛ք որ երբայով անի ու զօրանայ , իւր օրէնքով տրե՛ք եւ ուղիք Թուրքասանի աշխարհավարութեան ուղիք :

« Ահաւասիկ այս զարգացած մանուկն է որ Եւրոպայոյ քաղաքակրթութիւն կը ներմուծէ մեր հին աշխարհ . հին ժողովուրդ նոր օրէնքով կը վերանորոգի . . .

« Շատ անգամ մնացինք , ափսո՛ս . խելամտե՛քն այտուհետեւ . հին աշխարհի ժամանակն իւր օրէնքովն անցաւ , նոր ժամանակ նոր օրէնք կուտայ մեզ , զի նոր մարդիկ նոր օրէնք կը խնդրեն . հին դարերու նախապատարմունք այլ եւս ծնուցաւ ու զառամեցաւ , պէտք է մեռնի եւ աշխարհին բարձուի իւր յիշատակ , որ՝ եղծեց ու ապականեց արեւելեան մեր կայսաւ աշխարհ : Այտուհետեւ մեր փրկութիւն , մեր կեանք եւ մեր շահն այն է միակ որ ընդունինք արեւմտեան ազգաց լոյսն , օրէնք եւ քաղաքակրթութիւն եւ այն ամեն յառաջացանք քան զմեզ , եւ ձեք յեսս մնալով , ո՛ն կը քափառինք այսպէս խոտորեալ եւ մոլորեալ անհետ ու անել բաւիղներու մէջ : »

Սրիմեանի արտայայտած այս խանդավառութիւնը՝ բոլոր Հայերուն զգացումն էր , Անոնք կը կարծէին թէ սահմանադրական բեծիմը Պետութիւնը ճշմարտապէս պիտի կերպարանափոխէր , լրջօրէն պիտի իրականացնէր մահմտական եւ քրիստոնեայ հպատակներու օրէնքի

առջեւ հաւասարութիւնը . մեծարժէք Հայ մը , Գրիգոր Օտեան , արդէն խորհրդակցանն ու աշխատակիցը եղած էր օսմանեան սահմանադրութեան հայր Մխտար փաշային : Բայց այդ յոյսերը չուսով ցնդեցան : Երիմեանի պերճախօս դիմառնութիւնը ի զուր մսխուած քնարերգութիւն էր : 1877ի սահմանադրութիւնը , զայն շնորհող Սուլթան Համիտին մտքին մէջ , ուրիշ բան չեղաւ բայց եթէ խաղ մը՝ պուլկարական հարցը խեղդելու համար . յայտնի է թէ ի՛նչպէս , եւ ի՛նչ դիւրութեամբ , ջնջուեցաւ ան՝ Պերլինի Վեհաժողովէն յետոյ՝ այն ձեռքէն իսկ որ զայն շնորհած էր . բայց իր հապճեպ մահուանէն ալ առաջ , այդ շատ կարճատեւ սահմանադրական բեթիմը երեւան հանեց թէ Պետութեան մահմտականները դեռ ո՛ր աստիճան անպատրաստ էին իրենց ու բայաներուն միջեւ իրական հաւասարութիւն ընդունելու . Երիմեան իրաւունք ունեցած էր իր ուրախութեան թռիչներուն մէջ տարակոյսի եւ մտահոգութեան քանի մը հարցանշան դնելու . նոր բեթիմին հաստատումը հռչակող Ֆէրմանին արձակումէն քիչ յետոյ , Վանայ Թուրքերը Հայոց չուկային վրայ յարձակեցան , թալլեցին ու կրակի տուին զայն , բոլորովին մնանկացնելու համար քաղաքին հայ ազգաբնակչութիւնը : Ատի դորձադրութիւնն էր Պոլսոյ մէջ կազմուած ծրագրի մը . այդ դէպքէն առաջ մայրաքաղաքին Թուրք լրագրիներէն մին բացէ ի բաց յայտարարած էր թէ Թուրքիա կարող էր իր բոլոր ուժը Պալքաններու կողմը կեդրոնացնել , քանի որ Հայերը ո՛ր եւ է վտանգ չէին ներկայացնէր՝ բաց ի Վանայ քաղաքէն , ուր հարկաւոր էր զսպել կասկածելի տարրերը . « զսպումը » կատարուեցաւ հրդեհուժով ու թալանուժով խաղաղ ազգաբնակչութեան մը որ ոչ մէկ ապստամբական կամէութիւն ցոյց տուած էր :

Խորապէս յուզուած այդ աղէտքէն որ կը հարուածէր իր ծննդավայր քաղաքը . Երիմեան հրատարակեց գրքոյկ մը՝ Վանզուժ տիաղոսով , արձակ քերթուած՝ աստուածաշնչական ոճով , ուր կը նկարագրէր այդ եղեռնական հրդեհէն յետոյ եկած ահաւոր թշուառութիւնը եւ չարագործները կը խարանէր .

« . . . Պատահար քո՛ երկնից պատահար չէր ,

այլ նոյն իսկ քո երկրէն եւ քո մեջէն . հին դրացի քաղաքացիներդ դաւեցին զեզ . նոքա որ եեզ հետ կ'ուսէին հայրենի սեղանէն , նոքա՛ որ քո ճակատին քրտանց վաստակով լիապէս կը յագեցային , ո՛հ անխնայաբար ոսնակոխեցին բարեկից հացի սեղանդ .

« . . . Միքէ նա որ յափեսայեց ընկերին հաց , նա հա՛ւ՛ս պիտի ուսէ : Ո՛չ , ո՛չ . զրկանաց ու յափրեսակութեան հաց առաւօտէն մինչեւ իրիկուն չի տեսեր , շուտով կը սպառի . զի այն հացն է միայն արդար ու անսպառ՝ որ մարդոց ճակատին քրտանց արդար վաստակն է . . . :

« . . . Ի՞նչ խորհրդաւոր օր եր հրապուճութեանդ օր , ո՛վ անբախտ վան . միքէ այն օր եեզ համար սեւ օ՛ր եր , երբ Թուրքասանի պայծառ օր կ'սկսէր , երբ Բիւզանդիոնի Վուփորէն հրանօքներ կ'որոնային , եւ Օսմանեան միապետ ինքնակալ Վայսր սահմանադրութիւն կը կնկէր . այն ուրախ օրերով , ո՛հ , մոլեգնութեան հուրն զեզ յափեց , ծովսով ու մոխրով խեղդեց քո խնդութեան ձայն ու շունչ :

« . . . Թուրքասանի վերանորոգ սահմանադրութեան տօնին անշուտ զոն մը պէտք էր , եւ այն փառաւոր զոն դու մատուցիր , ժողովո՛ւրդ Հայոց : . . .

Ռուս-թուրք պատերազմը պայթեցաւ . ոռու բանակները խոյացան՝ մէկ կողմէ՝ Պալքաններուն մէջ՝ Պուլկարներն ազատելու համար , միւս կողմէ՝ թրքական Հայաստանի մէջ , ուր կը տիրէին սրատեմականօրէն կազմակերպուած թալանն ու հրդեհը : Պնտերազմը իր գեղամոյն սաստկութեանը հասուց մահմտականներու կատաղութիւնը Հայաստանի քրիստոնէից դէմ . թրքական իշխանութեանց հրամանով , Բիւրտերը , որպէս թէ երկիրը Ռուսերուն դէմ պաշտպանելու համար , հայ քաղաքներուն ու գիւղերուն վրայ թափեցան , հսկարաւոր անդէն մարդիկ կոտորեցին , կիներ բռնաբարեցին ու կոշկոճեցին , ամբողջ գիւղեր այրեցին՝ բովանդակ Վասպուրականի նահանգին , Բասենի եւ Բազրեւանդայ գաւառներուն եւ Մշոյ գաղտին մէջ :

Երիմեան այդ միջոցին հրատարակեց երկ-

րորդ գրքոյկ մը Հայգում տիտղոսով , ուր կա-
ռավարութիւնը կ'ամբաստանէր իբր դրդիչ այդ
գազանական վայրագութեանց .

« Մարախի ու քրքուրի նման քափեցան .
Հայոց գիւղեր եւ դաշեր ծածկեցին , մի խուն
ժամանակի մէջ աւեն կանանչութիւն կերան ու
չորչուցին , այն շնն շէն գեղեր եւ աւաններ անա-
պատ դարձուցին :

« Եւ ո՞յք էին Բիւրսերու անկարգ հրոսակներու
վարիչ եւ առաջնորդ . — Ընցաւ մողեկոն դեմպե-
ներն էին , որոնց ոգիներն ի բնէ անսի ոխութեամբ
լցուած կը գայրանային Հայոց ժողովուրդին դէմ .
մանաւանդ երբ կը լսէին եւ կը հաւատային իսկ քե
այս պատերազմ յսնուն Բիւրսոնեից ազատութեան
կը մղէ հիւսիսային Պետութիւն :

« . . . Այո՛ , դեմպեներու կրօնամոլութեան
հուր կը վառէր գիւրեմ . այլ ի՞նչ հուր եր այն
որ ի ներուստ գրեմպեներ կը վառէր :

« Ո՛հ , մի կրկեսեր այդ հուրը , գրի՛չ իմ , գրի՛չ
իմ . էր բորբոխի եւ զեպ կ'այրէ . բող այրէ , բող
այրէ , եւ անիւնս երբայ խառնուի Հայոց այրած
ժողովուրդի անիւնին հետ : »

1878ին , ոռու բանակին յաղթանակէն յե-
տոյ , Ներսէս Պատրիարքը Սան-Սթեֆանօ գնաց՝
Ռուսաց բանակետղը՝ խնդրել Մեծ զուքս Նի-
քոլայէն որ հայկական դոնգոտիքը նկատողու-
թեան առնէ խմբագրուելու վրայ եզոզ գաշնա-
գրին մէջ :

Թուրք կառավարութեան ապուշ ընթացքն
էր որ Հայերը կը ստիպէր այս խիզախ բայց
բացարձակապէս անհրաժեշտ դարձած դիմումն
ընելու : Հակառակ այն տխուր պայմաններուն
ուր թուրք բեժիմը կը պահէր Հայերը թրքա-
կան Հայաստանի մէջ , ասոնք համոզուած էին
որ , իրենց ազգային գոյութիւնը պահպանելու
համար , նախընտրելի էր կապուած մնալ Թուր-
քիոյ հետ քան թէ անցնիլ տիրապետութեանը
տակ Ռուսիոյ , որուն սիստեմական ոռուսաց-
ման ծրագիրները իրենց մտահոգութիւն կը
պատճառէին : Ներսէս Պատրիարքը եւ նոյն ին-
քըն Խրիմեան այս համոզումն ունէին : Բայց

այն կոյր յամառութիւնը որով Թուրք կառու-
վարութիւնը կը թողուր զգուելի կեղեքման
մը շարունակուելն Հայաստանի մէջ՝ ճարա-
հատութեան մղեց Հայերը , որ զայրացած էին
տեսնելով Պետութեան ամենէն աշխատասէր ,
ամենէն անձնուէր ու խաղաղ տարրը՝ վայրագ
պաշտօնատարներու եւ աւագակութեամբ ապ-
րող ու աուրք վճարել չուզող Բիւրսերու քրիս-
տոնային ձգուած : Սահմանադրութիւնը , որմէ
պահ մը յուսացած էին փրկութիւնը , դառնա-
պէս յուսախար ըրած էր զիրենք , ուրիշ բան
չէր տուած իրենց բայց եթէ հրդեհն ի վան եւ
Չարդերն ամբողջ Հայաստանի մէջ . Պոլսոյ ճոր-
հըրդարանին մէջ , որ մը , հայ երեսփոխան մը ,
Պ. Պալլարեան , հայկական խնդրոյն վրայ խո-
սելով , յիշեց մէկ բառը էրզրումի վայրին ,
որուն հարցուցեր էր թէ ինչո՞ւ Թուրք կառու-
վարութիւնը թոյլ կուտար որ Բիւրսոյ յեղուզակ-
ներ Հայոց պէս ոգտակար տարր մը ջախջախէին
եւ որ պատասխաններ էր թէ ատիկա Հիֆնէքի
հիւսիսեմք (կառավարական գաղտնիք) մըն էր .
բոլոր Թուրք նախարարները , որ ներկայ էին
այդ նստին , լսեցին վայրին այդ շնական բառը
եւ նշանակալից լռութիւն մը պահեցին (1) :

Անհրաժեշտ էր լուծել այդ անհանդուրժելի
« կառավարական գաղտնիք »ը , վերջ գնել իրե-
րու վիճակի մը որ ամենէն անսանձ կամայա-
կանութեան ու անարդարութեան վրայ էր հաս-
տատուած . անհրաժեշտ էր ազատիլ այդ « ըս-
տորուկ »ի կացութիւնէն զոր Թուրք բեժիմը կը
սարտադրէր բայաներուն . Հայերը զիմացին
ուրեմն Եւրոպային զոր կը ներկայացնէր Ռու-
սիոն : Ճշմարիտ է որ նոյն իսկ այդ դիմումին
մէջ , Թուրքիայէն բաժնուել չէ որ կը պահան-
ջէին , լուրջ պաշտպանութիւն մը միայն կը պա-
հանջէին իրենց անձնունմսելի իրաւանց , պաշտ-
պանութիւն զոր Թուրք կառավարութիւնը կը
մերժէր իրենց շնորհել եւ զոր այլ եւս Եւրոպա-
յէն միւսին կրնային յուսար Ներսէս Պատրիարքը
յաջողեցաւ ստանալ Սան-Սթեֆանօի դաշնագ-
րին 16րդ յօդուածը , որու շնորհիւ հայկական
հարցը միջազգային հարց մը կը դառնար : Բիչ
յետոյ , Խրիմեան Ներսէս Պատրիարքէն պաշտօն

(1) Միմաս Չերազ , յ'Արմենի , սեպտ. 1894 .

ստացաւ երթալ, Երբէն Նար. Գեյ արքեպիսկոպոսին հետ, հայկական դատը ներկայացնել Պերլինի Վեհաժողովին. Պերլին երթալէ առաջ, Երկու արքեպիսկոպոսները, Խրիմեան՝ ընկերակցութեամբ Պ. Չերազի, այցելեցին Եւրոպայի մայրաքաղաքները՝ Պետութեանց նախարարներուն պարզելու համար հայկական հարցին իսկութիւնը եւ անոնց աջակցութիւնը խնդրելու անոր լուծմանը : Պատգամաւորութիւնը կ'ուզէր վարչական ինքնավարութիւն մը՝ Պետութեանց վերահսկողութեան տակ, Լիբանանու մէջ հաստատուած բեժիմին նման բան մը. ան ստացաւ 61րդ յօդուածը, որով Բ. Դուռը յանձն կ'առնէր « հայաքնակ նահանգներուն մէջ անյապաղ մտցնել տեղական պէտքերուն պահանջած բարւոքումներն ու բարենորոգումները եւ Հայոց գոյութեան ապահովութիւնը երաշխաւորել Չէրքեզներու եւ Քիւրտերու դէմ », եւ պետութիւնները յանձն կ'առնէին « այդ բարենորոգումներուն գործադրութեան վրայ հսկել » :

Թուրքերուն տարրական շահը կը պահանջէր ուղղամտօրէն գործադրել այդ յօդուածը, ամէն պատրուակ ջնջելու համար Հայաստանի կողմէն ուսական նոր յարձակման մը : Թուրք կառավարութիւնը ճիշդ հախուակն ըրաւ իր հանդիսաւորապէս Եւրոպայի խոստացածին. փոխանակ Քիւրտերը զսպելու պաշտօնապէս զինեց զանոնք՝ համբաւաւ որ « Համիտիյէ հեծելագունդերը » կազմելով, քաջալերեց զանոնք կեղեքելու, տկարացնելու եւ կամաց կամաց ջնջելու հայ տարրը : Եւրոպան անշարժ մնաց, գրեթէ բացարձակ անտարբերութեամբ մը :

* .

1879ին Խրիմեան դարձաւ Վան : Խորապէս տխրած էր այն վտիտ արդիւնքէն զոր տուած էր Պերլինի Վեհաժողովը : Իր հայրենակիցներուն որ իրմէ կը խնդրէին միջոց մը ցոյց տալ դարմանելու կացութիւն մը որ եւս քան զեւս անտանելի կը դառնար, կը կրկնէր ինչ որ Պերլինի Վեհաժողովին լիազօրներէն մին հայ պատգամաւորներուն ըսած էր մասնաւոր տեսակցութեան մը մէջ. « Երբ Քիւրտերը Հայոց վրայ կը յարձակին, ասոնք ուրիշ բան չունին ընելու

բայց եթէ զէնքով պատասխանել : » Թուրք կառավարութիւնը յետոյ ամբաստանեց Խրիմեանը իբր դրդիչ հայ յեղափոխական շարժման, ան ուրիշ բան չէր ըրած բայց եթէ քարոզել իր հայրենակիցներուն, որոնց կեանքն, ինչքերն ու պատիւը զազիր աւազակներու ձեռքը մատնուած էին, օրինաւոր ինքնապաշտպանութեան տիեզերականօրէն յարգուած սկզբունքը :

Իր հակահայ քաղաքականութեան համար վտանգաւոր նկատելով Խրիմեանի ներկայութիւնը Հայաստանի մէջ, Թուրք կառավարութիւնը զայն Պոլիս բերել տուաւ 1885ին : Այդ թուականին, յեղափոխական խմորում մը կը սկսէր արդէն յայտնուիլ քանի մը խմբակներու մէջ՝ դեռ շատ սակաւաթիւ՝ երիտասարդ Հայերու, որ քոմիթէներ կը կազմէին եւ բուն միջոցներով գործունէութեան կը ձեռնարկէին՝ Եւրոպայի ուշադրութիւնը հայկական խնդրոյն վրայ հրաւիրելու եւ 61րդ յօդուածին գործադրութիւնը ստանալու նպատակով :

1890ին, Էրզրումի խռովութեանց եւ Քում-Քափուի ցոյցին հետեւանքով, Խրիմեան Բ. Դոնէն հրաւիրուեցաւ երթալ երկարատեւ ուխտագնացութիւն մը ընել Երուսաղէմ : Դիմակաւորեալ աքսոր մըն էր :

* * *

1892ին, Խրիմեան՝ քուէներու միաձայնութեամբ՝ ամենայն Հայոց կաթողիկոս ընտրուեցաւ : Թուրք կառավարութիւնը սրտնեղեցաւ այդ ընտրութենէն, զոր նկատեց իբր ապրտամբական ցոյց մը, եւ մրմուալով հաւանութիւն տուաւ Խրիմեանի մեկնումին : Այս վերջինը իմաստուն ու բարեշնորհ ընթացքով մը, Սուլթանէն ունկնդրութիւն խնդրեց՝ էջմիածին երթալու համար Թուրքիայէն բաժնուելէ առաջ : Սուլթանը մերժեց զայն ընդունիլ :

Կովկասի Հայերը յաղթական ընդունելութիւն մը ըրին Խրիմեանին : Շատոնց ի վեր, հայ ժողովուրդը անոր տուած էր « Հայոց հայրիկ » տիտղոսը : Իբր ճշմարիտ հայր ազգին՝ բարձրացաւ Գրիգոր Լուսաւորչի աթոռը :

* .

Իր հայրապետութեան չըջանող Հայոց պատմութեան ամենէն յուզեալ, ամենէն ողորդական վայրկեաններէն մէկը եղաւ :

Ռուս կառավարութիւնը, Աղեքսանդր Բ-ի մահէն ի վեր՝ յետադիմական ու հեռալից քաղաքականութեան մը մէջ մոլորած, սկսած էր Հայոց նկատմամբ բռնել որոշապէս թշնամական դիրք մը . քիչ յետոյ, Անդրկովկասի բոլոր հայ գաղթողները փակել տուաւ . Կալիցին իշխանը, Կովկասի ընդհանուր կուսակալ, իբր միակ պաշտօն ունենալ կը թուէր ջախջախումը Հայ տարրին :

Թրքական Հայաստանի մէջ, սիստեմական նօրէն կազմակերպուած հալածանքները կրթալով կը բազմապատկուէին :

Հայ յեղափոխական շարժումը՝ իր կողմէն՝ հետզհետէ կը սաստկանար :

Մուսա-պէյի դատը, որ մեծ աղմուկ հանեց, արդէն կրակը տուած էր վառօդին : Այդ քերտ առազակապետը իր սնունդը նշանաւոր էր դարձուցած՝ այն բազմաթիւ ու անուղի ոճերներովը զոր գործած էր Հայաստանի մէջ . Հայերը զայն դասի քաջեցին Պոլիս, անոր պատժուիլը պահանջելով . Թուրք գատարանը, հակառակ անթիւ ու ակնյայտնի փաստերու որ յերկզակին յանցաւորութիւնը կը հաստատէին՝ անպարտ արձակեց զայն . ոչ մէկ թրքական բողոք բարձրացաւ, նոյն իսկ ազատական ընտիր դասին կարգերէն . Խորոպական դեսպանատուններն են, որ, այդ ծայրայեղ անարգարութենէն զգուած, պահանջեցին եւ ստացան ոճրագործին պատժուիլը . իրաւ է որ իր պատիժը ուրիշ բան չեղաւ բայց եթէ խարդախուած ու հանգստաւէտ աքսոր մը : Այսքան հրէշային անիրաւութիւն մը՝ միայն խրախուսել ու արգարացընել կարող էր գործունէութիւնը յեղափոխական քումբէներուն, որոնց ուժն ու ազդեցութիւնը հետզհետէ շատցաւ : Եթէ քանի մը սահմանափակ տարրեր՝ այդ գաղտնի ընկերութեանց մէջ՝ կը ձգտէին երբեմն գեղեցիկ երազներու վրայ հիմնուած ծրագիրներու, կռուող խումբերուն մեծամասնութիւնը տրամաբանական ու բանաւոր պահանջմանց գերազանցապէս գործնական հողի մը վրայ կը մնար : 1893ին, Մարզուանի քումբէնէն կ'արձակէր թրքերէն լեզուով մանիֆէսթ մը՝ ուղղելով մահմետականներուն

կողմը որ հայ պայքարողներուն մեծամասնութեան ճշմարիտ զգացումները կ'արտայայտէր :

« Դուք մէր թշնամիներն էք դարձած, կ'ըսէր այդ մանիֆէսթը Թուրքերուն, որովհետեւ կը կարծէք թէ հայկական յեղափոխութիւնը մահմետականութեան դէմ է ուղղուած : . . . Դուք ձեզ զոհերը կը դարձնէք կառավարութեան մը որ բաղկացած է փայտայելով յօշոտող անարգ պաշտօնեաներէ, եւ հաւատարի՛մ կը մնաք այդպիսի կառավարութեան մը : Մենք գոյ ու լափող պաշտօնեաներուն դէմ ենք եւ ոչ թէ մահմետականներու կամ մահմետականութեան : Անհրաժեշտ է վերջ դնել այս անգութ պայմաններուն . առանց թուխալու պէտք է հիմն քանդել այդ փտտած ու սնանկացած կառավարութիւնը : Կրնանք մեր նպատակին հասնիլ եթէ ամենքս միացած ըլլանք հասարակաց թշնամունքն դէմ, մեզի նշանաբաճ ունենալով՝ « Արդարութիւն, օրէնք եւ իրաւունք, Մզկիթը մահմետականներուն եւ Եկեղեցին քրիստոնեաներուն : »

Այս կոչը լսելի չեղաւ . եւ որովհետեւ կառավարութեան կողմէ սարքուած հալածանքները օրէ օր կը շատնային, մահմետականներու եւ Հայերու միջեւ փորուած անդունդը երթալով կը լայնար : 1894ին, պայթեցաւ դէպքը Սասունի, որու քաջ լեռնականները պաշարուեցան, ծուղակը ձգուեցան եւ կոտորուեցան կանոնաւոր զօրքի եւ պաշարողներու քանի մը զօրագունդերէ՝ որովհետեւ փորձած էին զէնքով դիմադրել Գիւրտերու յարձակման մը : Հետեւանքովն այդ եղելութեան, որ անազին իրարանցում յառաջ բերաւ Եւրոպայի մէջ, մանաւանդ Անդլիա, հայկական հարցը պահ մը օրուան խնդիրը դարձաւ . Անդլիա, զգալով Հայոց հանդէպ իր մասնաւոր պատասխանատուութիւնը՝ Պերլինի Վեհաժողովին մէջ իր զիւանագիտութեան բռնած դիրքին պատճառով, ուժգնապէս ձեռք առաւ հայկական դատը, ու Եւրոպայի միւս տէրութիւնները հրաւիրեց իրեն միանալ՝ արդար լուծում մը տալու համար անոր : Բայց Լոպանօֆ, Հանօթօ եւ Վիլհելմ Բ. ընդդիմացան անգլիական ծրագրին լրագործման եւ թոյլ տուին « մեծ մարդասպան »ին որ գործադրէ ի'ր ծրագիրը, ծրագիր մահու եւ քանդման Նրեք հարիւր հազար անգէն ու խա-

ղաղ մարդկային արարածներ խողխողեցան Սուլթանին հրամանաւ . հրաման որ կ'էտ առ կէտ գործադրուեցաւ ոչ միայն Քիւրտերէն ու կանտնաւոր զինուորներէն , այլ եւ նոյն ինքն թուրք ժողովրդէն . գտնուեցան՝ անշուշտ՝ աղ- նիւ բացառութիւններ թուրքերուն մէջ . տես- նուեցան նոյն իսկ պաշտօնատարներ եւ իւրէ- մաներ որ իրենց զիրքը վտանգեցին անպատ- հրամանին գործադրութեանը ընդդիմանալով կամ ջարդողներէն հալածուած Հայեր ազատե- լով . անոնց կը յայտնենք ամբողջ յարգանքը որուն արժանի են . Բայց ատոնք լոկ բացառու- թիւններ էին . թուրք ժողովրդին ստուար մե- ծամանութիւնը (մանաւանդ գաւառներուն մէջ) , նշանակուած զոհերուն վրայ խուժեց , թալա- նէն օգտուեցաւ , ձեռքերը անմեղ արիւնին մէջ թաթխեց . անսնուեցան թուրքեր որ խողխողե- ցին իրենց զրացիները , իրենց մանկութեան բարեկամները՝ որ իրենց տունը ապաստանած էին : Ուրֆայի մէջ , ուր ոչ մէկ յեղափոխական գոյութիւն ունէր , թուրքերը յարձակեցան Հայոց թաղին վրայ , կողոպտեցին ու ջարդե- ցին բոլորովին խաղաղ ազգաբնակիչութիւն մը եւ վերջ ի վերջոյ կրակ տուին եկեղեցւոյն ուր ապաստանած էին երեք հազար հոգի , այր , կին ու մանուկ , որոնք հոն գտան մահ մը զարհու- րելի : Թուրք ցեղն ա՛յսպէս կը վարձատրէր Հա- յերը՝ այն ամենակարեւոր ծառայութեանց հա- մար զոր անոնք մատուցած էին իրեն՝ ոչ միայն այն ամէն բանով որ ըրած էին ամբողջ Տաճ- կաստանի մէջ երկրագործութիւնը , ճարտար- արուեստը , արուեստները զարգացնելու համար , այլ եւ եւրոպական քաղաքակրթութիւնը թուրք աշխարհին մէջ մտցնելու համար իրենց թափած անձնուէր ջանքերով (1) :

Արիւնի եւ աւերի այս ամբողջ շրջանին

(1) Հայերը թուրքերու մէջ մտցուցին եւրոպական ծառայող եւ տպագրութիւնը . նպաստեցին Թրքական լրա- գրութեան մը կազմութեանը . փորձեցին անոնց մէջ տա- րածել մեթոդայ ձգտումները , բննադատական զգացումը . յորմէնեւ Թրքական համալսարաններ կան Պոլիս , մեծ մասամբ Հայեր են որ այնտեղ ուսուցած են ֆրանսերէն լեզուն ու գրականութիւնը , մանկամտիքական եւ ֆիզիքա- կան գիտութիւնները , քաղաքական տնտեսագիտութիւնը , եւն : Թամանեան Սահմանադրութիւնը իբր հայր ունի այնքան Հայազգի ժողովուրդը որքան թուրք Միտհամը : Նոյն

մէջ , իրիմեան տառապեցաւ , գործուց եւ մաքա- տեցաւ իր ժողովրդին հետ :

Քաջալերելէ յետոյ թուրքերը որ Հայերը ջախջախին Օսմանեան Հայաստանին մէջ , ոուս կառավարութիւնը՝ շատ չանցած՝ թուեցաւ՝ իր հողին վրայ իսկ՝ մրցիլ թուրք դահիճներուն հետ . ծայրագոյն սահմաններուն հասուց սիւ- տեմական հալածանքը զոր սկսած էր կովկասի Հայոց դէմ . անոնց կրթական ու մարդասիրա- կան ընկերութիւնները լուծեց , անոնց լրագիր- ներէն շատերը ջնջեց , շատ մը անձեր աքսորեց , վերջ ի վերջոյ Հայ եկեղեցիէն խլեց իր ինչքե- րու վարչութեան իրաւունքը եւ զբաւեց ամէն ինչ որ ունէր ան :

Իրիմեան բողոքեց այդ կապտիչ արարքին դէմ , եւ երբէք չհաւանեցաւ , հակառակ կառա- վարութեան բոլոր ճնշումին , այդ անարդար որոշումը իր ստորագրութեամբ վաւերացնելու : Կովկասի Հայերը իրենց իրաւունքները պաշտ- պանեցին բուն կորովով : Միահաղոյն ոտքի կանգնեցան դիմադրելու համար այդ բիրտ աւա- րածման փորձերուն , բռնաւորական կամայա- կանութեան , քստմնելի կեղեքման այդ ամբողջ սիստեմին : Կառավարութիւնը վերջ ի վերջոյ մո- լեզնած թաթարներն արձակեց Հայոց դէմ : Թիմուրիկի յաջորդները կովկասի մէջ վե- րարտադրեցին , բոլոր այն տեղերը ուր մեծա- մասնութիւն կը կաղմէին , անտելի վայրագու- թիւնները որոնց սովոր են դարերէ ի վեր :

Մոայլ օրեր եղան ատոնք վեհաշուք ծե- բունւոյն համար , որ ինքզինքն իր ժողովրդին հետ խաչուած կը դգար : Եւ սակայն չկորսնցուց ո՛չ քաջութիւնը մաքառելու , ո՛չ արդարութեան

իսկ կովկասի մէջ՝ միևնոյն դերը խաղացած են . այն ծա- մանակ երբ դեռ կովկասի թուրքերը կամ թաթարները ոչ մէկ գրական շարժում չունէին , Արժրունին էր , հայ մեծ հրապարակագիրը . որ իր Մեակին մէջ զանոնք հրաւիրեց լրագիրներ հիմնել ու մամուլի միջոցով ազատական եւրո- պայի ձգտումները տարածել մահմետական զանգուածներուն մէջ : Իր հրաւէրին վրայ է որ լոյս տեսաւ կովկասի առա- չին Թրքերէն լրագիրը , բայց որ դժբաղդաբար իր հիմ- նուած օրէն իսկ՝ մոլեռանդօրէն մահմետական ձգտումներէ ներշնչուեցաւ :

վերջնական յաղթանակին վրայ հաւատքը : Եւրոպայի Հայերուն , որ իր ծննդեան 85րդ տարեդարձին առթիւ , իրեն նուիրած էին իր կիսանդրին Պ. Տէր-Մարութեանէ քանդակուած , հետեւեալ խօսքերով կը պատասխանէր . « . . . Այլ սակայն ըստ Դաւթի եւ համբերելով համբերի Տեառն եւ համբերից մինչեւ հայեցէ յիսի վշտացեալս եւ ողորմեսցի Ինձ ըստ մեծի ողորմութեան իւրում , զի հաւասամ թողորով սրտիւ զի ոչ ի սպառ անտես առնէ Տէր զազգն մեր եւ զհայրենի աշխարհն : Յոյսն ապագայ պայծառ եւ փառաւոր աւուրցն մխիթարէ զիս տակաւին եւ Ես կամ մնամ իբրեւ զծնունդն այն տաճարին որ ակնկալէր Երկնային լուսոյն մեծաւ անձկանօք , որ ետես եւ ընկալաւ ի գիրկսն իւր եւ գո՛հ սրտիւ օրհնեաց զԱստուած ասելով՝ « Արդ արձակեա զժառայս քո , Տէ՛ր , ի խաղաղութիւն : »

Չարը հուսկ ուրեմն դարմանեց գործուած սխալը , Հայ Եկեղեցիին դարձնելով իր ինքնավարութիւնը , հրամայելով Հայոց դպրոցներու վերաբացումը եւ լուծուած ընկերութեանց վերահաստատումը :

Այն պահուն ուր ոռւս բանակները Մանչուրիոյ մէջ պարտութիւն պարտութեան վրայ կը կրէին , Ս. Փէթէրսպոլի կարգ ու կրօնամու չբանակներու մէջ զրոյց մը պարտեցաւ , որ այդ ձախողումները կը վերագրէր անէժքին զոր Հայոց Հայրապետը որպէս թէ արձակած ըլլար Չարին դէմ՝ ոռւս պաշտօնատարներու ձեռքով էջմիածնայ գանձարանին կողոպտման միջոցին : Չարը ինքն իսկ ալգուած ըլլալու է այդ զրոյցէն , քարի որ մէկէ աւելի անգամներ կաթողիկոսին դիմեց՝ անոր աղօթքը խնդրելու համար ի նպաստ ոռւս բանակին Այս պատմութիւնը ապահովապէս գերագրգռուած միտքական երեւակայութիւններու հնարք մըն էր . Երբմեան , ճշմարիտ աչակերտ մը Քրիստոսի , չի գիտեր անիժեյ . թերեւս խնդրած է Աստուծմէ որ ազատէ Ռուսիան այն Չարի զօրութիւններէն որ զայն կը խեղդէին իրենց ծանր աղջամուղջներուն տակ : Այդ բաղձանքը . զոր շատ հաւանականաբար յայտնած է իր սրտին խորէն ,

իրականանալու վրայ է՝ շնորհիւ ազատագրութեան սքանչելի ճիգին զոր կը կատարէ ոռւս ժողովուրդը : Ռուսիան ազատութեան ու յառաջդիմութեան մեծ երկրի մը փոխուելու մօտ է : Առաջին գործերէն մին այդ ազատական Ռուսիային , որուն յաղթանակը անտարակուսելի է՝ հակառակ այն քառսային վիճակին որ հոկտ. 30ի ձարական մանիֆէսթին յաջորդեց , պիտի ըլլայ՝ ապահովապէս՝ համաձայնիլ արեւմտեան Պետութեանց հետ , արդար ու վերջնական լուծում մը տալու համար հայկական հարցին : Կարելի է հաւատալ թէ իր աչքերը փակելէ առաջ , հայ Սիմէօնը ազատութեան եւ արդարութեան սաւառնիլը պիտի տեսնէ իր հայրենիքին սգաւոր լեռներուն վրայ : Այսպէս , այդ երկայն ու պատկառելի կեանքը հայ Առաքեալին , կեանք ծանր աշխատանքի , մեծ ցաւերու , ազնիւ երազներու եւ հրավառ հաւատքի , պիտի աւարտէր իրականացած արդարութեան դեղեցիկ վերջալոյսով մը :

Ա. ՉՕԳԱՆԵԱՆ



Յ Ե Ր Գ Ո Ւ Ա Ւ

Բ. ԴՐՈՒԱԳ

Կրուսոյ դաշտն աւարաւ ծածկած էր համակ , Ձէնք ու զարդ ու ոսկի արծաթ անքանակ : Հըրամայեց Արքայն , ժողվեցին բերին , Բաշխեց ապա զօրաց իւրաքանչիւրին : Աւագանուոյն մէջէն դուրս թրուաւ Տարակ , Սըրբեց Արտաւանայ արիւնոտ դիակ , Լըւաց , մաքրեց փոշին , կոծելով վըրան , Մի արքայավայել զըրաւ դամբարան : Մէջքի վէրքը պատեց ծածկեց դիպակաւ Գըլուխը զարդարեց քափուրէ թագաւ : Պատուիրեց զօրքերուն , ի Ռէյ գընացող , Որ ոչ մին ոտ դընէ արքունեաց ի հող :

Յետոյ Արտաշիրին մօտն եկաւ դարձեալ ,
 Ասաց — Ո՛վ թագաւոր դու խրրատընկալ ,
 Պայմայէ՛ դու անոր աղջիկն ա՛ն քեզի ,
 Նորա գահ ու թագ ու գեղ ու փառք է զի .
 Քեզ կը լինի թագն ու գանձըն անբաւ ան
 Ջոր ա՛յնչափ նեղութեամբ գիզեց Արտաւան :
 Արտաշիր ընդունեց այս խրրատը լաւ ,
 Մարդ ուղարկեց աղջիկն ուզեց ու առաւ :
 Հանդիստ ըրին ամսոյ մի չափ կամ երկու ,
 Հըզօր ըՍպարապետն ու սպայն անարկու :
 Ռէյէն ի Փարս անցաւ արքայն քաջարի ,
 Յոգնութիւն առաւ քիչ աղմուկէն հետի :
 Մի դաստակերտ հիմնեց ուր լի հաւասար
 Փայլէր պալատ, այգի, աղբեր, դաշտ ու սար ,
 Ջոր ազատըն Դեհկան , ծերունին այն ժիր ,
 Կը կոչէ Նորա նուամբ Խորրայ-Արտաշիր :
 Մի ջուր բըղխէր այնտեղ անոյշ անարատ ,
 Առաջներու բաժնեց , վազուց յորդառատ .
 Մի ատրուշան հիմնեց մօտ այն աղբեր հոն ,
 Նորոգեցաւ Սաղայ Մեհրակայ պաշտօն .
 Եւրջըն ալ այգեստան հրապարակ ու տուն ,
 Եինուածովք գեղեցիկ , ընդարձակ , սիրուն :
 Երբ աւարտեց արքայն պերճ , գիտուն , հըզօր ,
 Մարզպանը կոչեց զայն քաղաք՝ Ծահրի-զօր :
 Եւրջանակի գիւղեր հիմնեց չէն ու ճոխ ,
 Հաւաքեց բընակչաց մի յոյժ մեծ ամբոխ :
 Մի հատ ալ ջըրամբար նըշմարեց ի խոր ,
 Լեռը պէտք էր պատուել համեւելու անոր :
 Բահ , բըրիչ , գործաւոր թափեց անհամար .
 Հարիւր ջըրանց բացին լեռան կողն ի վար .
 Հասուցին Ծահրի-զօր ջուրերն ապահով ,
 Ենեցաւ իսկոյն տընով , տեղով , անամնով :
 Անթիւ գօրք ըՍտահրէն բերել տըւաւ կազմ ,
 Պատրաստեցաւ երթալ Բուրդի պատերազմ :
 Երբ մօտեցաւ անոր Արտաշիր արքայ ,
 Բուրդըն անթիւ գօրքով դէմն ելաւ որ գայ :
 Մի գործ էր սա չընչին եղաւ զըժուարին ,
 Ջի Բուրդի կողմն ելան մարդիկն աշխարհին :
 Կազմընեցաւ իսկոյն մի պարսիկ բանակ
 Բազմաթիւ քան ըզԲուրդ , միոյն երեսնակ ,
 Մինչ գիշեր , օր ամբողջ , մըղեցին կըռիւ ,
 Հուսկ ապա արքային գօրքն եկաւ ցըրիւ ,
 Դիտապատ ու չեկեալ ա՛յնքան էր ի տես ,
 Որ անագին դաշտին նեզ կուգար երես :
 Բաց ի թագաւորէն եւ մի քանի սպայ ,
 Ոչ ոք մընաց այնտեղ անուանի հըսկայ :

Փոշիէն ու տօթէն ջերմ արեգական
 Ցամքեցան լեզուներ ճայթ ի ճայթ եկան ,
 Երբ գիշերն պարգեց իւր զըրօշն ի յօդ ,
 Դադրեցուց ուզմ ու խազմ, աղմուկ ու չըփոթ :
 Մի խարոյկ նըշմարեց լեռնակողմի մերձ ,
 Փութապէս հոն դիմեց զըրոհիւ հանդերձ .
 Դէմ զըրաւ Արտաշիր դէպ ի այն խարոյկ
 Մի քանի ընկերով թէ՛ ծեր թէ՛ աւոյգ :
 Երբ մօտ եկաւ տեսաւ հովիւներ էին ,
 Որ այժ ու ոչխար անդ մակաղեր էին .
 Ցած իջան Արքայն ու ըՍպայ ձիերից ,
 Ռազմի դաշտի հողով բերան փոշելից :
 Արտաշիր ջուր ուզեց խըմիլու սակաւ ,
 Վազեցին բերին ջուր , մածուն ըշտապաւ :
 Հանգչեցաւ եւ մի քիչ կերաւ ինչ ո՛ր կար ,
 Մեաւ գիշերն ըզգեցաւ իր սըքեմ խաւար :
 Մահիճ արժանընտիր՝ փըռեց վերարկուն ,
 Բարձ ըրաւ սաղաւարտն արքայ իր զըլխուն :
 Այգը երբ անդընդոց վերայ կ'երևէր ,
 Իրանայ Ծահի գլուխ քընից կեցաւ վեր :
 Եկաւ սընարին մօտ զըլխաւորն հովուաց ,
 — « Չարը քեզմէ հեռու լինի միշտ , ասաց ,
 Ո՛րպիսի փորձանք քեզ բերաւ այս ուղին ,
 Որ վերարկուդ ըրիր դու քեզ անկողին : »
 Ծահ ճանապարհ հարցուց հովիւէն ընդ փոյթ ,
 Թէ ո՛ւր կըրնանք գտնել մի տեղի անքոյթ :
 Ասաց . — « Դու չես զըսնեիր աստ ապատ տեղի ,
 Թէ չառնես մի մարդ որ ցոյց տայ քեզ ուղի :
 Չորս փարսախ որ զընաս ճանապարհ աստի ,
 Կը գըտնես այնտեղ դու տեղի հանգըստի .
 Անկէց անդին գիւղեր կից են իրարու .
 Ամէն գիւղի մէջ կայ մի անձ մեծարաւ : »
 Երբ լըսեց Արտաշիր հովուէն այս խօսքեր ,
 Մի քանի ծեր առաւ իր հետ ու զընկեր .
 Լեռնէն իջաւ մի գիւղ Ծահն ըՍպահապետ ,
 Վազեց անոր առաջն իսկոյն գեհապետ :
 Ջիւաւոր ուղարկեց ծեր ու գեւովիրայ
 Անկէ շիտակ դէպ ի Արտաշիր-Յորայ :
 Չօրքը երբ առաւ լուր արքայէն այսպէս ,
 Ճամբայ ինկաւ ուրախ զըւարթ փութապէս .
 Լըրտեսներ ուղարկեց բանգէտ ու ատակ ,
 Որպէս զի գիտեն զազտ Բըբղերու վիճակ :
 Սուրացին լըրտեսներ , տեսան դարձան ետ ,
 Եւ եկան պատմեցին Ծահին կէտ առ կէտ :
 Ասացին թէ « Բուրդեր վառ, զըւարթ , անհող ,
 Ծահին վերայ բընաւ չըլխորհիր ոչ ոք :

Այնպէս կը կարծեն թէ ի Ստահր Արտաշեր ,
 Մաշեցաւ իւր առոյգ բախտէն եղաւ ծեր : »
 Ուրախացաւ արքայն երբ առաւ այս լիւր ,
 Ալ ուրիշ խօսքերու չը տըւաւ նա լուր :
 Ընարեց զօրաց մէջէն՝ կուսեալ բարդ ի բարդ ,
 Երեք հազար հեծեալ քաջ սուներամարտ .
 Աղեղնածիգ հազար եւ կապարճ ու նետ .
 Այս ամէնը համուս Շահն առաւ իւր հետ
 Երբ արեւ դեղնեցաւ՝ ոահ տըւաւ զօրաց ,
 Այն որ չը տարուելիք էր այնտեղ մընաց :
 Կէս գիշերն որ անցաւ , մութ պատեց երկիր ,
 Թըշնամուտն մօտ հասաւ Շահն աշխարհակիր .
 Տեսաւ դաշտի երես փրոռուած կան ի քուն ,
 Յոյզ ու խուճապ սրբտին մէջն է ամենուն :
 Երբ մօտեցաւ արքայն ի Գուրդին սընար ,
 Ձրգեց երասանակն օգաչուին՝ վար ,
 Մերկացուց իր սուսեր , մըտաւ ի բանակ ,
 Դալար խոտին զըրաւ պուխն արեան պրսակ :
 Բոլոր դաշտի երես գըլուխ ու ձեռք էր .
 Գուրդը ջարդ ու կոտոր գետինն էր ծածկեր .
 Ձրկար գերիններուն ա՛լ չափ ու քանակ .
 Յիմար գոռոզութիւնն եղաւ խայտառակ :
 Աւար առին նոցա տուն ու տեղ ու բուն ,
 Ոսկի ու թագ բաշխեց զօրաց ամենուն :
 Այնպէս եղաւ որ մի դենարով լի տաշտ ,
 Բարձած Կիլուխ մի ծեր թէ տանէր ի դաշտ ,
 Ոչ ոք կը դարձնէր աչք ի նորա դեհ ,
 Ա՛յնչափ էր Շահին ա՛ն ու օրուան նըսեհ :
 Ձուգեց փառք ըստանալ Շահ այն քաղաքէ ,
 Վերադարձաւ ի Ստահր անյապաղ անկէ .
 Հըրամայեց — « Ձիանն արէ՛ք կազմ ու վառ ,
 Տեսէ՛ք զէնքերու մէջ չը լինի խաթար ,
 Վայելեցէ՛ք հանգիստ՝ տօն ու խըրախճան ,
 Ձի չուտ պիտի դայ հոգ պատերազմական » :
 Կերուխուսի յայնժամ ըսկըսան քաջեր
 Եւ երբ բաւականի պընդեցան մէջեր ,
 Պատերազմի հոգին ինկաւ Արտաշիր ,
 Դու յաւ այս պատմութիւնն ի մի՛տ առ , ուսի՛ր .
 Լըսէ՛ զարմացիր ի՛նչ ասաց ինձ Դեհկան ,
 Երբ նա մերկացաւ ինձ գաղտնիս պատմութեան
 Գու՛ջարան քաղաքի , ծովեղեր Պարսից ,
 Թէ ի՛նչ ելեւէջ անդ երեւցաւ անցից :
 Մի քաղաք կար փոքրիկ ու շատ բազմամարդ ,
 Ուր մէն մի կ'աշխատէր ու կ'ապրէր հանդարտ :
 Այն քաղաքին մէջ շատ աղջիկ կար աղքատ ,
 Մի կըսոր չոր հացի համար բազմաշխատ :

Մէկ կողմէն շատ մօտիկ էր նոցա՝ լեռը ,
 Խուճք եղած կ'երթային հոն աղջիկները :
 Ամէն մէկը կ'առնէր մի չափով բամբակ
 Եւ մի հատ տօտախի փայտէ մանիլակ :
 Դարպաս որ հասնէին մի խուճք ձեւացած ,
 Ճեմեղով կուգային դէպ ի լերան ցած :
 Ուտելիքներն համայն խառնէին իրար ,
 Քանզի աւել պակաս տարբեր ինչ չը կար :
 Ուտելէ քընելէ չէր լիներ զըրոյց ,
 Իրենց բոլոր հոգն էր մանածներու ցոյց :
 Իրիկուն որ լինէր՝ կը դառնային տուն ,
 Բամբակը հիւս եկած երկայնատըտուն :
 Այն քաղաքին մէջ մի մարդ կար զըւարթ աղքատ ,
 Անուն կը կոչէին նըմա Հաւթուվատ :
 Ինչո՞ւ էին զըրեր այդ անուն նըմա .
 Քանզի եօթ ուստերաց հայր եղած էր նա :
 Մի հատ ալ պատուական զուսոր ունէր , իրաւ .
 Բայց նա աղջիկը մարդ չէր հաշուեր ընաւ :
 Եղաւ որ աղջիկներն համախուճք մի օր ,
 Իլերն առած նըստած էին սարի՝ ստոր :
 Ուտելու ժամն հասաւ , ձրգեցին իլեր ,
 Պատրաստել վեր կացին , ով ինչ որ ունէր :
 Բախտաւոր մեր աղջիկն յանկարճ մի խընձոր
 Տեսաւ ճամբու վերայ , քամին ձրգած նոր .
 Վազեց վերցուց գետնէն , կըրկին դարձաւ ետ ,
 Տե՛ս ի՛նչ զարմանալի դէպքեր այնուհետ :
 Երբ խածաւ խընձորը կոյսըն այն գեղայտ ,
 Մէջէն խոշոր գիրուկ մի որդ ձիւալ յայտ ,
 Մատկուլը մէկդի առաւ զայն կամաց ,
 Իլամանին մէջը զըրաւ թարմ ու թաց :
 Երբ որ անկէ բամբակ ուզեց որ առնէր՝
 Ասաց . — « Թանուն նորա որ չունի ընկեր ,
 Ես այս օրըս բախտովս այս խընձոր-որդի ,
 Գործի մէջ չըրաչքներ ցուցնեմ պիտի :
 Խընդացին աղջիկներն , ուրախ եղան շատ ,
 Բացուեցան այտերն ու ատամներն արծաթ :
 Ամէն օրուան կըրկին մանեց նա այն օր ,
 Նըշանակեց գետին համրանքը բոլոր :
 Թըռաւ ծուխի պէս տուն , մօրն ասաց թէ տե՛ս .
 Ո՛րչափ շատ մանեցի բամբակ այսօր ես :
 Միեկ գովեց շատ շատ մայրիկը զանի ,
 Ասաց — Բախտը բաց է , ո՛վ իմ գեղանի :
 Գիշերը համրեցին հիւսերըն ամբողջ ,
 Ատոտն ամէն օրուան կըրկինն առաւ ողջ .
 Երբ հասաւ նա իւր այն փութաջան խըմբին
 Որոց գործի հետ էր սիրտ , հոգի , մարմին ,

Ասաց բարեհամբաւ այն աղջիկներուն ,
 — « Ո՛վ իմ չըքնագագեղ ընկերներ սիրուն ,
 Որդի բախտով այսօր ա՛յնչափ մանեմ ես
 Որ այլ կարօտութեան չբռնեմ երես : »
 Վերջացուց տարածը անոնցմէ առաջ ,
 Թէ լինէր աւելի՛ կը մանէր նա քով :
 Տարաւ տուն մանածը տըւաւ մայրիկին .
 Դրախտագըւարձ խայտաց կրնկանը հոգին :
 Ամէն առտու մի քիչ խընձորիկ կուտար
 Իւր որդիկին՝ բարի աղջիկն հոգատար :
 Որչափ ալ շատ առնէր բամբակ ամէն օր ,
 Տակէն կ'ելլէր աղջիկն այն խորհրդաւոր :
 Հայր ու մայր ասացին մի օր միաբան ,
 Հընարագէտ , ճարպիկ այն բարի աղջկան
 Թէ դու որ ա՛յնչափ շատ կը գործես մանած ,
 Միթէ պարիկներո՞ւ դու քոյր ես եղած :
 Յայնժամ աղջիկը պարզ մարկացաւ իւր մօր
 Խընձորին ու որդին գաղտնիքը բոլոր .
 Յուցուց այն բախտարեւ որդիկն ի պահով .
 Աւելցաւ խընդութիւն մարդուն ու կընով :
 Բաստ համարեց իրեն այս բանը Հաֆթուատ
 Ալ իր գործին վերայ չէր իսկ խորհեր շատ .
 Որդի բախտէն էր միշտ խօսքը շարունակ ,
 Նոր փալ առին օրերն իւր անփառունակ :
 Մի ժամանակ այսպէս անցաւ , եւ մարդուն
 Օր քան զօր կ'աւելնար բարեբախտութիւն :
 Որդըն ալ չը մոռցան նոքա բընաւին ,
 Կեր կուտային ու միշտ հոգ կը տանէին :
 Խոշորցաւ անցաւ նորա մարմնոյ զանգ ,
 Փայլեցաւ գըլուխն ու քամակն երգիներանդ .
 Ալ այն իլի փոսիկ նեղ կուգար անոր ,
 Շապիկն ալ մուշկի պէս սեւացաւ բոլոր :
 Մուշկի տակէն քըրքում դեղին փայլ կուտար
 Նորա լանջն ու քամակն ամբողջ վերէն վար :
 Ե՛ի սեւ մաքուր սընտուկ շինեցին անոր ,
 Փոխադրեցին որդիկն իր այն տեղը նոր :
 Այնպէս եղաւ որ ա՛լ այն քաղաքին մէջ ,
 Առանց Հաֆթուատի չէր լիներ դաա ու վէճ :
 Բարձրացաւ նորա յարգն ու ինչ ու պատիւ ,
 Զօրացան նաեւ իւր որդիքն եօթնաթիւ :
 Մի հոյակապ իշխան կար այնտեղ բընակ ,
 Փառահեղ ու գոռոզ , ունէր եւ բանակ .
 Պատճառներ կը փընտուէր նա ամէն ատեն
 Որ մի քիչ փող չորթէր խեղճ մեր Հաւթուատէն :
 Իսկ սա գլուխը ժողվեց բաւական մարդիկ
 Բաւական ալ առին եօթ իր քով որդիք .
 Փողերը Գուջարան հընչեցին անեղ ,

Հորդեցին , ձեռք առած՝ ակդ սուր ու աղեղ :
 Հաւթուատ առջեւէն կ'երթար ամբոխին ,
 Եկաւ զարկաւ յաղթեց , դատ արաւ սխին ,
 Ըստոյնեց իշխանն ու քաղաքն ալ առաւ ,
 Բազում գանձ ու գոճար կորդեց աւարաւ :
 Մի մեծ ամբոխ եկաւ յարեցաւ իրեն ,
 Քաղաքէն դէպ ի լեռ խուժեց համօրէն :
 Գազաթան մօտ զըզեակ մի շինեց ամուր .
 Իրեն հետ միացաւ քաղաքն համուր :
 Երկաթէ մի գուռ ալ անցուցին վըրան ,
 Թէ՛ մարտիոց եղաւ նա թէ՛ բընակարան :
 Մի ակ կ'ելլէր սարէն , թափէր ի սրորէջ ,
 Բախտով այն պարբասին զեակդուած էր մէջ :
 Բոլորին մի պասնէչ քաչեց չըրջապատ ,
 Որուն աչք բընաւին չը չափեց զագաթ :
 Երբ նեղ եկաւ որդին նաեւ այն սընտուկ ,
 Քաբէ մի աւտղան շինեցին յատուկ ,
 Երբ օղէն բաւական տաքցու կիր ու քար .
 Բերին հանգուցին հոն որդը մեղմաբար :
 Այնպէս էին կարգած որ առատուն ամէն ,
 Պահապան մի կուգար Հաւթուատի կողմէն ,
 Մի մեծ կաթսայ բըրինձ կ'եփէր կը բերէր .
 Եը շափէր դիքո՛ւ կ'որդն , ապ էո նորա կեր :
 Բոլորեցան այսպէս մի քանի տարի ,
 Խոշորցաւ որդն եղաւ մի փիղ վիթխարի :
 Մի ժամանակ այսպէս որ անցաւ վըրան ,
 Հաւթուատ անուն կոչեց այն տեղւոյն կըրման :
 Եւ այն ագնիւ աղջիկն որդի հոգատար ,
 Հայրը կարգեց զօրաց նորա սպասուոր :
 Պաշտօնեայ կարգեցին զըպիր ու վէզիր ,
 Որդը կ'ուտէր կաթ , օրինձ , մեղր ամէն իժիր :
 Հաւթուատ ըՍպահապետ էր զըրան առաջ ,
 Այն որ դատ դատաստան կ'անէր այնչափ շատ
 Կըրմանէ արչաւեց մինչ ի Չինաց ծով ,
 Ծածկեց համակ ծովու երեսը զօրքով .
 Եօթ որդուցը հետ կար բիւր սուսերավար
 Եւըս եւ զէնք բազում եւ գանձ բաւարար :
 Ամէն այն թագաւոր թէ ելլէր ի մարտ ,
 Որդին սահմանաց մօտ , ի մի ակընթարթ .
 Լըսելով բոլոր այն զըրոյցները հին ,
 Զօրքով սարսափահար կը ջարդըւէին :
 Այնպէս եղաւ դուռը Հաւթուատին հըզօր ,
 Որ հովն ալ չէր իշխեր մօտ փըչիլ անոր :
 Մի ահագին պարիսպ , մէջը զօրք ու գանձ ,
 Հողմին ալ չէր ի տալ ազատ դարձ ու անց :

Տր. Յ. ԹԻՐԵԱՔԵԱՆ

(Շարունակելի)

Հ Ա Յ

Ն Ա Խ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ը



այաստանի պատմութիւնը ամենէն հարեւանցի քննողին իսկ մտադրութեան երկու գլխաւոր հանգամանքներ կ'ընծայէ. երկրին լեռնային բնութիւնը, եւ ամենահին օրերէ ի վեր տանուակերութեանց կամ նախարարութեանց բաժնուած ըլլալը : Օտարազգի մը անգամ, ինչպէս Պլինիոս, ըրած էր սա զիստղութիւնը թէ Հայաստանի գաւառներուն բաժանումը պարզապէս նախարարութեանց բաժանումն է, եւ թէ ասոնցմէ ոմանք երբեմն առանձին թագաւորութիւններ էին :

Սակայն հակառակ ասոնց զերակշիռ դերին եւ կարեւորութեան, հակառակ որ մեր պատմագրութիւնները նոյն իսկ յատուկ նախարարութեանց մէկ անդամին խնդիրքով գրուած, կամ անոնց հաշուին, խորհուրդներուն ծառայելու եւ անոնց փառաբանմանը սահմանուած են, այս աղբիւրներէն աղօտ, ցանցառ, թերի ծանօթութիւններ միայն կարելի է քաղել անոնց ցեղաբանութեան, կազմութեանը, նկարագրին վրայ, ինչ որ մերթ պատմիչներն իրենք իսկ կը խոստովանին (1) :

Նախարարաց ո՛չ թէ մէկ կամ երկուքին, այլ բոլոր գլխաւորներուն ու անուանիներուն վրայ ոճով եւ մանրամասնօրէն տեղեկութիւն տալու կարեւորութիւնը կը զգայ միայն հորենացի — պատի՛ւ իրեն — եւ ա՛լ աւելի կը սրէ մեր հետաքրքրութիւնը ակնարկելով « իւրաքանչիւր տանց առանձնականութեանց անբաւ զրուցաց մատեանք » ի գոյու-

(1) Եւ արդ ըստ կարգի և հարազատութեան նահապետացն և իշխանացն Սիւնեաց ոչ ունիմ ինչ ասել զանուանց և զծննդոց նոցա մինչև ցայս վայր . զի և յառաջագոյն պատմագրաց անյայտ էին իրքն, և մեք թէպէտ և բազում անգամ ջանացաք, այնքան միայն գտաք զոր վերագոյն կարգեցաք. Տես Թրպէլեան. ԴԼ. Ե.

թեան, եւ կը ձեռնարկէ՝ իրեն յատուկ եղանակով « աշխատասիրել՝ ածել ի կատարումն . . . զՀայաստանեայցս նախարարութիւնս, զամենեցուն զո՛ւսան եւ զզիա՞րդն յայտնելով համառօտ » . բայց ո՞ւրկէ առնելով կը կարծէք . ոչ թէ արդէն յիշած « անբաւ զրուցաց մատեանք » էն, այլ ինչպէս կ'աւելցնէ հիմա « որպէս հաւաստի 'ի յունականս ոմանս կայ պատմութիւնս » : Հակատութիւնը ակնհայտ է : Յո՛նս պատմիչներ՝ հաւաստի տեղեկատուներ հայ նախարարութեանց ծագման, մինչ նոյն իսկ անոնց անունները ուղիղ գրել չեն կարող յոյն գրերով, վկայ այն այստեղակ ծերունիները հայ պատմական եւ աշխարհագրական անուններու որոնց կը հանգիւզինք յոյն պատմիչներու մօտ : Խիստ քննութեան մը անցընելով իտրենացիի հաղորդած տեղեկութիւնները, կը տեսնենք թէ անոնք բաղկացած են հետեւեալներէ. 1. իւրաքանչիւր նախարարական տուներու մէջ հաւանօրէն անգիր պահուած իրենց տան յատուկ գրոյցներ : 2. Ժողովրդական աւանդութիւններ, « պատուանց առասպել » եթէ կ'ուզէք : 3. Ժողովրդական կամ խորենացիական ստուգարանութիւն եւ բառախաղ : 4. Խորենացիին ինքնահնար բարգաւաճումները այս ամենուն, վրան աւելցնելով իր ենթագրութիւնները եւ հանած եզրակացութիւնները : Այս վերլուծումէն կըրնայ հասկցուիլ թէ ի՞նչ կարծիք կրնայ ընծայուիլ այս նախուրդին : Երկու երեք օրինակ միայն կը բաւեն զաղափար մը տալու : Բզնունիներու հինօրեայ նախարարութիւնը ծագած կ'աւանդէ Արմենակի եզրօրորիէն՝ Բագէն, մինչդեռ Բզնունիի արմատանունը Բագ չկրնար ըլլալ, եւ արդարեւ մինչեւ հիմա Մշոյ մօտ կայ Բզնկերտ գիւղ, անուն մը որուն մէջ և գիրը կը մնայ արմատական : Պիտի տեսնենք յետոյ այս ուսուցմասիրութեան մէջ թէ Բզնունիներուն ծագում տուողն է Բզունի թագաւորը Խալդեան (Խալդեան արձանագիրներու մէջ Սըպուիին) : Երկրորդ օրինակ . Վանանդացոց անունը ծագած կը համարի Վղնտուր Բուղկար Վննդայ հատուածին Բասէսի մէջ բնակելէն, մինչդեռ զրեթէ ապահով կրնանք ըսել թէ Վանանդ՝ պահլաւիկ կրօնական գրքերուն մէջ յիշուած Վանանդ աստղին անունին հետ նոյն է, Վանանդ որ Արամազդէ ստեղծուած էր զնասա-

կար կենդանիները զարնկու (1), պահպանելու Ալբուրդ լերան զոնները ու կապանները, որպէս զի դեւերն ու վհուկները 'ի բաց երթան ա- նոնցմէ (2) : Ուրիշ օրինակ մը : Վահուհիք նա- խարարութիւն մը կը յիշէ (որ գոյութիւն չու- նի) եւ ծագումը կը դնէ Տիգրանի աստուածաց- եալ որդիէն Վահագնէ : Նախ՝ բացի անլստա- հելի Մեսրոպէն, մեր ամէն պատմիչներ Վա- հեուհիք անունով կը յիշեն այս նախարարու- թիւնը, որ կանոնաւոր ածանց մըն է Վահէէ եւ Վահէ (Vae) կը նշանակէ հրեշտակ, եւ յիշ- ուած է յաճախ բոլոր պահլաւիկ կրօնական գրքերու մէջ մերթ իբր շար հրեշտակ, եւ մերթ իբր հրեշտակ : Վահէվահեան մեհեանի սնունը իր Վահէի կրկնութեամբ նաւանօրէն կը նշա- նակէ կամ երկու տեսակէ հրեշտակներու մեհ- եան, եւ կամ բոլոր հրեշտակներու («ամենայն զուարթնոց»ի պէս) նուիրուած մեհեան :

Բոլորովին տարբեր անուն է Վահագն որ լեզուաբանօրէն կանոնաւորապէս կազմուած է վիշապասպան Varathraghat (գարձեալ պահլա-ւիկ) : Որ եւ է կերպով Վահեուհիք Վահագնէ չէ ծագած, եւ Վահագն աստուածացեալ գոյու- թիւն ունէր շատ աւելի կանուխ քան Հայոց մէջ Տիգրանի որդւոյն աստուածացումը, եթէ իրաւ ստոյգ ըլլայ իսկ անոր նկատմամբ իորե- նացիի աւանդածը : Կը թողունք հոս յիշել Գը- նունի՝ «Գիւնի ունի»ի նման բառախաղօրէն ստուգաբանութիւններ : Այսքանը բաւական է ցուցնելու համար թէ որքան մեծ զգուշու- թեամբ միայն կարելի է գործածել իորենացիի տուած տեղեկութիւնները հայ նախարարու- թեանց ուստին եւ զխորդին վրայ : Միայն մէկ կէտի վրայ իորենացիի սրատեսութիւնը զարմա- նալի է, եւ թերեւս այդ ալ ազգային յարատիկ աւանդութեան մը արձագանքն ըլլայ : Եւ ինչ է՝ նախարարութեանց մէկ քանիին Նախ-Արշակուն- եան՝ իորենացիի կոչումով Հայկեան՝ այսինքն մեր նոր ծանօթութեանց լոյսով ինչպէս ժա- մանակներէ ծագումը մատնանշելն, եւ այդ ըստմանումը գրեթէ անսխալ ընելն :

(1) Տե՛ս Sikand Kumanig Vigar, Գլ. Գ. 29-34 . Թրգմ. Westf :
 (2) Տե՛ս Dinai Mainogi Khirad, Գլ. ԽԹ. 12-44 . Թրգմ. Westf :

Յօդուածիս նպատակն է իորենացիի ստու- զարանսկան մեթոտէն նուազ նախնատիպ լեզ- ուաբանական վերլուծումով եւ հայ ու օտար պատմիչներու հայթայթած բոլոր ծանօթու- թեանց յենլով քայլ մը ընել զէպի այս վերին աստիճանի շահեկան խնդրին լուծումը, զատ զատ ուսումնասիրելով մեր նախարարութեանց մէջ ինչպէս եւ Ասորեստանեայց, պարսկա- կան, մարական, պարթեւական ժամանակներէ ծագում առած նախարարութիւնները : Բայց նախ երկու խօսք նախարարներու պաշտօնին եւ յաջորդութեան մասին : Նախարարները որոնք այլեւայլ անուններով նահապետ, սանուաէր, գաւառապետ(1), սատրապ, իշխան յորջորջուած են, իրենց երկրին բացարձակ տէրը, հրամա- նատարը, խնամակալը, պաշտպանն էին, զօրք կը հանէին, գունդ կը կազմէին ազատներէն ու անազատներէն (2) անոնց զէնքը, ձին, եւ այլ հանդերձանքը հայթայթելով, հարկերը կը հա-ւաքէին, ունէին իրենց « գահոյից գիւղ »ը կամ աւանը, ուր թերեւս զատ ալ կը վճռէին, թէ- պէտ դատաւորական իրաւունքը եկեղեցականի մը ձեռքը կը տեսնենք զէթ Տարօնի մէջ (3), վանքերու վանահայր կարգելու իրաւունք ու- նէին, պաշտօն կուտային կամ կը հանէին, կը կը վարձատրէին ու կը պատժէին, իրենց գա-ւառին բնակիչներու կենաց եւ մահուան վրայ բացարձակ իշխանութեամբ (4), այրիներու եւ որբերու պաշտպանն էին, եւ վերջապէս կրկիրը

(1) Այս անուններուն մէջ նահապետ անունը ամե- նէն գործածականը կ'երևի : Մեր ամենէն հին և ամենէն քիչ գիտումնաւոր պատմագիրը Բիւզանդ խիստ յաճախ կը գործածէ նահապետ, որ պահլաւիկ ծագում ունենալ կը թուի, զի « Տապարիստանի պատմութեան » մէջ զոր գրած է Մուհամմէտ պ. Էլիսան պ. Իսֆանդիար, կը հանդիպինք այս նոյն «նահապետ» յորջորջման՝ գաւառներու տէր՝ իշ- խող տուներու գլուխներու տրուած, «Մարիի նահապետք» ան : Տախուստը ընդհակառակն, կը թուի ոչ-իրանեան բառ, դատելով բառին կազմութենէն . և բնիկ հայերէնի Սարգ- մանութիւն ըլլալու է իրանեան բառէ, ինչպէս իրանեան է Սեպուս : Սեպուսները տան որդի էին, նոյնպէս ալ նա- հապետները տան տէրը՝ զլուխն էին, տուն՝ ընտանիք իմաստով : Բիւզանդ « նահապետ » եւ : տանուաէր » բա- ռերը իր սովորութեան համեմատ հոմանիշներ կուտակելու միասին կը դնէ իբր իրար բացայայտող, « Մանուէլ ու- նէր զնահապետութեան ազգին զտանուաէրութեան պատի-ւըն » (Ե. 15) :

(2) Սերէոս Գ. գ. (3) Բիւզ. Գ. 47.

արտաքին թշնամիներէ ամրապահ ու ներքուստ խաղաղ եւ շէն պահպանելու փոյթ կը տանէին: Թագաւորին հանդէպ իրենց պարտականութիւնն էր միայն իրենց որոշուած զօրաբաժինը (այլուձի սովորաբար) իրենց «ձեռական» զօրքերը բերել պատերազմի ատեն, եւ գաւառին համար որոշուած հարկերը տալ խաղաղութեան ատեն, որ հանած այրուծիին թուոյն համեմատ էր: Եւ այս երկու թեթեւ պարտականութեանց մէջ անգամ իրենց հպատակութիւնը կատարեալ ըլլալէ հետի էր, մանաւանդ երբ թագաւորը չըլլար մէկն այն զժբաղդարար սակաւաթիւ հայ թագաւորներէն որ արտաքին թշնամիներու մեքինայութեանց դէմ մաքառելու, կամ պատերազմով ինքնագլուխ դիմադրելու կարող ըլլար: Ասկից՝ կոտորովի եւ Արշակի պէս կարող եւ ուժեղ թագաւորներու թափած ջանքերը խեղ, ապստամբ նախարարներ հնազանդեցնելու եւ գէթ զանոնք անվնաս վիճակի մէջ զնկու:

Հայ նախարարները նմանցուած են Եւրոպայի ծանօթ աւատական baronներուն, բայց աւելի սերտ առնչութիւն նշմարել կարծած են ոմանք սկովտիական clanներու տէրերուն հետ որոնք ձեւացած են սկզբնաբար ընտանիքի մը — զօրեղ, ազդեցիկ, բազմանդամ ընտանիքի մը — կալուածին ընդարձակումով: Ասոնք բուն տէրերն էին իրենց հողերուն, որոնք ամենահին ժամանակներէ ի վեր նոյն ցեղին մէջ էին մնացած: Այս տեսութեամբ հայ նախարարները հայ հողէն ծնած, հոն արմատացած եւ բարգաւաճած գերգաստաններ նկատուելու են: Սակայն այս տեսութիւնը մասնականօրէն միայն ճշմարիտ է: Մեր նախարարութեանց մէկ մասը արդարեւ այս նկարագրին համեմատ ձեւացած է, բայց կայ նաև մաս մը որ թագաւորին մատուցած մէկ ծառայութեան իբր պարգեւ ստացած է իր կալուածները, ուրիշ մաս մը — եւ նշանաւոր մաս մը — բնաւ բնիկ չեն Հայ հողին, այլ եկաւորներ, օտարածին, Ասորեստանցի, Սկիւթացի, Մար, Պարսիկ, Հրեայ, որոնք Հայաստան եկած բնակացած են, ոմանք իբր փախըստականներ՝ ապաստան փնտոող Հայաստանի հիւրընկալ հողին վրայ, ուրիշներ՝ Հայաստան

տիրող նոր հարստութեան մը ցեղակից, անոր հետ կամ անոր հետեւելով եկած (1):

Տանուաէրութիւնը կ'անցնէր ուղղակի անդրանիկ որդւոյն, միւս որդիքը, եւ ընտանիքին կողմնակի ճիւղին՝ զաւակները կոչուելով Սեպուհ: Այսպէս Գնեղ՝ Արշակ թագաւորին եղբորորդին կը կոչուի «Սեպուհն Արշակունի», Սեպուհ բառական իմաստով կը նշանակէ Տան որդի (տուն սկզբնական իմաստով կը նշանակէ տուն՝ ընտանիք, բայց բարգաւաճմամբ եղած է գաւառ, երկիր), եւ ծագած է «Վասպոհնար»է (որ առնչութիւն ունի հին պարսկերէն վիզոպուհնարի հետ, գիւղի կամ աւանի որդի), Սասանեանց մէջ ազնուականներու (1) բարձրագոյն դասն էր որոնք Հուզվարէշ ձայնամբ բարբեճան կը կոչուէին: Վասպոհնար կամ Վասպուհար եղած է Վասպուհ, յետոյ Վասպուր, որմէ ունինք Վասպուրական գոտիին եւ գաւառին անունը, Սասանեաններէն եկած մեղի: Իսկ Վասպուհը մեր մէջ եղած է՝ անշեշտ առաջին վանկին՝ անկումով (Թեսաղոնիկէ=Սալոնիկ, ուղղեակ=ղեակ, ղեկ) Սպուհ, յետոյ Սպուհ, հուսկ յետոյ Սեպուհ (ճիշդ ինչպէս Mithrakan եղած է Մհրական, Մհական, յետոյ Մեհական եւ Մեհեկան): Թէպէտ երկբայական համարուած է Վասպուհրի հետ Սեպուհի նոյնութիւնը, սա-

(1) Անշուշտ սառական իմաստով առնելու չէ Մեծն Ներսէսի հետեւալ խօսքերը զոր ուղղած է հայ նախարարներու երբ Պարսկաց տարիներով անդադար մղած պատերազմներէն պարտաւած, Թուլցած, կը մերժէին ա'լ իրենց Թագաւորին Արշակի Թիկունք ըլլալ եւ կը նախընտրէին Պարսից Թագաւորին ծառայութիւնն ընդունիլ, «Զի ամենքեան զուր կեցեալ էր յազգէդ արշակունւոյ, ոմանք ի ձէնչ գաւառատէրք լեալք ի նոցանէն, եւ ոմանք մեծամեծ աշխարհաց, ոմանք աւազ աւազ աւանաց, զեղից եւ զանձուց տեարք լեալք էք եւ պէս պէս դատաւերտացն»: (Բիւզ. Գ. ծա.): Յանդիմանութիւնը եւ խրատը ազդեցիկ ընելու համար չափազանցութիւնը հասկանալի է: Ազգային աւանդութիւնը կ'ըսէ արդարեւ թէ Հայաստանի մէջ Պարթև-Արշակունի հարստութեան հիմնադիրը մէկ քանի նախարարութիւններ հաստատեց, ուրիշներու պաշտօնները ճշգրից եւ կարգաւորեց, բայց կ'աւելցնէ նոյնքան որոշակի, թէ ան գտաւ արդէն երկրին մէջ գաւառներու տէրեր, հնուց հաստատուած՝ ճանչցուած: Եւ այս վերջինները ամենամեծ մասը կը կազմէին նախարարութեանց եւ ամենէն նշանաւոր:

(2) Vaspularakanih=ազնուատոհմութիւն, տես Mi-kani-Gumanik Vigar. Թարգմ. Westli էջ 143:

(4) Բիւզ. Գ. ծգ

կայն Սեբէոսի մէջ Վասպուրական եւ Սեպհական անուաններուն մէկը միւսին տեղ իբր հոմանիշ գործածուած ըլլալը բնաւ տարակոյտի տեղ չթողուր (1) : Երբ ընտանիքին արու ժառանգ սպառած կ'ըլլար, պայազատութիւնը կ'անցնէր ընտանիքին ամենէն երէց անդամին, տարիքով անկէ անմիջապէս ետքը եկողը սնոր « Երկրորդ » համարուելով :

Ճիշդ նոյն կերպով, երբ Մանուէլ Մամիկոնեան սպարապետը Յունաց նշանակած Վարազդատ թագաւորը վանեց, եւ Պապի որդիքը թագաւորեցուց, երէցը՝ Արշակ՝ թագաւոր եղաւ, եւ եղբայրը Վաղարշակ՝ « Երկրորդ նմին » :

Սեպուհները՝ նախարարի մը զօրագնդին բնական ատաղձը կ'ընծայէին, իրեն ընտանի, հաւատարիմ հետեւորդներ, սպայախումբ մը առձեռն պատրաստ, մէկէ աւելի շահնորով կապուած իրենց հրամանատարին հետ, որ իր « համագրի » ներէն սովոր էր գտնել միշտ հնազանդութիւն ու պատկառանք, զինուորական տեսակէտով արդարեւ հիանալի կազմաւորում մը :

Պէտք է յիշել նաեւ թէ Հայոց թագաւորները իրենք ալ ունէին իրենց սեփական տանուտէրութիւն մը, որուն քիչ մտադրութիւն եղած է ցարդ, տարտամ եւ անցողակի ակնարկութիւններ միայն գտնուելով այդ մասին մեր պատմագրութեանց մէջ : Սակայն Բիւզանդի եւ Սեբէոսի մէջ գտնուածները միասին կցելով, կարելի է որոշ եւ բաւական հաստատուն կրօնուն մը հայթայթել այս հետաքրքրական խնդիրը պարզելու համար : Սեբէոս կ'աւանդէ

(1) Սեբէոս Գ. գ. « Եւ կողմն Վասպուրական գնդին էր 'ի ծառայութեան Պարսից արքային » (էջ 76, Կ. Պոլսոյ տպ : Գ. լր.) « Եւ եղև 'ի գալ միւսում ամի եկն զօրն իսմայէլի յԱտրպատական, առաջ մի յԱյրարատ, և առաջ մի 'ի Սեպհական գնդին կողմանս, և առաջ մի յԱղուանս » : Ըստ այսմ ցարդ անլոյծ մնացած « Սեպհական գնդին կողման » ի նշանակութիւնն է Վասպուրական : Հիւրըման չէր տեսած այս առնչութիւնը, և բոլորովին անկարող կը դաւանի ինքզինքը բացատրելու այդ ստուծիւնը : Արաբաց առաջին արշաւանքն ղէպի հիւսիս ուրեմն եղաւ այս երեք ճամբով : Վասպուրական գաւառի կոչումը ծագած է Սասանեանց Սեպուհներէ կազմուած գնդին զօրանիստ ընելովը այդ ռազմականօրէն կարեւոր գաւառը : Այդ Վասպուրական գաւառ անունը ճրդ դարու մէջ տրուած է, զի Ղազար Փարպեցի եւ Եղիշէ չեն ճանչնար : Սեբէոս կը յիշէ առաջին անգամ :

« գտուն Տանուտէրական » կամ որ նոյնն է « զաշխարհ Տանուտէրական իշխանութեանն », այնպէս որ մէջը պարունակէ Արարատի գաւառը, Դրւին քաղաք, Հրազդան գետը, եւ որովհետեւ դիտենք Ազաթանգեղոսէ (1) թէ Վաղարշապատ էր Արարատ գաւառի ոստանը, եւ թէ հետեւաբար հոս յիշուած Արարատ գաւառը Վաղարշապատ քաղաքն էր իր շրջակայքով, ուրեմն տանուտերական տունը կը տարածուէր ասկէ մինչեւ Դրւին, մէջն ըլլալով վաղեմին Արտաշատ, հարաւէն Երասխ, եւ հիւսիսէն սահման ունենալով Կոտայք գաւառը որու մէջ արքունի կալուած էր Գառնի բերդը : Մեծ կալուած մը չէ այս, բայց մեծ նշանակութիւն կ'առնէ անկէ որ Հայոց թագաւորներուն սկզբնական բուն կալուածը կը կազմէ, որ տարօրինակօրէն կը համապատասխանէ Ատրաբոնի աւանդած Հայ թագաւորութեան սկզբնական տարածութեան նկարագրին — Երասխի հովիտը, Արտաշատ եւ իր շրջակայք, որ, նոյն պատմադրին համեմատ, հայ թագաւորութեան ձեռնարկու հիմնադրին՝ Արտաշէսի եւ իր յաջորդներէն Տիգրան մեծի աշխարհակալութիւններով այնքան ընդարձակում ստացաւ յետոյ, ծանօթ պատմական Հայաստանը ի գոյ բերելով :

Կ'երեւի թէ Հայոց թագաւորներու այս սեփական կալուածը փոքրիկ տարածում մըն ալ ստացաւ ղէպ ի հարաւ, Ատրպատականի սահմաններուն մէջ, որովհետեւ Բիւզանդ որոշ կերպով կ'աւանդէ « Ձեռին իշխանութեան տունն Հայոց թագաւորին, որ էր զԱտրպատական աշխարհաւն » եւ ուրիշ տեղ մը (Յ. Ը.) « գտուն թագաւորին Հայոց որ յԱտրպատականին էր » : Հաւանօրէն ասոր կ'ակնարկէ հին երգը « Ի հիմնանալն Արտաշատու » որուն մէջ կը պատմուի թէ Արտաշէսի որդին « Ի մէջ Մարաց շինեաց զՄարակերտ », Մարաց՝ այսինքն Մարք Ատրպատականի կոչուած այն երկրին մէջ որ հիւսիսէն սահմանակից էր Հայոց եւ որուն հիւ-

(1) Հասանէր յառաջագոյն 'ի դաստակերտն իւր առ ոսանն Այրարատեան գաւառին 'ի Վաղարշապատ քաղաքն » այսպէս կարդալ պէտք է, ուղղելով անճոռնի խաթարումը « ըռոտանտակ », քանզի զուգընթաց հատուածին մէջ կ'որինի՝ ունինք « յառաջին դաստակերտն իւր առ ոս սանն Դողման » ուր ոս սան յայտնի աղաւաղում մըն է » ոստան « ի :

սիսային մէկ փոքր մասը անցեր էր Հայոց թագաւորներուն ձեռական իշխանութեան տակ (suzeraineté):

Ասոնցմէ զատ, Հայոց թագաւորները ունէին « ոստան » ներ, այսինքն թագաւորական տեղեր, բերդեր իբր գանձատուն կամ համբարանոց ուտեստի, որոնցմէ անուամբ յիշատակուածները գիտենք Գառնի, Անգեղտան մէջ բազում բերդեր, Անգեղտուն գաւառը համակ (« բայց աշխարհն ոստան արքունի լեալ էր վաղ վաղ » — Բիւզանդ) եւ Գողթն (« ոստանն Գողթան » — Կորիւն): Հոմանիչներու գանձարան Բիւզանդ « ոստան » եւ « արքունի » բառերը իբր հոմանիչ կը գործածէ, « ունէր յարքունիս յոստան: Արքունի տեղերու կամ ոստաններու պատկանողները կը կոչուէին ոստանիկ:

Հայ ազգին դասակարգերուն կազմաւորումը յայտ կուգայ՝ Ղազար Փարպեցիի սա յիշատակութենէն « նախարարք, սեպուհք, ոստանիկք, ոստանիկք » որուն վրայ աւելցնելով երկու մեծագոյն իշխանութիւնները, կ'ունենանք թագաւոր, եկեղեցականները, տանուտէրները, սեպուհները, ոստանիկները եւ շինականները:

Գ. ՓԱՌՆԱԿ

(Չարունակելի)



Առաջին մեղեր

Ձորերուն մէջ, սարերուն վրայ կ'արածէր
Ան ամէն օր ուն իր կապոյտ աչքերով .
Ոտքերը մերկ էին եւ միշտ ալ վրստան
Մէն մի քայլին շուշանի վրայ կոխելու .
Ճերմակ կուրծքին մերկութեան վրայ երկարած
Սեւ մազերն իր, ներքինի պաշտօնով,
Կը սեւնային աւելի .
Ո՛չ մըրտենին եւ յաստիկները գլխուն
Կը թօշնէին՝ ո՛չ երգերն իր շրթունքին .
Իր ըզգեստիկը կապոյտ

երկրնքի մէկ ջինջ կըտորէն էր ձեւուած,
Եւ հովուական իր ցուպը օձ մ'էր բրածոյ,
Քարացած օձ մ'որ իր մաքուր ձեռքին մէջ
Դեղձիի ճիւղ մը եղաւ .
Երբ վրտակին եզերքէն
Ան կը քըչէր ուն իր կապոյտ աչքերով՝
Ծառերուն մէջ՝ գաղտագողի՝ լուսնկան
Իր ետեւէն կը քալէր .
Եւ լուսնկան տարփատնչ բիւն էր գուցէ
Եհովային, կոյսերու հին Սիրահար:

Բայց իրիկուն մ'ան հովտէն ձա՛յն մը լըսեց՝
Որ զինքը վարն աղբիւրին քով կը կանչէր .
Երգ մ'էր կարծես՝ ա՛յնքան աղուոր եւ դիւթիչ՝
Որուն իր ուլը ճերմակ
Վիզը տընկած՝ խոտը բերանն ունկընդրեց .
Նոր երգ մ'էր ան՝ որ կ'ըսէր .
— « Ճերմա՛կ աղջիկ, ճերմա՛կ աղջիկ, վար
եկուր,

Եւ աղբիւրին քով ուլդ ինձի զո՛ն ըրէ :
Թըզենու՛յն լայն շուքին տակ՝
Ճերմա՛կ աղջիկ, ճերմակ ուլդ ինձ զո՛ն ըրէ :
Այս լեռներուն ես աստուածն եմ լիազօր .
Իմ շունչիս տակ՝ թէ ուզեմ՝
Գետերն արծաթ կը հոսեն
Եւ հեղեղները՝ ոսկի .
Հասած տեղն իմ համբոյրիս
Կ'անցնի սարսուռն՝ որ բաղձանքն է ծընունդին .
Շուշաններն իմ գըրկիս միջեւ վարդ կ'ըլան .
Եւ կոյսերն ալ թագունի .
Ես քու զոհիդ արիւնէն
Դաշտերն ամբողջ ծաղիկներով կը լիցնեմ,
Եւ դ'ուլիդ տեղ թիթեռնիկներ կ'արածես .
Ճերմա՛կ աղջիկ, ճերմա՛կ աղջիկ, վար եկուր:»
Ան լըսեց այս ձայնը, երկա՛ր ու երկա՛ր,
Որ կարծես իր արիւնին մէջ կը խօսէր .
Լըսեց ու, լուռ, աստղերուն տակ հառաչեց .
Յետոյ դիւթուած՝ ցուպն առաւ .
Ու քըչեց ուլը ճերմակ՝
Բըլուրէն վար՝ դէպ ի հովիտն հեշտալի:

Հո՛ս է աղբիւրն, հո՛ս թըզնին, եւ կը զգա՛ս
Աստուածն արու՝ որ ծոթրինի եւ թիւմի
Ըզգըլտիչ հոծ բոյրերով
Գըրկեր է քեզ . — Ձոհդ ըրէ՛: —

Ձինջ ու ոլորկ քարերուն վրայ աղբիւրին՝
 Ծունկին վերեւ ան պառկեցուց ուն՝ որուն
 Փոքրիկ եղջիւրն աւազին մէջ խորեցաւ :
 Ո՛հ, ի՛նչ արբշխո էր պահն ու ո՛րքան անուշ . —
 Ան կը հաւտար թէ զոհելէն վերջը դեռ
 Պիտի ուն իր ողջ մընայ ,
 Պիտի մարգին մէջ պապաջէ եւ ոստնու :
 Ան՝ մահն ի՛նչ էր՝ կ'անգիտանար, — ու երգեց .
 Երգեց բնութեան ուժին ներքեւ մին այն մեծ
 Հաճոյքներէն , որուն ծընունդը կ'ուզէ
 Անձէն արիւն , եւ գերեզմանն՝ անձն անձամբ .
 Երգեց գարունն հասակին ,
 Դաշնակութիւնն իր էութեան , եւ առանց
 Ուլին կապոյտ աչքերուն
 Աղիողորմ նային իրեն՝ տեսնելու ,
 Դրբաւ դանակն անրիժ վրզին , եւ արբշխո ,
 Երգը շուրթին գալն հեշտանքով մը զոհեց .
 Ծունկին վրայ այն մուրթիչ աստուածին՝
 Ճերմակ աղջիկն իր ձերմակ ուլը զոհեց :

Բայց իր զոհէն նոր ծաղիկներ չըբուսան ,
 Եւ ինք չեղաւ թիթեռներու հովուհի .
 Պըզտորեցաւ աղբիւրն ուլին արիւնէն՝
 Ուր ջուրին հետ պիտի ան ա՛լ չըկըրնար
 Խըմել աստղերն երկընքին .
 Խոտերուն մէջ ցուպն հագաւ
 Իր նախկին բնոյթը օձի .
 Լուսինն իջաւ լեռնէն վար ,
 Եւ ինք մութին մէջ , սարսուռն ,
 Բոպիկ ոտքով մեռած ուլին քով կանգնած՝
 Լացա՛ւ , լացա՛ւ , եւ արիւնլուայ ձեռքերով
 Իր թաց աչքերը չըփեց ,
 Մինչ գըլխուն վրայ կը թօշնէին յասմիկներն ,
 Հրապուրուած կոյսն իր անուշ մեղքը լացա՛ւ :
 ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԺԱՆ



ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ

ՆՈՒԱԳԱՅԱՆԴԵՍԸ

Փարիզի Հայկական Միութեան նախաձեռ-
 նութեամբ եւ Կոմիտաս վարդապետի ղեկավա-
 րութեամբ անցեալ դեկտեմբեր 1ին արուած
 հայկական նուագահանդէսը գտաւ յաջողութիւն
 մը՝ յուսացուածէն իսկ աւելի մեծ : Փարիզեան
 երաժշտագէտ քննադատներու հիացական դա-
 տումները, զոր թարգմանօրէն կը ներկայացնենք
 այս թիւով մեր ընթերցողներուն , կը հաստա-
 տեն թէ Հայկական Միութիւնը լիովին հասաւ
 նպատակին զոր առաջադրած էր կազմակերպե-
 լով այդ նուագահանդէսը :

Ամէն Հայ հպարտութեամբ պիտի կարգայ
 այդ զմայլանքի արտայայտութիւնները զոր
 դժուարահաճ Եւրոպացիներ ուղղեցին այդ առ-
 թիւ մեր սզգային արուեստին : Այդ երեկոյթը
 եղաւ մին ամենէն կարեւոր ճիգերէն՝ հայ ցեղը
 համաշխարհային թատերաբեմին վրայ իբր սի-
 բելի եւ յարգելի տարր մը ցոյց տալու ձգտող :

Երեկոյթին կազմակերպութեան համար ,
 Միութիւնը ծախսեց 2321 ֆր. Տոմսակներու
 եւ փրոկրամի վաճառումն , եւ նուիրատուուե-
 թիւններէ գոյացաւ 2498 ֆր. (Նուիրատուներն
 են իշխան Պորիս Արղութեանց՝ 50 ֆր., Ա. Ժամ-
 հարեան՝ 60 ֆր., Ս. Արաֆելեան՝ 100 ֆր.,
 Տիկին Սարուխանեան՝ 50 ֆր., Պաղտասար Յա-
 կոբեան՝ 100 ֆր., Փիէր Օպրի՝ 20 ֆր., Ժան
 Փսիքարի 10 ֆր., Բագրատ Շիսեանց՝ 66 ֆր.,
 Միւրզա Սարուխանեան՝ 66 ֆր. :

Փարիզի Հայկական Միութիւնը որոշեց
 հազար ֆր. յատկացնել՝ Կոմիտաս վարդապետի
 հաւաքած եւ դաշնակամ հայ ժողովրդական եր-
 գերէն տանտակ մը հրատարակելու համար :
 Այդ հատորը , որ լոյս կը տեսնէ քիչ օրէն ,
 ամենաջերմ ընդունելութիւն պիտի գտնէ՝ տա-
 րակոյս չունինք՝ հայ ինչպէս օտար երաժշտա-
 սէրներուն մօտ :

—
 X

ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Հայ երաժշտութեան

եւ բանաստեղծութեան մասին (1)

Տիկիներ եւ Պարոններ ,

Հայկական երաժշտութիւնն ու բանաստեղծութիւնը շատ տարբեր են եւրոպական երաժշտութենէն ու բանաստեղծութենէն : Անոնք շատ հեռուէն կուգան ձեզի . ծնած են մեր հինաւորց Արեւելքին լուսարբշիւ երկնքին տակ : Համակ տաքորուած են հեշտաւէտ երազանքներովը , երկայն ու քաղցր մեղամազձութիւններովը , զմայլանուչ նուազումներովը զոր կը ներչընչեն այնտեղի հրաշալի լիալուսիններն ու զարմանազան արշալոյսները , վեհապանծ արեւմուտքներն ու անսահման գիշերներն աստղաբորբոք :

Իրենց ձեւին մէջ , անոնք ունին մէկ քանին այն յատկութիւններէն որոնք բովանդակ Արեւելքի գեղեցկագիտութեան սեպհական են , եւ որ կը կայանան , մասնաւորապէս երաժշտութեան համար , մշտական ու դրեթէ տարամերժ տենչանքին մէջ գերագոյն քաղցրութեան հասնելու , մեղադանակային անուշութիւնով հոգին գինովցնելու : Այդ արուեստը լաւ հասկնալու եւ ճաշակելու համար , հարկաւոր է ուրեմն որ Եւրոպացի մը զայն նկատէ այն բնական շրջանակին մէջ ուր յղացուած է ան : Այդ տարբերութիւնը պէտք է արդէն՝ կարծեմ՝ հրապոյր մը աւելի կազմէ անտիպ գեղեցկութիւններ փնտոող Արեւմուտքի գեղեցկագէտին համար :

Բայց Արեւելքի այդ գրոշմին տակ որ կը տիրէ հոն , դուք հայ արուեստին մէջ պիտի նկատէք գծեր որ ձեզի ընտանի պիտի թուին , եւրոպական արուեստին հետ կարծես ազգակախութեան ձեւ մը ունեցող : Արդարեւ հայ գեղեցկագիտութիւնը մէկէ աւելի խնամութիւն ունի արեւմտեանին հետ : Եթէ ան շատ արեւելեան է բաղդատմամբ եւրոպական արուեստին ,

(1) Այս բանախօսութեան ֆրանսերէն ամբողջական բնագիրը ի մօտոյ լոյս պիտի տեսնէ գրքոյկի ձեւով :

մերթ գրեթէ եւրոպական է՝ երբ բաղդատեն զայն՝ օրինակի համար՝ թրքական կամ արաբական գեղեցկագիտութեան հետ : Հնդկ-գերմանական ցեղէ՝ ինչպէս Եւրոպայի ժողովուրդները , Հայերն ատկից զատ՝ ունին կրօնական կապը , որ տասնվեց դարէ ի վեր զիրենք կը զօդէ Արեւմուտքին եւ ժամանակաց ընթացքին մէջ՝ իրենց տուած է շփման կէտեր եւրոպական մասայնութեան հետ :

Յարաբերաբար աւելի ժուժկալութիւն , աւելի յստակութիւն , աւելի մաքրութիւն կայ հայ արուեստին քան թէ Արեւելքի շատ մը ուրիշ ժողովուրդներու բարդ ու հեշտամուլ արուեստին մէջ : Հայերը գրեթէ ամբողջապէս զերծ են ճակատագրական վարդապետութիւնէն որ զիրենք չըջապատող մահմետական ժողովուրդներուն մասայնութեան խորը կը գտնուի : Բնազգական հաւատք մը ունին մարդուն անհատական կորովին եւ ճակատագրին հետ մաքառելու անոր կարողութեանը վրայ : Թէպէտ եւ Դժբաղդութիւնը զիրենք այնքան յաճախ եւ այնքան խստօրէն հարուածած ըլլայ , միշտ պահած են ինչ որ իսկութիւնն է՝ կնասքին , յոյսը , — յոյսը՝ լաւագոյն ապագայի մը , արդարութեան վաղորդայններու : Հայ ժողովրդական երգ մը կայ որ կը թուի այդ ժողովրդին հոգեբանութիւնը խորհրդապատկերել .

ձայելն(1) ասաց տատրակ հաւուն .
« Ինչի՞ կուլաս կուց կուց արիւն ,
երթայ լցուի բարակ առուն : »
Տատրակն ասաց Տայել հաւըուն .
« Դընաց գարուն , եկաւ աշուն ,
Կտրաւ ջրբիկ աղբըրներուն ,
Կտրաւ հոտիկ ծաղիկներուն ,
Կտրաւ ձէնիկ կաքուններուն .
Էնքան պիտի լամ երեքուն ,
Արիւն կաթի իմ աչքերուն , —
ես ի՞նչ անեմ իմ ձագերուն : »
Ասաց . « Դու մի՛ լա էս աշուն ,
Ձէ՞ վաղ կուգայ բարի գարուն ,
Լոյս կը բացուի վեր աշխարհուն ,
Դու կը բացուի խեղձիկներուն ,
ես քեզ կ'առնեմ իմ թեւքերուն ,
Թընեմ բանձրիկ վեր ծառերուն ,

(1) Ուրիշ օրինակ՝ « Արօցն ասաց » :

Տանեմ հանեմ վեր սարերուն ,
 Բուն կը դընեմ մէջ քարերուն ,
 Տուն կը շինեմ մէջ գագերուն ,
 Երգիկ բանամ դէմ հով քամուն ,
 Թոնիր Թաղեմ մէջ այրերուն ,
 Ծուխ կը հանեմ հետ ամպերուն , —
 Մեր ցաւ կը տանք հարաւ քամուն : »

Յոյսի այս լոյսը , դուք պիտի գտնէք հայ երաժշտութեան եւ բանաստեղծութեան գրեթէ բոլոր արտադրութեանց մէջ , նոյն իսկ ամենէն մեղամաղձիկներուն խորը :

Ուրիշ մէկ մասնայատկութիւնն հայ արուեստին , այն է որ լեռնական ժողովուրդի մը արուեստն է ան . կարելի է ըսել՝ բաց օդի արուեստ մը : Հայաստանը բարձր սարահարթ մըն է , Ռուսիոյ , Պարսկաստանի եւ Թուրքիոյ միջև զետեղուած , եւ , արեւելեան Լեհաստան , այդ երեք Պետութեանց կցուած : Այդ սարահարթը , էրզրում քաղաքին մէջ , ծովէն քանի մը հազար մետր բարձրութեան մը կը հասնի , ու զայն կը պսակէ առաջաւոր Ասիոյ ամենէն բարձր լեռը , վեհափառ ու աւանդավիպական Արարատը : Սարերու կատարը , մեծ բարձրութեանց վրայ գտնուող լիճերու եզերքը , կամ հսկայ լեռներու կողերուն վրայ , երկու սէգ գագաթներու միջև տարածուող ծիծաղկոտ հովիտներու մէջ է որ հայ արուեստին բազմազան տարրերը ստեղծուեցան՝ երկրագործներու եւ հովիտներու ձեռքով , որոնք արդէն մինչև ցարդ այս ժողովրդին մեծամասնութիւնը կը կազմեն : Եւ ատրիկ կը զգացուի հայկական երաժշտութեան ինչպէս եւ բանաստեղծութեան մէջ : Բանաստեղծութիւնը կը ներկայանայ պարզ , թարմ , ծաղկանց բուրմամբ թաթառուած , լիճերու կապոյտովը երվնաւորուած , եւ տաք՝ վեհանձն արեւու մը բովանդակ հրայրքովը : Երաժշտութեան մէջ դուք յաճախ պիտի լսէք հովտական մելանուագի պէս բան մը՝ խորունկ հովիտներու մէջ երկարած գուռը , բազմապատիկ արձագանքներէն կրկնուած , ու մաքուր ինչպէս օդը լեռներուն :

Ինչ որ այս իրիկուն կուտանք իբր հայ երաժշտութիւն , կկեղեցական երգեցողութեան հատուածներ են ու ժողովրդական երգեր , —

որովհետեւ անոնց մէջ է միայն որ կը գանուի ճշմարտագէտ հայկական երաժշտութիւնը : Մեր հեթանոսական շրջանի երաժշտութիւնն , ոչինչ գիտնք : Անտարակուսելի է որ հեթանոս Հայաստանին մեղսոյնիքն շատերը կը վերապրին կկեղեցական երաժշտութեան եւ ժողովրդական երգերուն — մասնաւորագէտ պարերգիներուն եւ հարսանեկան երգերուն — մէջ , բայց այդ մասին զեւ ոչինչ գիտենք որոշ :

Գալով ժամանակակից հայ երաժշտութեան մը , գոյութիւն ունի ան , բայց աւելի Հայերէ յօրինուած երաժշտութիւն մըն է քան երաժշտութիւն մը ճշմարտագէտ ազգային :

Կոմիտաս վարդապետն է որ երեւան հանեց հայ երաժշտական ոճը . ան է որ անզուգական ծառայութիւնը մատոյց մեր ժողովրդին՝ խորագէտ ազգային երաժշտութեան մը գոյութիւնը իրեն ապացուցանելու : Ծագումով՝ թրքահայ , իր առաջին կրթութիւնը էջմիածնայ Գէորգեան ձեմարանին մէջ ստացած , Կոմիտաս վարդապետը՝ Պերլինի Համալսարանին ու Բիհար Ծմբարի Գոնսերվատուարին մէջ իր քառամեայ ուսումնասիրութեանց միջոցին՝ ծանօթացաւ եւրոպական երաժշտութեան եւ երաժշտական գիտութեան : Էջմիածին դառնալուն , հայրապետական Մայր-Եկեղեցւոյն դպրապետ կարգուելով , իսկոյն ծրագիրն յղացաւ հայկական երաժշտութեան կիրարկել քննադատական մեթոտը զոր իւրացուցած էր Արեւմուտքի մէջ : Այդ միջոցին , ժողովրդական երգերը արհամարհուած էին մեծ քաղաքներ բնակող Հայոցմէ . կը նախընտրէին երգել եւրոպական եղանակներ . իսկ կկեղեցական երաժշտութիւնը արար , թուրք , պարսիկ եւ բիւզանդական երաժշտութեանց տիրական ազդեցութիւններովը խաթարուած էր : Հայկական Շարակոյցը , մեծանուն երաժիշտ Թաշճեանի ձեռքով ձայնադրուած , հայելին է այդ խաթարման : Այդ ազդեցութիւնն է՝ մահմետական երաժշտութեան կողմէ հայ երաժշտութեան վրայ գործուած՝ այնպիսի ատեններու մէջ ուր մահմետական տէրերու լուծը ծանր կը ճնշէր հայ մտքին , այդ ազդեցութիւնն է որ քանի մը եւրոպացի քննադատներու ըսել տուած է թէ « հայ երաժշտութիւն չկայ » :

Պէտք էր այդ հայ ազգային ոճը ջոկել եւ

զտակը՝ մեր երաժշտութեան մէջ մտած հաս-
տատուած օտար տարրերու շաղապատումին մէ-
ջէն : Կոմիտաս վարդապետը ուսումնասիրեց՝
մէկ կողմէ՝ արար , պարսիկ , թուրք , ասորի ,
բիւզանդական երաժշտութիւնները , եւ միւս
կողմէ՝ Հայոց ժողովրդական երաժշտութիւնը .
տարիներով դնաց թափափուլ ուսուսական Հայաս-
տանի գիւղերը . գիւղերու մէջ է որ ազգային
բոլոր աւանդութիւնները ամենէն աւելի հարա-
զատօրէն կը պահպանուին . մտիկ ըրաւ գեղ-
ջուկներու երգելը , ձայնագրեց անոնց եղանակ-
ները . մտիկ ըրաւ շինական քանաններու եր-
գեցողութիւնը գեղջուկ եկեղեցիներուն մէջ .
գիւղացւոց եղանակներուն մէջ նկատեց մաս-
նուոր ոճ մը , զոր նոյնութեամբ գտաւ գիւղա-
կան քանաններու երգեցողութեան մէջ . յե-
տոյ՝ վերջուց քաղաքաքնակ Հայոց եկեղեցական
երգեցողութիւնէն՝ ամէն ինչ որ օտար երաժշ-
տութեանց գրոջմը կը կրէր . ինչ որ կը մնար՝
բացարձակապէս համաձայն էր գեղջուկական եր-
գին երաժշտական կերպին հետ . ազգային ոճը
գտնուած էր Կոմիտաս վարդապետ ասիկա գի-
տականօրէն ապացուցած է քանի մը գործերու
մէջ որոնք պիտի լոյս տեսնեն քիչ ատենէն՝
հայերէն եւ ֆրանսերէն լեզուով : Բայց արդէն
կը բաւէ , Տիկիւններ ու Պարոններ , անոնց հա-
մար որ արար , պարսիկ ու թուրք երաժշտու-
թեանց ծանօթ են՝ մտիկ ընել հայկական եր-
գերը՝ այնպէս ինչպէս Կոմիտաս վարդապետը
զանոնք ձայնագրած՝ կամ վերահաստատած է՝
հետեւելով ժողովրդին , ըմբռնելու համար ա-
նոնց ակներեւ ինքնատուութիւնը :

Գիտունի եւ հայրենասէրի այս էական գոր-
ծին , Կոմիտաս վարդապետը աւելցուցած է ար-
ուեստագէտի գործ մը . դաշնակած է Պատա-
րազը , կարգ մը շարականներ եւ ժողովրդական
երգեր . իր դաշնակումներուն մէջ , Կոմիտաս
վարդապետը խղճամտօրէն յարգած է ազգային
ոճը . երաժշտական գիտութիւնը եւ իր անձնա-
կան տաղանդին հրապոյրը նախնեաց ներշնչու-
մին կցած է՝ միմիայն զայն հասցնելու համար՝
իր սեպհական ճամբուն մէջ՝ իր բնական ու
հարկաւոր զարգացման . ինք ըրած է ինչ որ իր
մեծ նախորդները , Խաչատուր Տարօնեցի կամ
Ներսէս Ծնորհալի , պիտի ընէին՝ կթէ այժմ
ապրէին :

Այս իրիկուն պիտի ծանօթանաք հայ երա-
ժշտութեան՝ ինչպէս ժողովուրդը զայն կ'երգէ՝
մեներգներէն , միաձայն երգուած կտորներէն ,
պարի եղանակներէն , իսկ խմբերգներու եւ մե-
ներգներու « ընկերացու մները » ձեզի գաղափար
պիտի տան դաշնակողի տաղանդին վրայ որով
օժտուած է Կոմիտաս վարդապետը :

Տիկիւններ ու Պարոններ ,

Այն քանի մը բառերը զոր պիտի ըսեմ հայ
բանաստեղծութեան մասին՝ պիտի լրացնեն մեր
ազգային երաժշտութեան վրայ արուած այս
հակիրճ ծանօթութիւնները :

Մեր բանաստեղծութեան համար ալ , քիչ
քան գիտենք թէ ինչ էր ան հեթանոսական շըր-
ջանին : Քանի մը գիւցագներգական եւ մի-
թական երգերու կարճ հատակոտորներ միայն
հասած են մեզի : Ինչ որ հայ բանաստեղծու-
թիւնը կը կազմէ , դասական լեզուով բազմա-
թիւ քերթուածներն են , աշուղներու գործերը՝
միջնադարեան հայերէնով , ժամանակակից բա-
նաստեղծներու՝ արտադրութիւնները՝ արցի հա-
յերէնով , եւ ժողովրդական երգերը՝ զանազան
տեղական բարբառներով :

Պիտի խօսիմ միմիայն դասական եւ ժողու-
վրդական բանաստեղծութեանց մասին , որով-
հետեւ միայն անոնք սերտ կապ ունին երաժշ-
տութեան հետ , քանի որ գասական քերթուած-
ները մեծ մասամբ , աշուղներու գործերն ու ժո-
ղովրդական երգերը՝ երգուելու համար գրուած
են :

Պարզութեամբ , վեհութեամբ , պայծառու-
թեամբ լեցուն բանաստեղծութիւն մըն է : Բը-
նութեան ծոցը փթթած է ան , եւ բնութիւնը
կը թափանցէ զայն , կը տիրէ անոր մէջ , ոչ
միայն քերթուածներուն տէքորը կը կազմէ ,
այլ անոնց գլխաւոր գերակատորներէն մին .
սրտակիցն է , բարեկամ մը , մարդուն հետ կը
տառապի ու կը հրճուի : Խորին գորով մը կ'ար-
տաշնչուի այդ բանաստեղծութեանէն . ցաւն իսկ
այնտեղ երբեք կ'ծու շեշտ մը չ'արձակեր . ան
ինքզինքը քաղցր կը յայանէ կամ ուժգին , եր-
բեք հեռոտ :

Ժողովրդական երգերը ժողովրդին բովան-
գակ կեանքը կը ցոլացնեն . անոնց մէջ կը գըտ-
նուին գիւցագներգական երգեր , վրպերգներ ,

երկրագործական երգեր , ընտանեկան երգեր , սիրոյ երգեր , երգիծական երգեր , պանդուխտի երգեր , մահուան երգեր , հարստանեկան երգեր , եւն . (1) :

... Պարի երգերը մեծ մասամբ շատ հին ըլլալու են : Պարերը բաւական այլազան են . կան որ հովուերգական նկարագիր ունին , ուրիշներ՝ ռազմական ոգով , այլք՝ կատակածեւ : Ամենէն նշանաւորներէն ու յասկանշուկաններէն մին՝ Մուշի Ծորորն է , որուն եղանակը այս իրիկուն պիտի նուագուի՝ Երեւանի պարերգներու շարքի մը հետ : Մուշը մայրաքաղաքն է Տարօնի ազնիւ նահանգին , բնավայր Մամիկոնեանց հերոսական ցեղին , որ գարեբով Հայաստանի վահանը եղաւ : Ան մտաւորական վառարան մըն էր նաեւ . սուրած է քանի մը մեծ գրագէտներ եւ մին Հայոց ամենէն բարձր երաժիշտներէն , ինչպատուր Տարօնեցին , որուն գեղեցկագոյն շարականներէն մին , « Երօ՛ւրդ խորին »ը , պիտի երգուի այս իրիկուն :

... Ծորորը կը պարեն Մշոյ Ս. կարապետի մեծ ուխտագնացութեան : Հանդիսաւոր պար մըն է՝ ծանր , գրեթէ կրօնական նկարագրով : Չափն կը պարեն բոլորը միասին , այր , կին , ծեր ու մանուկ . անսահման բոլորապար մըն է , երբեմն երկու երեք հարիւր հոգիով կազմուած : Թմբուկի քանի մը հարուածէ յետոյ՝ պարողները շրջանակը ձեւացնելու հրաւիրող , զուրնան կը սկսի եզանակն ոլորել , եւ բոլորակը կը սատանի թեթեւ ու շատ յամր շարժումով մը . ներդաշնակ ճօճում մըն է , նմանութիւն հասկերու վէտվէտման՝ սիւքին տակ որ կ'օրօրէ զանոնք : Բոլոր անոնք որ պարին կը մասնակցին , խորին յափշտակութեան մը մէջ սուգուած կը թուին . բոլորը , անձայն , քաղցր ու ծանրաշուք յուզմունքով մը ղինովցած , կ'ունկնդրեն մեկտախն որ օղին մէջ կ'երկարածդէ իր ցաւագին անուշութիւնը : Մերթ երաժշտութիւնը քիչ մը կ'երագէ իր շարժումը , խուսափուկ ժպիտ մը կ'ուրուագծէ , յետոյ նորէն կ'իյնայ իր երագուն խոկմանը մէջ : Այս պարը պէտք է շատ հին ըլլայ , շատ հաւանականաբար մնացորդ մը


(1) Այստեղ՝ մանրամասն վերլուծում ժողովրդական երգերու , և օրինակներ :

հեթանոսական շրջանին , սեռակ մը միտախրուկան պար՝ ի պատիւ պաշտպան աստուածի մը :

Աշուղներու բանաստեղծութիւնը , ժողովրդական բանաստեղծութիւնն է՝ աւելի փայլուն , աւելի նուրբ ձեւով մը , ոգին եւ գեղեցկագիտութիւնը նոյնն են : (1)

Այժմ թողունք , Տիկիններ ու Պարոններ , որ երաժշտութիւնը խօսի : Ան իր մասին աւելի լաւ կը խօսի քան բոլոր բացատրողական բաները : Բայց թերեւս անօգուտ չէր այս քանի մը գծով ցոյց տալ ձեզի հոգեբանութիւնն այն ժողովրդին որ զայն յղացած է եւ բնական տեքորը որու մէջ յօրինուած է ան : Յանուն Փարիզի Հայկական Միութեան , որ կազմակերպեց այս երեկոյթը՝ հայ արուեստի մասին Փարիզեան հասարակութեան զազափար մը տալու համար , շնորհակալութիւն կը յայտնեմ ձեզի որ այսպէս խուռն բազմութեամբ եւ այդքան բարեհաջակամ համակրութեամբ եկած էք լսելու մեր ազգային երաժշտութիւնը :

Ա. Չ.



Mercure Musicalի դեկտ. 15ի թիւին մէջ , ուր հրատարակուած են նաեւ՝ իբր առանձին յօդուած՝ Պ. Չօպանեանի բանախօսութեան գլխաւոր հասուածները , Պ. Լուի Լալուա , քերթին սնօրեքը , կը գրէ .

Մեր նախորդ նամակին մէջ հրատարակուած եղանակները եւ Պ. Չօպանեանի պերճաբան խօսքերը այնքան բարձրօրէն կը գովեն հայ երաժշտութիւնը՝ որ ոչ ոք չափազանցութեան մեղադրանքը պիտի ընէ ինծի եթէ ըսեմ թէ այս նուագահանդէսը յայտնութիւն մը եւ զմայլանք մը եղաւ : Մենէ ոչ մէկը , կարծեմ , — բաց ի այդ մասին ծանօթութիւն ունեցող սակաւաթիւ անձերէ , — կրնար մտքէն անցընել գեղեցկութիւններն այդ արուեստին որ իսկապէս ո՛չ եւրոպական է ո՛չ արեւելեան , այլ ունի նկարա-

(1) Յաջորդ հատուածները նուիրուած են դասական բանաստեղծութեան և երեկոյթին մէջ երգուելիք կրտսերներուն մասին լուսաբանութեանց :

գիր մը՝ աշխարհիս մէջ մէկ հատիկ՝ շնորհալի քաղցրութեան, խորաթափանց յուզման եւ ազնիւ գորովի : Եղանակներ՝ փափուկ եւ սակայն որոշ թաւալումներով, ճկուն ու կենդանի կըշտութիւններ, երաժշտութիւն մը որ ամբողջապէս սրտէ կը բղխի եւ կը հոսի ինչպէս ջուր մը գով, թափանցիկ ու պայծառ : Արեւ կայ այդ երգերուն մէջ, բայց ո՛չ լափող արեւը Արարիոյ եւ Պարսկաստանի անապատներուն : լոյս մը ոսկեզօծ, համակ երկնային, որուն ջերմութիւնը փայփայանք մըն է սարերու սպիտակութեանը, անտառներու կանանչութեանը եւ կարկաճող առուակներու ցոլքերուն : Թերեւս չեն սխալիր, անոնք որ Դրախար կը զետեղեն Հայաստանի մէջ՝ Արարատ լեռան ստորոտը, որովհետեւ այդ երկիրը, որուն պատմութիւնը ա՛յնքան զժբաղդ է եղած, ընտրեալ աշխարհ մըն է արդարեւ, ուր բեղմնաւոր ու բարեացակամ բնութիւնը իր բարիքները կը շռայլէ մարդուն : Երկայն, խաղաղ, սիրուն ու ժպտուն հովուերգութիւն մը, ահա՛ ինչ որ եղած է հայ գիւղերու կեանքը, հակառակ այն բոլոր պատուհաններուն որ անոնց վրայէն անցած են : Մարդոց հոգին այդ բարեբաստիկ աշխարհին արժանի մնացած է : պահած է, ինք իր խորը, իր բնիկ մաքրութիւնը, իրերու բարութեան վրայ իր վստահութիւնը եւ իր լոյսի ու կեանքի սէրը : Եւ պարզասրտութեան այդ անգին գանձը, զոր ոչ թիւրքերը, ոչ Գիւրտերը, ոչ Ռուսերը, ա՛լ աւելի բարբարոս, կրցած են ըմբռնել ոչ ալ յափշտակել, մեղի փխանցուած է անեղծ՝ այդ գեղազիծ երգերուն մէջ, ծաղիկներ՝ երփնավառ ու բուրումնածոխ : Ախրոյ երգեր են, մելամաղձիկ ու հրայրքոտ՝ ինչպէս աշխարհիս բոլոր երկիրներուն նոյնատեսակ երգերը, բայց գեղեցկութեան հանգէպ խաղաղատաղին լուզման մասնայատուկ երանգով մը : Աշխատանքի երգեր, երկայն կոչազազակներ՝ հարուստ ձայնալուծումներով, մէկ լեռնէ միւսը արձագանքելու սահմանուած եւ աշխատանքի մղելու « ջան » եզը, եղբայրը, բարեկամը, գրեթէ սրտակիցը հայ երկրագործին : Ու դարձեալ՝ ողբեր, ուր լքումին կամ պանդխտութեան արմատը տրոմուլիւնը կ'արտաշնչուի ագատօրէն, — որովհետեւ ո՛չ մեղադրանք կը խառնուի անոր, ո՛չ ընդվզում : Եկեղեցական երգերը, նոյնպէս բոլորովին ժո-

ղովրդական, ոչինչ ունին այն քիչ մը վախկոտ յարգանքէն որ մեր գրիգորեան երգեցողութիւնը կապուած կը պահէ նոյն իսկ իր յոյսի ու վրաստահութեան պահերուն մէջ : ատոնք զեղումներն են հոգիի մը որ ինքզինքը ամբողջովին կը բանայ իր Աստուծոյն եւ անոր կը յանձնէ, սիրոյ խոյանքի մը մէջ, իր բոլոր մտածումներն ու իր կեանքն ամբողջ : անոնց մէջ թրթռայր կ'ըզգացողի հրավառ ու միստիքական հաւատքի մը որ առանց ճիգի կը հասնի յափշտակութեան կատարներուն, որոնց՝ մեր Արեւմուտքին մէջ՝ սակաւաթիւ ընտրեալներ միայն կրցած են բարձրանալ : վերջապէս, պարտը չունին մեր հասկնալը ոչ ալ մեր կշռական կարծրութիւնները : մերթ ծանր ու կրօնաշունչ, մերթ մեղմ ինչպէս երգ մը սիրոյ, կամ թեթեւ՝ անմեղ հրճուանքով մը, անոնք միշտ խորապէս արտայայտիչ են, ճշմարիտ երաժշտութիւն ներդաշնակ ու ազատ գեղեցիկ մարմիններու Այդ պարբէն՝ այս նուագահանդէսին մէջ՝ եղանակները միայն ունեցանք, եւ ոչ տեսիլը, բայց այդ տեսիլը կ'ոգուէր փափուկ արուեստովը Օր. Շուշիկ Բարայեանի, որ գիտէ դաշնակին տալ ազգային նուագարաններու սուր կամ սքողեալ հնչակահունութիւնները, եւ անեղծ պահպանել շարժուն կշռութեան մը շնորհը : կը զգացուի որ արուեստագիտուհին մտքին մէջ ունի ոչ թէ միմիայն նօթեր, ճերմակի վրայ՝ սև, այլ թէ աչքովը կը հետևի պարին, եւ մենք ալ իրեն հետ կը հետևինք անոր : կը տեսնենք երկաբաձիգ օրօրումը, նախերգանք այն անսահման կլոր-պարին որ երիտասարդներն ու ծերերը, — մտրոզ ժողովուրդ մը — կը միացնէ, կամ ժպտուն քմայքը պատանիներուն եւ աղջկանց, թեթեւ ոստումները, դարձդարձումները, ճկուն բազուկները որ կը բարձրանան ու կը վէտվէտին ինչպէս ոստերը սիւքէն փայփայուած . . . : Աքանջելի՛ երկիր, ուր պարը ամենուն համար բնական լեզու մըն է, ուր իւրաքանչիւրը կըրնայ անձնատուր ըլլալ գեղեցիկ իրիկուան մը ներշնչումին եւ իր ամբողջ էութիւնը կենդանի պատկեր մը դարձնել ուրախութեան, կամ կարօտին, կամ ըղձանքին :

Օր. Մարգրիտ Բաբայան, որ մէկ քանի մելոտիներ երգեց այս նուագահանդէսին, մեծ յառաջդիմութիւն ըրած թուեցաւ ինձի : շա-

տոնց նկատած էի իր մէջ զմայլելի թեմպորով
 ձայն մը ճապուկ եւ ընդարձակ, բայց դեռ չէի
 տեսեր իր մէջ ձայնարձակման այդ յստակու-
 թիւնը եւ զօրութիւնը որ ամբողջ սրահը հմայ-
 ուած ու կարծես դիւթուած պահեց. թերեւս
 իրեն կը պարտինք նուագահանդէսին լաւագոյն
 վայրկեանները, ինչպէս եւ իր աշակերտ Պ.
 Մուզուլեանին, որ ունի թենորի ձայն մը ըս-
 քանչելի եւ այնքան լաւ «գրուած» որ արհեստի
 տեսակէտով կարելի է ըսել թէ այդ երիտա-
 սարդը այլ եւս ոչինչ ունի սորվելու: Պիտի
 չնեղանայ անշուշտ եթէ ըսեմ թէ իր արտայայ-
 տելու ձեւը, շատ երաժշտական ու յուզումնա-
 լից, երբեմն քիչ մը թատերական երեւցաւ ին-
 ծի, եւ թէ շատ աւելի կը սիրեմ Օր. Բարայ-
 եանի արտայայտելու ձեւը՝ իր նրբութեան,
 շնորհիւ եւ գողտր անկեղծութեանը համար: Պ.
 Շահ-Մուրատեանի ձայնը աւելի նախնական եւ
 ամենի հրաշալի տպաւորութիւն թողուց երկրա-
 գործի երգերուն մէջ. եւ Կոմիտաս վարդապե-
 տը, որ քաջութիւնն ունեցաւ գալ խմբերգը
 ղեկավարելու եւ ինքն իսկ մեղմութիւնը երգելու,
 Տիրամատրին մէջ բարձրացաւ յուզումնալի այն-
 պիսի ներուժութեան մը որ գրեթէ արցունք
 բերելու աստիճանին կը հասնէր եւ որուն հա-
 մար հասարակութիւնը «օվասիոն» մը ըրաւ
 իրեն: Ոչինչ աւելի սրտաշարժէր քան տեսնել
 հասարակութեան ծափերուն առջեւ իր խոնար-
 հիլը՝ քաղցրութեամբ ու վեհութեամբ՝ սեւ
 քարձր վեղարին տակ, յետոյ դարձեալ նստիլը
 Միւսթէլ երգիտնիկին առջեւ ու կրկնելը առ-
 ղին վերջին տունը, երգելով զայն գրեթէ ցած
 ձայնով, մեծ վիշտերու գաղտնիքին մէջ, երկ-
 բամած կարեկցութեան ու ամփոփուած խոկման
 շեշտերով, որ աստուածային ներկայութիւնը
 զգալի կ'ընեն: Շատ մը ուրիշ մեղմութիւնը կըրկ-
 նուեցան այսպէս, Տեր ողորմեան, զոր երգեց
 Պ. Մուզուլեան եւ որուն խումբը կ'ընկերանար
 խորագրեցիկ ձայնորոգումներով, Իմ չիւստի
 ետը քնքուշ երգը զոր երգեց Օր, Բարայեան,
 Պ. Շահ-Մուրատեանի երգած Կռունկը, եւնո-
 Վիլ անգամ տեսնուած էր աւելի լեցուն ու
 խանգավառ սրահ մը: Կոմիտաս վարդապետը,
 որուն կը պատկանէ այդ մեղմութիւնը հաւաքած
 եւ անոնց գեղեցկութիւնները առաջին անգամ
 զգացած ըլլալու պատիւը, ինքզինքը յայտնեց

հնարամիտ ու փափկաճաշակ երաժշիտ մը (com-
 positour), որովհետեւ անոնցմէ շատերուն կցած
 էր դաշնակի կամ խմբի ընկերացում մը, ուր
 կը տեսնուի ամենաճիշդ ու ամենանորը զգա-
 ցում մը ազգային «թոնալիթէ»ին եւ գոյնին:
 Ժողովրդական մելոտիներու ընկերացման հարցը
 շատ գծուարաւ լուծուելիք խնդիր մըն է: Բայց
 պէտք չէ գանգատիլ երբ ճարտար ու պատկա-
 ռոտ ձեռքեր կը կատարեն այդ զգեստաւորումը,
 զոր մեր ազանջներուն նախապաշարումը թե-
 րեւս հարկաւոր կը կացուցանէ, կամ գոնէ օգ-
 տակար՝ ի սկզբան:

Պիւսելի Guide Musical իր դեկտ. 9ի
 քիւիս մեջ կը գրէ.

Այժմ՝ ամէն ոք համաձայն է ժողովրդա-
 կան երաժշտութեան բարձր ու այլազան շահե-
 կանութիւնն ընդունելու, եւ՝ գրեթէ երեք քա-
 ուորդ դար առաջ Ռուսերու առած օրինակին
 հետեւելով, շատերը ջանադիր կ'ըլլան ցեղերու
 անանուն ներշնչման գանձերը շահագործելու:
 Անոնց շարքի իրիկուն Սալ տէ-զ-Ակրիքիւ-
 թէօրի հայկական նուագահանդէսին մէջ, Կոմի-
 տաս վարդապետը ինքզինքը յայտնեց իբր թան-
 կագին ծառայողը զատի մը որ այդպիսի անձ-
 նութիւններուն մը արժանի էր. խորագրեցիկ է
 գեղեցկութիւնը այդ բոլոր հայկական մեղմու-
 ներուն, որ իր շնորհիւ, արուեստագէտներու
 «րէփերթուար»ին մէջ կը մտնեն, ճոխացնելով
 հանգերձ Արեւելքի ֆոլքլորի մասին մեր ծն-
 նութիւնը:

Տեղը կը պակսի հոս ինծի՝ բնորոշելու
 համար շատ մասնայատուկ երաժշտութիւնը
 Հայոց, երաժշտութիւն որուն իր կշռութիւն-
 ներն ու «թոնալիթէ»ները, մինչեւ իսկ հով-
 ուերգական երգերուն մէջ, գրեթէ եկեղեցա-
 կան երեւոյթ մը կուտան, թէպէտ եւ մերթ
 շատ արեւելեան անփութութեամբ մը սողոր-
 ուած: Կ'արժէր երկայն յօդուած մը նուիրել:

Լսեցինք յաջորդաբար, Պ. Զօպանեանի
 բանաստեղծութեամբը մեկնաբանուած, մենեդ-
 ներ, զուգերգներ եւ խմբերգներ, որոնց Կոմի-
 տաս վարդապետի դաշնակումները մերթ բոլո-
 րովին դասական հիմք մը կուտային, եւ ուր
 նկատեցի շատ մասնաւոր «էֆէ»ներ՝ բոլորովին
 նուագարանային: Պէտք է յիշել նաեւ հետա-

քրքրական պարի եղանակները զոր շատ յատկանշական կերպով դաշնակի վրայ նուագեց Օր. Շուշիկ Բաբայեան :

Կտորները նշանաւոր կերպով արտայայտուեցան , շնորհիւ Օր. Մարգրիտ Բաբայեանի , ներհուն երգչուհի մը՝ խորապէս արտայայտիչ ձայնով , Պ. Մուղունեանի՝ որ թենորի շատ մաքուր թէմպը մը ունի եւ իր ձայնը կը վարէ կատարեալ սպանովութեամբ, Պ. Շահ-Մուրատեանի՝ որ շատ ծափահարուեցաւ Կոռնկը երգելով , եւ Կոմիտաս վարդապետին՝ որ խումբը ղեկավարեց եւ ինքն իսկ երգեց եկեղեցական յուզիչ մեղոսներ :

Հասարակութիւնը շատ իրաւացի խանդավառութիւն մը ի յայտ բերաւ եւ կրկնել տուաւ շատ մը կտորները փրոկրամին՝ հակառակ որ ան արդէն շատ ձոխ էր :

Le Courrier Musical (15 դեկտ.) կը գրէ .

Այնքան ուժեղ որքան մասնայատուկ է համն այդ հայկական երաժշտութեան , որմէ բազմաթիւ եւ պատուական կտորներ մեզ հրամցուեցան Սալ տէ-զ-Ակրիքիւթէօրի նուագահանդէսին մէջ : Այս նուագահանդէսը տեղի ունեցաւ ինամբով Կոմիտաս վարդապետին , ներհուն երաժշտագէտ եւ խանդավառ տարածիչ իր ցեղին բնիկ արուեստին :

Պ. Չօպանեանի մէկ շահեկան բանախօսութիւնը ըստ արժանւոյն գովաբանեց Հայոց երաժշտութիւնն ու բանաստեղծութիւնը , ինչպէս եւ Կոմիտաս վարդապետի արդիւնաւոր եռանդը՝ Յետոյ՝ լսուեցան սիրոյ երգեր , աշխատանքի երգեր , պանդուխտի երգեր եւ կրօնական երգեր , խմբերգ կամ մեներգ , բոլորն ալ անհունապէս արտայայտիչ եւ որոնց մէկ մեծ մասը հասարակութիւնը կրկնել տուաւ :

Պատուական էին մեներգիչները , Օր. Մ. Բաբայեան , Պ. Մուղունեան եւ Շահ-Մուրատեան . պէտք է գովեստով յիշել նաեւ Օր. Շուշիկ Բաբայեանը , որ դաշնակի վրայ նուագեց ժողովրդական պարի եղանակներ , եւ դարձեալ՝ եկեղեցական մեղոսներ երգելու իր կերպին համար՝ Կոմիտաս վարդապետը , որ հոգին էր այս երաժշտական հանդիսութեան :

Le Monde Musical (15 դեկտ.) կը գրէ .

Ահա նուագահանդէս մը որ մեզի կուտայ նորութիւն , որ մեզի կուտայ անախպ բան մը , որ մեզ կը տանի հեռուն եւ մեզ կ'ապրեցընէ կեանքը ժողովրդի մը զոր չենք ճանչնար : Պուրկօ-Տիւրքուարէի լեզուն պէտք էր՝ գաղափար մը տալու համար համեղութեանը վրայ այդ ժողովրդական կամ եկեղեցական երգերուն զոր Կոմիտաս վարդապետը մեզի կը բերէ Հայաստանէն , ու դարձեալ բաւական չէ . պէտք է անձամբ տեսնել սիլուէթն այդ երկայն սեւ ուրուականին սրուն բարձր վեղարը կը վերայնէ ստուերի անկումը որ կը թափի իր անձէն . պէտք է անձամբ զգալ խորհրդաւորութիւնը , քաղցր մելամաղձութիւնը , հնչական շքեղութիւնն այդ երգերուն որ Ամենակարողին կ'աղերսեն կամ կը պանծացնեն բարութիւնները բնութեան , սիրական զեփուրը , դրան առջեւ ծաղկող « ինկի ծառը » , բարերար անձրեւը , « ջան եզը » , « աղբէր եզը » . պէտք է անձամբ լսել պարի եղանակներու յափշտակող ուժը , զոր դաշնակին վրայ արձակեց շատ ինքնատիպ Օր. Շ. Բաբայեանը :

Պէտք է նաեւ անձամբ լսել՝ գաղափար կազմելու համար այդ հրաշալի երգիչներուն վրայ , Պ. Շահ-Մուրատեան , Մուղունեան եւ Օր. Մ. Բաբայեան : Եւ մարդ ցաւ միայն կարող է զգալ որ արդէն իսկ մեր յիշողութեան մէջ այնքան հեռու ըլլայ , բայց եւ ա՛յնքան բարձր , այդ յայտնութիւնը անձանօթ գեղեցկութեան մը , զոր մարդ պիտի ուզէր կրկին տեսնել , որովհետեւ առաջին հանդիպումէն իսկ՝ մարդ անոր համար անսահման սիրով մը լեցուած կը զգայ ինքզինքը :

Auroreի մեզ, Պ. Փոլ Կիօ կը գրէ .

Կոմիտաս վարդապետ , դպրապետ էջմիածնայ Մայր Եկեղեցւոյ , եւ որ այժմ մեր հիւրն է ի Փարիզ , ձեռնարկած է Փրանսական հասարակութեան ծանօթացնել իր երկրին ժողովրդական ու եկեղեցական երաժշտութիւնը , հետեւելով իր հայրենակից եւ մեր արի բարեկամ Պ. Չօպանեանին , որ , բազմաթիւ հատորներով , որոնց մասին Օրօրը խօսեցաւ արդէն , յայտնեց Ֆրանսային , արեւելեան տեսիլներով կիտուածազարդ ոճով մը , Հայաստանի գրական եւ քերթողական հանձարը :

Կոմիտաս վարդապետը վերջերս տուաւ երկու նուագահանդէս, մին՝ « Ակրիքիւթէօր տը Ֆրանս » ի սրահին մէջ, միւսը « Ընկերական բարձր ուսումնասիրութեանց Դպրոցին » կըցուած « Արուեստի Դպրոց » ին մէջ :

Ո՛վ զմայլելի թարմութիւնը Լոռիի երկրագործներու երգերուն, զոր արտայայտութեան ա՛յնքան մեծ ազդուութեամբ երգեց Պ. Շահ-Մուրատեան — հայ աշակերտ մը մեր երաժշտական Գոմիտայի վարդապետին՝ — խումբին ընկերակցութեամբ :

Ինչպէս արդէն ըսի ուրիշ յօդուածի մը մէջ, ինչ որ ամենէն աւելի արժանի է սքանչացման հայ ժողովրդական բանաստեղծութեան մէջ, իրերու տեսակ մը հոգեբանական բացատրութիւնն է: Միեւնոյն նկատողութիւնը կարելի է ընել եւ հայ ժողովրդական երաժշտութեան մասին: Իր կշռութիւնը, իր ձայնականութիւնները, իր մեղոտիական շեշտին փափկութիւնը՝ զայն կը դարձնեն նկարագրող ու միանգամայն յուզիչ արտայայտութիւն մը ցաւերուն այդ ժողովրդին որ զինք չըջապատող գեղեցկութիւններուն ի տես կը խայտայ, բայց որուն հողին սեղմուած, չըթայուած է ցաւէն: Այդ տառապանքն է որ ժողովրդական հողին անդադար կը մղէ արտաքին աշխարհին օգնութիւնը հայցելու :

Հով արէք, սարեր ջան, հով արէք,
Իմ դարձին դարման արէք .
. . . Սարեր, ձորեր, դաշտեր, ջրեր,
Մարմանդ մարմանդ վազող աղբիւրներ,
Մի վեր կացէք, իմացէք,
Տեսէք իմ սրտի ցաւեր :

Սուր պայքար մը կ'անցնի, սակայն, բնութեան ու մարդուն միջեւ, որովհետեւ լեւները, աւա՛ղ, « հով չեն անում », եւ մարդկային ցաւերու « դարման չեն անում »: Ուստի եւ բանաստեղծը անստոյգ է. Ի՞նչ պիտի ըլլայ իր եղբայրը .

Աղբեր իր ձին թամբել ա,
Եարոջ դըռնէն անցել ա .
Ելե դաշտը խաղցել ա,
Անձրեւ եկե թրջել ա :

Բարեբաղդաբար « արեւը զայն ընդհուպ պիտի չորցնէ » . որովհետեւ ժողովուրդը ցաւը կ'երգէ, բայց անոր ետեւը կը փնտոնէ ուրախութիւնը, կեանքի յաւիտենական աղբիւր :

Իր երկու նուագահանդէսներու միջոցին, Կոմիտաս վարդապետը մեզի լսելի ըրաւ շահեկան շարք մը մելոտիներու, ուր ըմբռնանցիկ բնավայրի համը, եւ զմայլեցանք դաշնակումին վրայ, որ նոյն ինքն Կոմիտաս վարդապետի բարձր հմտութեան ու հանձարաւորութեան դործն է: Ու նուազ չսքանչացանք Կոմիտաս վարդապետի տաղանդին ու հմտութեան վրայ՝ եկեղեցական երգերուն մէջ՝ զոր ինքն իսկ երգեց՝ ձայնով մը սրուն հնչիւնը, խորապէս արտայայտիչ, սրտերը կը ցնցէր :

« Մեզի իմացուցին թէ Կոմիտաս վարդապետը մտադիր է ի մտոյ հրատարակել հայկական մելոտիներու շարքի մը առաջին հատորը: Անկեղծօրէն կը ծափահարենք այս պատուական գաղափարին .

« Պ. Չօպանեան, որ երբեք առիթ մը չի փախցներ յայանելու իր սէրը հայրենի երկրին, քանի մը վայրկեանի համար ընդմիջեց Կոմիտաս վարդապետի առաջին նուագահանդէսին երգուած կտորներուն շարքը՝ արտասանելով Հայաստանի բանաստեղծութեան եւ երաժշտութեան վրայ բանաստեղծութիւն մը, զոր ներկայ ստուարաթիւ հասարակութիւնը ջերմօրէն ծափահարեց: Քիչ օրէն գրքոյկի ձեւով հրատարակուած պիտի տեսնենք այդ գրական գործը: Միեւնոյն ատեն, Մերֆիւր սը Ֆրանսի նոյ. 15ի թուին մէջ կը գտնենք Պ. Չօպանեանի մէկ յօդուածը՝ « Ժամանակակից Հայաստանի առաքեալին » Ն. Վ. Մկրտիչ Խրիմեանի մասին: »

(Յօդուածին շարունակութիւնը ամփոփում մըն է Խրիմեան Հայրիկի նուիրուած ուսումնասիրութեան որուն քարգանձութիւնը Անահիթի ընթերցողները կը գտնեն մեր այս քիւի մէջ: Յիշատակելով « Այլ արդ ո՛ւր մեր քաջահաւատ իօխանք . . . » հասուածը, Պ. Կիօ կ'աւելցնէ . « Այս կտորը հեմարսապէս Լեոփարսիական վեհութիւն մը ունի: »



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ
ԲԱՆԱԽՕՍՈՒԹԻՒՆԸ

Յունուար 13ի իրիկունը, Կոմիտաս վարդապետը «Արուեստի Դպրոց»ին վարչութեան հրաւերով, հայ երաժշտութեան մասին դասախօսութիւն մը արտասանեց Rue de la Sorbonne սրահին մէջ:

Բացառեց թէ ինչպէս հայ ժողովուրդը կը ստեղծէ իր երգերը, ինչպէս կը զարգացնէ, կը տարածէ զանոնք: Թուեց այդ երգերու տեսակները, ցոյց տուաւ անոնց իւրաքանչիւրին յօրինուելու կամ երգուելու տեղն ու ժամանակը, — այս բոլորը լուսաբանուած՝ օրինակներու երգեցողութեամբ, որ մեծապէս կենդանի ու հրապուրիչ կը դարձնէր դասախօսութիւնը:

Յետոյ, բանախօսն զբաղեցաւ օտար երաժշտութեանց Հայոց թէ՛ աշուղական եւ թէ՛ եկեղեցական երաժշտութեան վրայ գործած ազդեցութեան հարցով. պարզեց թէ ինչպէս թուրք ու պարսիկ լուծին տակ կուացած հայ երաժիշտը, մասնաւորապէս մեծ քաղաքներու մէջ, կէս-թրքացած կամ պարսկացած հայ ամիրաններու օտարամոլ ճաշակին գոհացում տալու համար՝ եղծած էր հետզհետէ բնիկ ազգային ոճը նախ եկեղեցական երգեցողութեան եւ յետոյ աշուղական երգերուն մէջ: Պայծառօրէն ցոյց տալու համար թէ բուն հայկական ոճը ի՞նչ խաթարման հասած էր թուրք ու պարսիկ ազդեցութեան տակ, երգեց մէկ քանի կտորներ (Տէր սղորմեա, Տիրամայրն, եւն.) նախ հայկական զուտ ձեւով, յետոյ թրքաձեւ եղանակով, ինչպէս եւ քանի մը երգեր (Լուսնակն անուշ, Որ յանէից, եւն.) նախ հայ ոճով, յետոյ պարսկաձեւ: Գիտական տեսակէտով մեծապէս շահեկան, բանախօսութեան այս մասը, մեզ Հայոցս համար՝ ազգային տեսակէտով կրկնապէս կարեւոր նշանակութիւն ունէր, եւ կը մաղթենք որ Կոմիտաս վարդապետը կարենայ շուտով ի լոյս ընծայել իր այս նիւթերուն վրայ աշխատութիւնները որոնց մէկ ամփոփումն էր այդ բանախօսութիւնը. Հայ ժողովուրդը շատ բան սխտի ունենայ սորվելու անոնցմէ. արդիւնքը որուն հասած են Կոմիտաս վարդապետի

ուսումնասիրութիւնները, շատ փառաբանական է մեր ազգային ինքնասիրութեան համար. հայ երաժշտական ոճը, զոր Կոմիտաս վարդապետը յաջողած է վերհաստատել, շատ աւելի ազնիւ, բնական ու գեղեցիկ է քան թրքական մեղկ ոճն ու պարսկական զարդամոլութիւնը:

Բանախօսն իր դասախօսութիւնն աւարտեց՝ քանի մը էական բանաձեւերով պարզելով հայ ոճին մասնայատկութիւնները:

Բազմաթիւ Եւրոպայցիներ որ եկած էին ունկնդրել հայ երաժշտագէտին բանախօսութիւնը, եւ որոնց մէջ կը գտնուէին քանի մը հանրածանօթ անձնաւորութիւններ ինչպէս Ալֆրետ Քրուազէ, Ուսուցչապետ Փարիզի Դպրութեանց Համալսարանին եւ նախագահ «Արուեստի դպրոց»ին, ջերմ ծափերով յայտնեցին իրենց գոհունակութիւնն ու համակրութիւնը:

Դասախօսութեան յաջորդեց փոքրիկ նուագագահանդէս մը, զուտ հայկական կտորներէ բաղկացած, եւ ուր իրենց տաղանդն անգամ մը եւս ցոյց տուին Օր. Մ. եւ Շ. Բաբայեան, Պ. Մուղունեան, եւ ինքն իսկ Կոմիտաս վարդապետը, որ կարգ մը երգեր երգելէ յետոյ՝ հայկական «փող»ի վրայ հովուական եղանակ մը նուագելով հմայեց ունկնդիրները:



ԽՈՐԷՆ ՆԱՐՊԵՅԻ
ԱՆՏԻՊ ԲԵՐԹՈՒԱԾՆԵՐ

(Շար.)

Տեսակցութիւն

Թէպէտ քեզ դեռ երէկ տեսայ,
Եւ սփոփեցայ տեսլեամբդ անձկութս,
Այսօր՝ ուր գնալդ երբ իմացայ,
Վազեցի հոն որտակարօտ:

Տիկնանց անդ կայր փայլուն ժողով ,
Բայց աչքս ամենն ըրած անտես ,
Յածէին շուրջ՝ քեզ փնտդեցով ,
Այլ քեզ , աւա՛ղ , չը գըտի ես :

Ըսպատեցի , չերեւցար դու .
Եւ յուզուէի ես վշտաւատ .
Հրածեչտ առի ես մեկնելու ,
Զքեզ տեսնելէս , ո՛հ , յուսահատ :

Եւ գրանն հանդէպ մինչ ցաւալիբ
Կայի յարտօսք , եւ ոտք ի ցօղ ,
Յանկարծ տեսայ որ ծագէիր
Զերթ լուսնակին սրտայոյզ չող :

Փարատեցաւ սրտէս անկարծ
Թախծութեան մէջ յուսակորոյս ,
Որպէս ամպոյ խաւար՝ յանկարծ
Երբ արփենին ճաճանչէ լոյս :

Դառնալ ի յետս ես փութացայ ,
Զի կարօտէս կը նուազէի ,
Եթէ ըզքեզ մի ժամ գոնեայ ,
Ո՛վ իմ Ազին , չը վայլէի :

Այլ ի՛նչ վայելք ծանրաղընոյ .
Յա՛յնքան օտար այն բազմութեան
Միթէ հնա՞ր էր սրտիս սիրոյ
Արտայայտիչ ուղղել քեզ բան :

Այլ համարիմ զիս բարեբաստ
Զի գէթ ըզձայն քո երկնային
Լըսեցի ես եւ քաղցրազգաստ
Առ իս ժըպիսք քո ցոլային :

Ըսփոփանօք ես մեկնեցայ ,
Եւ տրոփէր սիրտ իմ խնդագին ,
Զի քո ակնարկը էին վըկայ
Թէ զիս սիրես , ո՛վ իմս Ազին :

Ո՛հ այն ակնաւիք անսեթեւեթ
Անցին թափանց ի խոիւ հոգւոյս ,
Զի քաղցրանայ սիրովդ եւեթ
Կեանք իմ տըխուր յուսակորոյս :

Խորհուրդ

Աշխարհի մէջ չըկայ անվիշտ բերկրութիւն ,
Ունայն են աստ ամէն վայելք երկրաքարչ .
Ա՛նձն իմ , մի՛ բնաւ մոլորիբ յայս սուտ աշխարհ ,
Որպէս զի սի՛րտըդ չարիւնի յուսահատ .
Պարագ են սէր կը հեշտութիւնք յուսատու ,
Ծաղիկ կ'անցնի , խամրի կենաց փափուկ վարդ ,
Կը մարին շուտ սրտիդ յուզմունք բոցատապ ,
Առաքինի կեանքն ունի յոյս երկնահրաչ .
Տըխուր վըշտայ կայ ապագայ լուսածեմ ,
Եւ փառաւոր պիտի արբուի պըսակը .
Լալ ուրեմն ի՛նչ պէտք է մեզ յայս աշխարհը ,
Զի գիտենք թէ մեզ կը սպասէ կեանք վըսեմ .
Աշխատի՛մք որ առնու՛մք պըսակ լուսազարդ՝
Ի վերջանալ այս մեր կենաց անկայուն՝
Էին ի ծոց անհուն կենաց մշտալոյս :

Ի գիշեր լուսնեկի

Պայծառ լուսին շողայ յերկնի
Տարածելով լոյս թաղծալի .
Վառին աստեղք անդ գեղաչեայ
Լոյս սփռելով եթերածեմ .
Գիշեր տիրած է յաշխարհի .
Շոճիք , բոլորք ծածկին յըստուեր :
Միայն լըսուի բուին ողբը
Սեւ գիշերուան մէջ սըգալիբ ,
Ու մահացուաց սիրտք կը յուզին ,
Պատգամ կարծես կ'ըսեն մահու .
Ծանրաթաթիծ հոգիդ կ'ընկճի ,
Կըզգաս թշուառ յայնժամ կեանքըդ .
Համայն իղձեր քո յուսալիբ
Եւ երագներ քո հեշտանուչ
Տաղտուկ թըլին եւ դըժընդակ .
Ինչո՞ւ սակայն յուսահատիմ
Երբ գնամ ի մահ տակաւ տակաւ .
Կեանքը կ'արժէ՞ զլոյսն յաւիտեան .
Քանի՞օն լաւ է շուտ մեռնիմ .
Ա՛հ , իմ շիրմին վերայ անզարդ
Իջո՛ , լուսին , շողբըդ յերկնէ :

ԽՈՐԷՆ ՆԱՐԳԷՅ



ՀԱՅԿԵՐՈՑԹ Ի ՊԱՏԻՒ

ՓՈԼ ԱՏԱՆԻ

1906 թ. 11-ի իրիկունը, Օթել Բ. Նիթի-
 նանթալի մեծ սրահին մէջ, Ֆրանսացի մեծա-
 նուն գրագէտ Փոլ Ատանի ի պատիւ հացկերոյթ
 մը տեղի ունեցաւ. ներկայ էին մօտ չորս հար-
 իւր հոգի, որոնց մէջ կը նկատուէին բազմա-
 թիւ ծանօթ անձնաւորութիւններ զրական,
 գիտական, զեղարուեստական, քաղաքական
 աշխարհէն, Ժաք Պլանշ, Փիէր Պոտէն, Ժիւլ
 Պուա, Ա. Պենար, Բափիէլլօ, Եոմիէ, Ռ. Բո-
 լիւս, Բլարթի, Ֆորէն, Թան լրագրի տնօրէնը՝
 Հեպուր, Օփէրա-Բոմիթի տնօրէնը՝ Կարէ,
 Կիւսթավ Բան, Լա Կանտարա, Լէյկ, Կամիլ
 Մոքլեր, Ռ. Մեզրուա, Տր. Մեչնիքոֆ, Ռոժէ
 Մարքս, Կաթիլ Մենտէս, Լէոն Տիէրքս,
 Ֆրանսուա տը Նիոն, Մարսել Փրեյլօ, Ռաֆա-
 էլի, Ռոտէն, Ռոնի, Է. տը Ռոպերթի, իտա-
 լական դեսպան կոմս Թորնիէլլի, եւն.

Բաժակահաններ արտասանեցին Ռոտէն,
 Պենար, Կամիլ Մոքլեր, Փիէր տը Կուպերթէն,
 Ֆրանսացի ուսանողաց ընկերակցութեան ներ-
 կայացուցիչ մը, Ֆէոտորոֆ՝ սուսական նախ-
 կին Տումայի անդամ, եւ Պ. Զօպանեան:

Ահա թարգմանութիւնը այս վերջնոյն բա-
 ժակահանին.

« Սիրելի եւ մեծանուն բարեկամ,
 « Եողջողուն յատկութեանցը մէջ ձեր գոր-
 ծին՝ որ կը տօնուի այս իրիկուն, կայ հատ մը
 զոր ի վեր հանել հաճելի է ինծի. այն է որ
 դուք, հարուստ ու յանդուգն ձեւին մէջ որով
 կը զգեստաւորէք ձեր զաղափարներուն առոյգ
 այլազանութիւնը, շատ Արեւելք ունիք: Ինչ-
 պէս Վալմիքիները, Ֆիրտուսիներն ու Գրիգոր
 Նարեկացիները, դուք ձերքն ունիք խօսքը պըճ-
 նելու՝ փայլակնացայտ պատկերներով, խիզախ
 փոխաբերութիւններով որոնք ցնորածին ծաղիկ-
 ներու պէս կը բոցոտին, եւ անակնկալ զու-
 զաղրութիւններով բառերու որ իրարու ընդհա-
 րելով կը լուսավառուին, եւ հո՞ծ ու հզօր ֆը-
 րագներով որոնք ուժեղ ու սաղարթախիտ ծա-
 ոերու պէս կը ցցուին եւ որոնց շաղապատեալ

կուտակումը ձեր արձակին կուտայ շքեղու-
 թիւնն այն մոգական պարտէզներուն զոր Հա-
 ցար ու մեկ գիշերներու զրուցաբանները երա-
 զեցին:

« Ահա ինչու ինձ համար կրկնապէս հա-
 ճելի է ձեզ յերել այստեղ մեծարանքը Արեւելքի
 զրական մարդոց, որոնք ձեր մէջ սքանչացմամբ
 կը նկատեն Արեւմտեան մտածման, Ֆրանսա-
 կան ազնիւ մտածման խրոխտ ասպետ մը՝ փաթ-
 թուած փարթեամ լողիկի մը մէջ որ Արեւելքի
 ամենէն պեղծեցիկ ծիրանիովն է շինուած:

« Եւ ինձ համար շատ քաղցր է դարձեալ՝
 ձեզի հաղորդել այստեղ մասնաւորապէս խան-
 դաղատագին մեծարանքն իմ հայ հայրենա-
 կիցներուս եւ ձեզի շնորհակալութիւն յայտ-
 նել ամէն բանին համար զոր ըրած էք ի
 նպաստ իրենց դատին: Որովհետեւ դուք, որ
 հոյակապօրէն երգած էք ռազմական սուաքինու-
 թիւնները, գիտցած էք նաեւ թարգմանել զըզ-
 ուանքը զոր բարձր հոգիներուն կ'ազդէ ան-
 պաշտպան ամբոխներու վրայ մոյեգնող սուբին
 վատութիւնը: Այն շարաշուք օրերուն՝ երբ ա-
 րեւելեան երկինքը կարմրեցաւ ոչ թէ բոցովն
 իր հրեղէն ամպերուն, այլ հրէշաւոր բռնու-
 թեան մը ձեռքով բզբտուած ամբողջ ժողովրդի
 մը արիւնին ժայթքումովը, այդ տխուր օրերուն
 մէջ՝ դուք առաջիններէն մին եղաք որ բարձ-
 րացուցին աղաղակ մը զայրոյթի՝ դահիճներուն
 դէմ, եւ եղբայրական համակրութեան՝ զոհե-
 րուն համար (1): Սրամտութեան եւ գթութեան
 արցունքները զոր այդ դժբաղդութիւնը հոսեցը-
 նել տուաւ ձեզի քանի մը թրթռուն էջերու
 մէջ, պէտք է փառաւոր մարգրիտներ կազմեն
 այն պատուոյ աննիւթական սուբին վրայ զոր
 ձեր բարեկամներուն եւ հիացողներուն գորովն
 այս իրիկուն ձեզի կ'ընծայէ: »



(1) 1896ին, Փոլ Ատան Revue Blancheին մէջ հրա-
 տարակեց կրակոտ յօդուած մը՝ « Արիւն կ'անձրեւէ » տխու-
 ղոսով: Յետոյ, շատ մը յօդուածներու մէջ յաճախ համակ-
 րանքով յիշեց Հայոց հարցը:

ԱՐՓԻԱՐԵԱՆ ԷՄԹԵՏԻԿՈՍ

Ատենով, Արփիարեան ոչ միայն մատ չէր դպցներ զուս գեղեցկագիտական հարցերուն, այլ հեգնոտ խորշանք մը տեսակ մը ծիծաղկոտ արհամարհանք կը ձեռացնէր անոնց հանդէպ. զուս գեղեցիկը անիմաստ կը նկատէր. օգտակարը գերագոյն գեղեցկութիւնն էր իրեն համար: Այս վերջերս, Արփիարեան պէտքը տեսաւ իր մտքին խայտարղէտ գլխարկին վրայ աւելցնել նոր փետուր մըն ալ, գեղեցկագիտական փետուրը. — ինչպէս եւ բանասիրական փետուրը: Սանաքրիթը, զոր չի գիտեր, վկայութեան կը կոչէ՝ բացատրելու համար հայերէն բառեր, եւ յանուն գեղեցկագիտական սկզբունքներու՝ որոնց անծանօթ է՝ պատգամներ կ'արձակէ գրական գործերու վրայ զոր չի հասկնար: Ակնցիները, ըստ իրեն, շիտակ Հնդկաստանէն եկած են: Ինչո՞ւ, որովհետեւ Ակն—agn. այդ ձևով՝ Փրանսայի ճանճերը պէտք է սերած ըլլան մեր Մուշի փեհլիվաններէն, « քանի որ mouche=Մուշ »:

« Պատգամ »ներուն մէջ զոր կ'արձակէ Արփիարեան՝ գեղեցկագիտական հարցերու մասին, երեւան կուգայ՝ թերեւս աւելի մեծ չափով մը քան քաղաքական հարցերու մէջ՝ բարեխղճութեան եւ լրջութեան պակասը, ատոր արդիւնք եղող ծիծաղելի հակասութեանց ամբողջ բոլորովը զարգանքուն:

Ասիկա ապացուցանելու համար՝ կը բաւէ վերլուծել Արփիարեանի քննադատութիւնները Պէշիկթաշլեանի եւ Քուչակի հրատարակութեանցս մասին: Փութամ աւելցնել որ՝ եթէ ինչդերը միմիայն ատիկա ապացուցանելու վրայ ըլլար՝ այս նեղութիւնը պիտի չկրէի. պիտի շատանայի հրաւիրելով ընթերցողներս որ կարդան այդ քննադատութիւնները: Իմ գլխաւոր նպատակս է՝ Արփիարեանի պատգամները քննելու պատրուակով՝ այդ երկու հատորներուն պարունակութեան ինչպէս եւ յարակից հարցերու վրայ՝ որոնք ինքնին շահեկան են՝ տալ քանի մը լուսաբանութիւններ:

Պէշիկթաշլեանի գործերը, ըստ Արփիարեանի, ամբողջովին երկրորդ սոպագրութիւն մը չեն արժեր. իր կարծիքով « ընդհանրապէս պէտք է զգոյշ կենանք մեր զրողներուն բոլոր գրութիւնները: լիակատար հաւաքածուներով հրատարակելու մոլորումն », եւ թէ « շատ աւելի հաճոյական պիտի ըլլար հատրնաիր Պէշիկթաշլեան մը, որ սարունակէր ազւոր, չկորսուելիք բանաստեղծութիւնները միայն »:

Բոլորովին սխալ է այս կարծիքը: Պէշիկթաշլեան սովորական գրող մը չէ. մեր ամենամեծ գրակէրն ու ազգային գործիչներէն մին եղած է, եւ այդ տեսակէտով՝ իրմէ մնացած յետին կ'ըր շահեկանութիւն ունի իր թատերագութեանց գրական արժէքը տփոյն է, բայց անոնք կ'ոգեն Հայ թատրոնի հիմնարկութեան առաջին օրերը, այդ շրջանի ազգային կեանքին ամենէն համակրելի եւ թելադրական տղբումաններէն են. ատկից զատ, մեր թատերական ազգասիրկ գրականութեան առաջին փորձերն են, եւ այս բոլոր նկատումներով՝ կորուստէ փրկուելու արժանի. վերջապէս, որքան ալ գոհացում չտան նրբաճաշակներուն, անոնք միշտ պիտի պահպանեն իրենց կրթիչ, շինիչ հանդամանքը. արդէն Պէշիկթաշլեանի միակ նպատակէն է եղած. մինչեւ այսօր, այդ խաղերը կը ներկայացուին՝ կովկաս ինչպէս արտասահմանի հայ գաղութներուն մէջ, կը շարունակեն ազգասիրական կրակը բորբոքել, վեհ առաքնութեանց սէրը եւ ազգաձևաս մոլութեանց ատելութիւնը ներշնչել. անոնց ընթերցումը կրնայ միշտ « օգտակար » ըլլալ ժողովրդին խոնարհ խաւերուն համար: Միեւնոյն բանը կարելի է ըսել ճառերուն մասին. ու նոյն իսկ կարելի է աւելցնել թէ այդ ճառերը, բաց ի իրենց պատմական նշանակութենէն եւ հեղինակին անձնական հոգեբանութիւնն ըմբռնել տուող արարքներ ըլլալու կարեւորութենէն, գրական արժէքէ ալ զուրկ չեն եւ « իր ժամանակին խմբագրական յօդուածներուն » հետ պէտք չէ շփոթուին. ճիշդ է որ անոնց մէջ տիրապետող պայմանագրական պերճախօսութիւն մըն է, բայց կան կտորներ որ բանաստեղծը ինքզինքը կը յայտնէ, եւ ուր ոճը գրեթէ կը բարձրանայ մինչեւ այն փափուկ շնորհը որով իր քերթուածները օժուած են:

Գալով քերթուածներուն, ամբարշտութիւն է ելլել ըսելը թէ՛ անոնցմէ « միմիայն ազուր, չկորսուելիք կտորները » պէտք է պահել : Պէշիկթաշլեանի — ինչպէս ո եւ է բանաստեղծի — քերթուածները անշուշտ անհաւասար են, բայց անոնց ամենէն աննշան կարծուածին մէջ իսկ այդ աննման արուեստագէտին ոսկի մատին հպումը կը զգացուի . անոնք միեւնոյն աստիճանով գեղեցիկ չեն, բայց անոնց մէջ չկայ հատ մը որ տգեղ ըլլայ . միշտ կայծ մը կայ սիրունութեան, ազուր ժպիտի մը շուքը, քաղցրութեան շունչ մը :

Մեր յարգանքի պարտականութիւնն է պահպանել այդ բոլոր ոտանաւորները, որոնք արդէն այնքան ալ բազմաթիւ չեն : Հատրնտիր Պէշիկթաշլեան մը, աժանագին, ժողովրդին բոլոր խաւերուն մէջ դիւրաւ ու մեծաքանակ տարածուելու սահմանուած, հասկանալի գաղափար մըն է . բայց ատիկա պատճառ մը չէ Պէշիկթաշլեանի գործերուն ամբողջական հրատարակութիւնը անիմաստ յայտարարելու :

Անիմաստը՝ Արփիարեանի ձգտումն է՝ « հետեւողութիւն » նկատելու ինչ որ ինքն իսկ Պէշիկթաշլեանի գործին լաւագոյն մասը կը համարի : Դիտելի է որ Արփիարեան խօսքն իսկ չ'ընէր Պէշիկթաշլեանի սիրային բանաստեղծութեանց . ի նկատի ունի միայն հայրենասիրական երգերը, եւ անոնք ալ, կ'ըսէ, « ամէնքը հայ մտքէ ժայթքած չեն . » « Պէշիկթաշլեան, կ'աւելցնէ, եւրոպական քերթուածները կը հայացնէր, ընտանեկան շրջանակներու մէջ կարգացուելու համար միայն . » կը կարծէ թէ զեռ փնտռուածքներ ընելու է « Պէշիկթաշլեանի երգերուն մէջ ցարդ ծանօթ եղածներէն ուրիշ փոխառութիւններ ալ երեւան հանելու համար » : Այս պայմաններուն մէջ ամենանիւար բան մը պիտի դառնար Պէշիկթաշլեանի զրական գործը . ոչինչ՝ ուշադրութեան արժանի, բայց եթէ քանի մը հայրենասիրական երգեր, անոնք ալ հետեւողութիւն (մէկ մասին ընտելապարները՝ ծանօթ, մնացեալները՝ հետազօտելի) : Ծաշակաւոր նմանող մը, ուրիշ ոչինչ :

Պէշիկթաշլեան հուժկու անհատականութեամբ ստեղծագործ մը չէ, բայց երբեք ներելի չէ զինքը պարզ նմանողի մը տեղ գնել .

իր բանաստեղծութիւնը ունի ուրոյն, որոշ անձնականութիւն, շատ փափուկ ու նրբերանգ, բայց իրական : Այս մասին մանրամասնօրէն խօսած ըլլալով Պէշիկթաշլեանի ընդարձակ կենսագրութեանը մէջ՝ որ քիչ ատենէն լոյս պիտի տեսնէ, հոս կը շատանամ այս հակիրճ հաստատումով : Կը բաւէ սակայն, ըսածիս համոզուելու շամար, որ գիտակից ընթերցող մը ուշադրութեամբ ուսումնասիրէ Պէշիկթաշլեանի հրաշալի սիրային եղերերգները, ինչպէս եւ Գիշեր, Քնար կուսիկ քերթուածները՝ գրաբար որոնք իր գեղեցկագոյն էջերն են, եւ ինքնատիպ . այդ գրաբար քերթուածներէն միայն Յիշեալ գիւր կրնայ Միւսէի Rappelle-toi երգին հետեւողութիւն մը նկատուիլ . բայց միմիայն ընդհանուր գաղափարն է որ նոյնն է երկու տաղերուն մէջ, արտայայտութեան ձեւը բոլորովին տարբեր, անձնագրոյմ է Պէշիկթաշլեանի մօտ : Ինքնատիպ են նմանապէս աշխարհաբար բանաստեղծութիւնները, բաց ի մէկ քանի հատէն, որոնք են Հայ ֆաջորդին, Թաղուաձն ֆաջորդոյն, եւն : « Ո՛հ, ինչ անուշ » երգը նմանողութեանց կարգն անցընելու համար, Արփիարեան երեւան կը հանէ Քաւիւնի անուն աննշան Իտալացիի մը Amore e Dolore տիտղոսուած հատորին մէկ բանաստեղծութիւնը (ինքն իսկ աւելցնելով հանդերձ թէ այդ Քաւիւնին Պոլիս ապրած ըլլալով ճիշդ այդ շրջանին՝ կրնայ Պէշիկթաշլեանէն ներշնչուած ըլլալ եւ ոչ թէ անոր ներշնչող) : Պէշիկթաշլեանը Քաւիւներու հետեւող չեմ կրնար ընդունիլ . այդ երգը որ իր ամենէն սիրուններէն է, կը մնայ ինծի համար ինքնատիպ գործերէն մին բանաստեղծին : Անոր շատ մօտեցող բանաստեղծութիւն մը նկատած եմ Հիւլօի Les quatre vents de l'espritին մէջ . ահա՛ բառական թարգմանութիւնն այդ « երգ » ին :

Պանդո՛ւխտ, նայէ՛ վարդերուն .
 Զըւարթ Մայիսն արտասուլաթոր արշալոյսէն
 Զանոնք՝ բացուած՝ կ'ընդունի .
 Պանդո՛ւխտ, նայէ՛ ծաղիկներուն :
 — Կը մըտածեմ
 Վարդերուն զոր ե՛ս տընկեցի :
 Մայիսն, հեւո՛ւ Ֆրանսայէն,
 Մայիս չէ :

Պանդո՛ւխտ, նայէ՛ շիրիմներուն .
Մայիսը որ կը ծիծաղի երկընքին մէջ գեղեցիկ,
Համբոյրներուն տակ աղանեաց՝
Գերթզմաններն կը սարսուացնէ :

— Կը մըտածեմ
Այն սիրական աչքերուն զոր փակեցի .
Մայիսն , հեռու Ֆրանսայէն ,
Մայիս չէ :

Պանդո՛ւխտ , նայէ՛ տերեւներուն ,
Տերեւներուն ուր բոյներ կան .
Կը լեցունէ զանոնք Մայիսը թելերով ըզպիտակ,
Եւ անվախճան հառաչներով :

Կը մըտածեմ
Այն հրմայիչ բոյներուն ուր սիրեցի :
Մայիսն , հեռու Ֆրանսայէն
Մայիս չէ :

Գաղափարը բոլորովին նոյն է , բայց Les quatre vent de l'espritն հրատարակուած է 1870էն յետոյ . « Ո՛հ ինչ անուշ »ը , գրուած այդ թուականէն շատ առաջ , նմանողութիւն մը չի կրնար ըլլալ Հիւօի այդ կտորին : Միեւնոյն գաղափարը ունեցած են երկու բանաստեղծները՝ իրարմէ անկախաբար : Ու հոս կուգանք « հետեւողութեան » հարցին , որ մեր մէջ զեռ լրջօրէն երբէք չէ քննուած :

Նախ , երկու արարեր հեղինակի կտորներու նմանութիւնը անհրաժեշտօրէն չի նշանակէր թէ մէկը միւսին հետեւած է : Իրարմէ ժամանակով ու երկրով հեռու եւ իրար երբէք չհանչցած հեղինակներու մօտ յաճախ կը պատահի նկատել միեւնոյն գաղափարը , մերթնոյն իսկ նոյն պատկերը , նոյն բացատրութիւնը . այգպիսի երեւոյթներ մարդկային մտքին միութիւնը կ'ապացուցանեն . ու կան գաղափարներ , պատկերներ , բացատրութիւններ , այնքան ընական ու ճիշդ , որ հասկանալի է անոնց մէկէ աւելի հեղինակներու մէջ ինքնաբերաբար ի յայտ գալը : Բրիտտոսէ քանի մը հազար տարի առաջ գրուած « Թրծուն հողի սայլակը » հնդկական թատերագութիւնը կը պարունակէ նոյն այն գաղափարը զոր արտայայտեց Տիւրքի իր Գաւնիպարդ սիկիներն մէջ . եւ սակայն Տիւրք գոյութիւնն իսկ չէր գիտեր հնդկական թատերագութեան : Իպսէնի գործերն երբ պռաջին անգամ Ֆրանսայի մէջ ներկայաց-

ուեցան , Ֆրանսացի քննադատներէն ոմանք որ չէին սիրեր Իպսէնը , ելան ըսելու թէ իր խաղերը ժորժ Սանի գործերէն ներշնչուած էին , բայց մեծ Հիւսիսցին Ֆրանսերէն չէր գիտեր եւ ժորժ Սանի միայն մէկ վէպին՝ այն ալ ամենէն աննշաններէն մէկուն՝ Թարգմանութիւնը կարգացած էր . Իպսէնի մահուան առթիւ գրուած յօդուածներուն մէջ , Կասթոն Տեչան , Փակէ եւ ուրիշներ որոշապէս փնջարարեցին թէ այդ նմանողութեան վարկածը բոլորովին անհիմ էր եւ թէ ընդհակառակն ամենէն ինքնատիպ հեղինակներէն մին պէտք է համարիլ Իպսէնը : Ես ինքս — թող ներուի ինձի այս մեծ անուշեւրէն յետոյ իմ մասին խօսելու անհամեստութիւնը , — նկատած եմ երբեմն , եւ հաճոյքով , որ իմ յայտնած մէկ գաղափարս կամ դարձած մէկ պատկերս արդէն ինձմէ շատ առաջ արտայայտուեր է ուրիշի մը ձեռքով . « Այս առտու դաշտը դացի » արձակ քերթուածս , որ հրատարակուած է Հայրենիքի մէջ 1892ին , կը պարունակէ նոյն գաղափարը զոր կը գտնենք Քուչակի « Աուրբ Աստուածածնի տօնին մտաւ խարտէշն ի յէգին » ութնեակին մէջ . « Պարսպ սըրուակը » տաղիկս , հրատարակուած նմանապէս Հայրենիքի մէջ (1892) բացարձակապէս նոյն գաղափարը կը պարունակէ զոր Լըքոնթ տը Լիլ յայտնած է ի : Le parfum impérissable հնչեակին մէջ արդ , այդ երկու փոքրիկ բաները դրած պահուս՝ Քուչակին գոյութիւնն իսկ չէի գիտեր , եւ չէի կարգացած Լըքոնթ տը Լիլի Poèmes tragiquesը որու մէջ կը գտնուի վերոյիշեալ հնչեակը :

Կան գործեր որոնք յայտնապէս ներշնչուած են ուրիշ հեղինակէ մը : Ռասին ներշնչուած է Եւրիպիլէսէն , Բորնէյլ՝ Կուրլէմ տը Բասթրօն : Մեր Պէշիկթաշլիանը ներշնչուած է Հիւկօն ու Ուօլֆէն : Խնդիր է թէ հետեւողութիւնը կարելի է միշտ նկատել իբր նշան մը ստեղծագործ տաղանդի չգոյութեան , կամ թէ՛ ընդհակառակն՝ հետեւողութեան մէջ անձնականութիւնը չի՛ կրնար արտայայտուիլ : Գրականութեանց պատմութիւնը ամբողջապէս մինչեւ ժժ . դարու սկիզբները , հաստատական պատասխան կուտայ երկրորդ հարցման : Յունական արուեստը շարունակական « հետեւողութիւն » մըն էր . արուեստագէտներն ու գրա-

գէտներն առանց վարանելու իրարմէ փոխ կառնէին իրենց գործերուն նիւթը . Սոփոկլէս ու Եւրիպիդէս իրենց ողբերգութեանց համար գործածած են յաճախ այն նիւթերը զոր արդէն Եսփիլէս, յունական ողբերգութեան առաջին վարպետը, իր խաղերուն իբր հիմք էր առած . յունական արձանագործութեան մէջ միեւնոյն մութիֆը տասնեակներով կրկնուած կը գտնենք՝ տարբեր արուեստագէտներէ, մանրամասնութեան տարբերութիւններով, ուր իւրաքանչիւր արուեստագէտի անձնական խառնուածքը կը յայտնուի . Լատին գրականութիւնը գրեթէ ամբողջապէս հետեւողութիւն մըն է յունականին . Վիրգիլիոս իր Ենէականին համար իբր օրինակ առած է Հոմերի Իլիականը, իր Մշակակալներին համար Հեսիոդոսի Աշխատանք եւ օրերը, իր Հովուերգութիւններին համար Թէոկրիտի համանուն քերթուածները . Տիրուլլոս, Կատուլլոս, Պրոպերտիոս հետեւած են յոյն քնարերգականերու, Կրիկերոն՝ Թեմոսթենէսին, Պլաւտոս եւ Տերենտիոս՝ Արիստոփանի ու Մենանտրի, եւն. եւն. Նոր ժամանակներուն մէջ, միեւնոյն երբևոյթը յաճախ կը տեսնենք կրկնուած . Տանթէի « Աստուածային կատակերգութեան » սկզբնական գաղափարը կը գտնուի Հոմերի, Վիրգիլի, Ովիդիոսի, ինչպէս նաեւ միջնադարեան քանի մը բանաստեղծներու մէջ : Շէքսպիր իր խաղերէն շատերուն նիւթը վերածնութեան իտալացի զրուցագիրներէն առած է . Լաֆոնթէնի առակները մասամբ նմանողութիւն են Եզրոսի եւ Փեդրոսի առակներուն, ոտանաւոր « նորավէպ » ներք Պոքաչիօի, Արիոսթօի, Մաքիավելլի « նորավէպ » ներուն . Լա Պրիւյէրի Նկարարագիրը Թէոփրասթի համանուն գործէն է ներշնչուած . աւելորդ է օրինակները բազմապատկել : Գտնուած են անշուշտ, ամէն ժամանակներու մէջ, որոշ ու հզօր ինքնատուրութեամբ հանճարներ, որոնք նիւթ ու ձեւ գրեթէ ամբողջապէս իրենցմէ յօրինած են, — « գրեթէ » կ'ըսեմ, որովհետեւ բացարձակ նորութիւնն անգոյ է, եւ ամենէն ինքնատիպ կարծուած հեղինակը ունի տարրեր իր նախորդներէն իրեն փոխանցուած : Փրովանսական թրագատուրները, օրինակի համար, նօթ մը ստեղծեցին որ կրնայ մինչեւ աստիճան մը « նոր » համարուիլ, ասպետական զգացումը, իտէալական սէրը (« մինչեւ

չեւ աստիճան մը » կ'ըսեմ, որովհետեւ հին արար բանաստեղծութեան մէջ՝ որմէ ներշնչուած են՝ այդ տարրերուն սաղմը կայ) : Կէօթէի բանաստեղծութիւնը կը պարունակէ նորութիւն մը — գիտական ոգին՝ քնարերգուած, (բայց Լուկրետիոսն ալ արդէն միեւնոյն բանն ըրած էր) : Աւելի բազմաթիւ եղած են՝ մինչեւ ԺԹ. դարը, անոնք որ գիտակից հետեւողութեամբ արտադրած են իրենց գործերը, ու ոչ ոք զանոնք բանագող է համարած : Բանագողը այն է որ նոյնութեամբ փոխ կ'առնէ ուրիշ հեղինակի մը գաղափարն ու արտայայտութիւնը, եւ կամ եթէ փոփոխութիւն մը մտցնէ՝ կ'այլանգակէ բնատիպարը : Հանճարը, հետեւողութեան մէջ, կը մնայ ստեղծագործ . կտաւն է որ փոխ կ'առնէ, ու մերթ ասղնագործութեան մոթիֆներէն մէկ քանին, եւ ինքն իսկ կը բանի հոն՝ իր անձնական ճաշակին ու ներշնչման համեմատ . իրենը կ'ընէ տուն մը, ուր իրմէ առաջ ուրիշները բնակած են, զայն իր ըմբռնած ձեւովը կահաւորելով, անոր վրայ իր նկարագիրը զըրոշմելով . « Իմ ինչքս կ'առնեմ ուր որ զըտնեմ » կ'ըսէր Մոլիէր, որ ամենաինքնատիպ հեղինակ մը ըլլալով հանգերձ՝ շատ օգտուած է Արիստոփանէն, Պլաւտոսէն, Տերենտիոսէն եւ Միջնադարեան հին ֆրանսական զաւեշտներէն . Մոլիէրի բանաձեւը կտրուկ ու ամբողջական բացատրութիւնն է հետեւողութեան՝ ինչպէս կը հասկնային դասականները . փոխ կ'առնէին, ո եւ է հեղինակէ, ինչ որ ուզէին, բայց զայն իրենց ինչքը կը դարձնէին . կ'իւրացնէին, կ'անձնականացնէին . Անտրէ Շէնիէ այդ միեւնոյն գաղափարը աւելի ընդլայնուած ու նրբին ձևով մը կ'արտայայտէ իր քերթուածներէն մէկուն մէջ .

ես յաճախ կը կապտեմ գանձերը հին հեղինակաց .
 Աւելի ստէպ՝ գըրութիւններն անոնց, վեհանձն խըթաններ,
 իրենց բոցով զիս կը վառեն եւ անոնց հետ կը ստեղծեմ :
 Բըծախընդիը դատաւոր մ', իմ գրուածքներս լրտեսելով,
 Յանկարծ՝ մեծագո՛չ՝ քըսան կըտոր կը ցուցնէ

Թարգմանուած այս ինչ գրողէն զոր կ'ան-
 ուանէ . եւ իր գիւտէն՝
 Ինք իր վըրայ կը զմայլի , գո'ի՛ տեսնելով
 զինքն ա՛յդքան գիտուն .
 Ինչո՞ւ իմ մօտըս չի գար , ես իրեն ցոյց պիտի
 տամ
 Հազար ուրիշ գողըւթիւններ զոր ինք Թերե՛լըս
 չի գիտեր :
 Մատըս իսկոյն վերարկուիս վրայ երեւան կը
 հանէ
 Կարուածքն աներեւոյթ եւ որ կ'երթայ՝ օձա-
 մանուած .
 Ծիրանի՛ մ'օտարամուտ իմ կերպասիս միա-
 ցընել .
 Պիտի ցո՛յց տամ արուեստն որ անծանօթ է
 ուսմիկին ,
 Յայտ յանդիման ջոկելու՝ հետեւելով անոնց
 կապին .
 Այդ մետաղները միացած որոնցմով ի՛մըս
 կազմեցի :
 Ամէն ինչ որ Անգլիացոց մուսան արի եւ
 անսաշ,
 Ամէն ինչ որ Թոսքաններուն ձայնը խըրոխտ
 եւ անուշ,
 Ամէն ինչ որ Հռովմայեցիք , այդ արքաներն
 աշխարհի ,
 Ոսկի , մետաքս կ'ընծայէին ինձ՝ տաղերուս
 մէջ մոցուցի :
 Կ'ըմպե՛մ նամանաւանդ այն ալիքները զոր
 Պերմէսն՝
 Աւելի ջինջ ու բեղմնաւոր՝ Յունաստանին մէջ
 հոսեցուց .
 Հոն , խանդավա՛ռ Պրոմեթէոս , այն կըրակ-
 ները կը խըլեմ
 Որով կաւին հոգի կուտամ եւ աստուածներ
 կը յօրինեմ :
 Երբեմն , հեղինակի՛ մ'մէջ մըտածո՛ւմ մը կ'իւ-
 րացնեմ ,
 Բայց որ իմ մօտըս , յաճախ՝ խառնամանուած
 կը զգեսու
 Ի՛մ պատկերներս , ի՛մ դարձուածքներս , մա-
 տա՛ղ ու Թարմ զարդարանք .
 Մերթ ալ իմա՛ստը կը փոխեմ եւ լոկ բառերը
 կը պահեմ ,
 եւ արուեստը գիտէ զանոնք ճշկել նորանոր
 Առարկայից՝ զոր իրենք իսկ պատկերեցնուն
 կը զարմանան :
 Աւելի ոտէպ , կուգայ արծակն ա՛յլ օրինաց
 ենթարկըւիլ ,
 Կ'այլափոխուի , ու խոյս կուտայ քերթողակա՛ն
 մասներէս ,

Յանգերով պըսակուած , Թեթեւաքայլ ու պա-
 րանցիկ ,
 Գաշնաւոր չափերով կը շորորայ ու կ'եր-
 գէ :
 Այդ մորճերն , հինաւուրց այգիներէն փոխա-
 ուիկ ,
 Իմ հողիս վըրայ կ'աճին մեղմափափուկ վերա-
 տընկուած .
 Ձեռքըս զանոնք ճարտարօրէն իմ այգիս
 կոճղերուն
 կը կապէ , եւ ընդհուպ մէ՛կ կեղեւով կը ծած-
 կըւին :
 Բարեյաջող այս խառնուրդին անուշուճիւնն
 անըզգալի ,
 Իմ նո՛ր պըտուղներուս վտղընջական համ մը
 կուտայ :

ԺԹ. Կարուն է որ հետեւողութիւնը անհե-
 տացաւ գրական բարքերէն . Ֆրանսական յե-
 ղափոխութիւնը անհատին ազատութեան , ան-
 կախութեան սկզբունքը հռչակելով , անհատա-
 կանութեան ձգտումը զօրացուց . ուսման թիկ
 բանաստեղծները խորշեցան հետեւողութեանէ ,
 ձգտեցան բացարձակապէս ինքնատիպ գործեր
 յօրինել . բայց նորէն հետեւողութեան օրինակ-
 ներ կարելի է գտնել նոյն իսկ ուսման թիկնե-
 րուն մէջ . Շէլլի , Կէօթէէն յետոյ , ուզեց շարու-
 նակել Եսթիլէսի « Պրոմեթէոս » -ը . Լամարթին Ման-
 ցոնիի Հիկո Մայիսին հետեւելով գրեց իր նա-
 փոյլեոն Պոնափարք քերթուածը : Շատ սակա-
 ւաթիւ են այդ բացառութիւնները , ու հաւա-
 նական չէ որ հետեւողութիւնը վերահաստատու-
 ուի երբէք իր երբեմնի ձեւով : Պառնասեան
 բանաստեղծները զէպի զասական արուեստ վե-
 րադարձի մը ձգտեցան , բայց աւելի դասական
 վարպետներուն ընդհանուր գեղեցկագիտու-
 թեանը մօտենալու , անոր կատարելութեան եւ
 անանձնականութեան նկարագիրը վերարտադ-
 րելու ճիգ մըն էր իրենցը . քան ճշմարիտ հե-
 տեւողութիւն . (միայն Լըքոնթ տը Լիւն է որ
 ճշմարիտ « հետեւողութեան » մը օրինակը տը-
 ւած է իր Les Erynnies ողբերգութեամբ՝ Ես-
 թիլէսի Orestieէն ներշնչուած)

Մեր հին գրականութեան մէջ հետեւողու-
 թիւնը յաճախագէպ է . մեր եկեղեցական գրա-
 գէտները շատ հեղ իրենց բնատիպար առած են
 յոյն եւ ասորի Ս . Հայրերու գործերը , բայց ի-

ես համոզուած եմ որ շատ սիրուն հատոր մը կարելի է կազմել Հայոց ազգասիրական բանաստեղծութեան հատընտիր նմոյշներովը. փոքրիկ հատմիր մը ուր պիտի ամփոփուէին լաւագոյն կտորները Ալիշանի, Արովեանի, Պէշիկ-թաշեանի, Բամառ-Բաթիպայի, Շահազիզեանի, Գուրեանի, Եարճանեանի, Իսահակեանի, Վարուժանի, եւն. (1) :


Ա. ԶՕԳԱՆԵԱՆ



ՏՈՒՆԿԵՐԸ

ԵՒ ԱՆՈՆՑ

Հայերէն անունները



DES PLANTES ET DE LEURS NOMS ARMÉNIENS

II.

Par le Dr. Joh. ARTIGNAN

Երեսնակ. — aigremoine, eupatoire; agrimonia eupatoria L. — *յն. եւպատորիոն, ար. դափեք, թրք. գոյուն օրու.* — Երեսնակը վարդազգի տունկ է գեղին անկոթ ծաղիկներով որ շարուած են կէս մետր երկարութեամբ ծղօտի շուրջը. կը բուսնի ամրան ամիսներուն, անտառներու, մացառներու, խրամներու, ճանապարհներու խոտաւէտ եզերքը. փոխադիր տե-

(1) Անահիտի յաջորդ Թիւին մէջ կը հրատարակուի Բուշակի շուրջ Արփիարեանի յարուցած հարցերուն բնուածիւնը :

րեւները, ծաղկաբեր ծղօտին (որձայ) ստորեւ շարուած շուրջանակի, թաւ են եւ աստիճանոր, նման են մորենիի տերեւներուն. մանր պտուղները զգեստին կը կառչին: Տերեւները կը գործածուին իբրև կապող (astringeant). եփած ջուրի մէջ ձգելով (20 առ 1000) խաղաջ կ'ընեն կոկորդի ցաւի համար. վէրքերը կը լուան :

Ամիրտովլաթ դափեք անուամբ կը գրէ (Հայբուսակ թ. 669). որ է հայերէն երեսնակն, անիծած ծաղիկն, որ թրք. դոյուն պուքրադի ասէ. եւ տերեւն նման է կաննիփատի տերեւին եւ ծաղիկն գեղին է. եւ լաւն այն է որ Հոսմոյ երկիրն լինի. . . նոյնպէս ըստ հին բժշկարանին զոր կը յիշէ Հ. Ալիշան. « Դափեթ որ է երեսնակն, այլ ասեն դուսարա եւ հոսմերէն պատերիոն (եւպատորիոն պէտք է լինի). թիւ մէկ երկայն, ի ծայրն ծիրանի ծաղիկ : »

Դիոսկորիդէս (Գիրք Դ. 33) եւ Պլինիոս բնապատում (Գիրք Ին. 29) որ անշուշտ առջինն առած է, կը նկարագրեն երեսնակը, եւպատորիոն, eupatorium անունով : Դիոսկորի-



Agrimonia eupator L. — Երեսնակ(?)
1. ծաղիկը. 2. պտուղը.

դէս, որու բաժները կը գտնենք մասամբ Ամիրտովլաթի խօսքերուն մէջ. « Մէկ ցողուն ունի, կը գրէ, բարակ, թաւ, թիւ մը եւ երբեմն աւելի երկայն, տերեւները՝ աղպատին (quintefeuille) կամ մանաւանդ կաննիփին տե-

րեւներուն կը նմանին, հինգ կամ աւելի մասերու բաժնուած, սեւագոյն եւ ատամնաւոր եղբերով. պտուղը կը դանուի ծղօտին վրայ, կէսէն վեր. երբոր չորնայ, զգեսաներուն կը կտաւ չի . . . »

Հ. Ալիշան, Քաջունի, Լուսինեան, երեսնակը կը թարգմանեն eupatorium cabnaninum L., որ բարդ ծաղկով տունկ մըն է տարեւոր. այդ սխալն ըրած են Եւրոպացի հին գրողներէն ոմանք եւս, կարծելով որ յոյն հեղինակներու եւպատրիոնը eupatorium cannabinum L.ն է. ինչ որ բնու չյարմարիր Դիոսկորիդէսի նկարագրած տունկին զոր ամէնքը կ'ընդունին այժմ իբրեւ aigremoine :

Dalechamp (Hist. des Plantes Livre XI, chap, XX.) կը գրէ այս առթիւ որ « Յունաստանի մէջ երեսնակը Դիոսկորիդէսի նկարագրածին նման է . . . » :

Ամիրտովլաթ արարերէն անունն ալ կը դնէ դափեք, որ կը նշանակէ aigremoine (Diet. fran. arab. Gasselini; — ar.—fr. Kazimirski):

Հայրուսակ երեսնակին նոյնանիչ կը դնէ նոյնպէս, անհծած ծաղիկ, դեղուսակ. ասոսասաղ կամ անուսասաղ :

Փեկայ կամ Փեկուկայ. պեկուկայ (Պէոն յոյն բժշկին անունով, որը բժշկեց այս տունկով. Պլատոնի՝ Հէրակլէսէն առած վէրքը), — pivoine, լատ. pæonia; յն. phainis, pentorobon, glycyssida; փայուկիս. —

Ամենէն հին ճանչցուած տունկերէն մին է, որով ամենէն աւելի առասպելախառն եւ հրաշագործ. հին ժամանակ իր սերմերէն մանեակ կը կախէին երեխաներուն պարանոցը, որպէս զի ատամները առանց ցաւի դուրս գան. իբրեւ դարման ջղային գալարումներու, լուսնոտութեան, խիթերու կը գործածուէին արմատներն ու ծաղիկները. երեխային առաջին լոգանքին մէջ կը ձգէին փեկնայի ծաղիկ մը որպէս զի անոր նման կարմրուկ թուշեր ունենայ (1):

Մխրթար Գօշ կը յայտնէ (առակ ԻԹ.) նո-

րա զիւանալած յատկութիւնը. Պղինիոս, Խորհուրդ կուտան, կ'ըսէ, զայն արմատախիւ ընել զիչերը, վասն զի եթէ Արէսի թռչունը (փայտփոր) տեսնէ, կը յարձակի խլողին վրայ եւ աչքը կը հանէ . . . » :

Փեկնան հրաննկազգի հասարակ տունկ է բազմաթիւ տեսակներով, ծաղիկը կը նմանի ահագին վարդի մը կաս կարմիր, երբեմն ալ սպիտակ կամ դեղին. կտրատուած (découpée) մոյգ կանաչ տերեւներ ունի. կը բացուի գարնան կանուխ. ի սկզբան կը գտնուէր միայն լեռնային անտառներու մէջ :


Ծաղիկներն ունին հինգ հաւասար փերթեր, հինգ կամ տասը խոշոր թերթեր. առէչներն են խիստ բազմաթիւ, մէջտեղն ունենալով երեք չորս մասէ կազմուած վերադի. (supère) ձուարան որու իւրաքանչիւր մասը (carpello) նուշի մը կը նմանի :

Ամիրտովլաթ (որ Իպն Պէյթարէն թարգմանած է) կը կրկնէ բառ առ բառ Դիոսկորիդէսի նկարագրութիւնը. « Փեկնան, կ'ըսէ այս վերջինը, որձ եւ էգ կը լինի. Որձն (pæonia corallina Retz.) ընկուզնիի տերեւներ ունի. էգը (p. officinalis Retz.) ձիւլախուրի (smyrniun) նման կտրատուած տերեւներ. Երկուքն ալ իրենց ծայրերն ունին նշի նման ամաններ, որոնց մէջ կը գտնուին մեծաթիւ կարմիր սերմեր, նման նուրի հատերուն, սասոնց մէջտեղն ալ 5-6 սերմեր որ նախ կասկարմիր են եւ յետոյ կը սեւանան. Որձին արմատը մէկ մատի չափ հաստ է եւ 12 մատի չափ երկայն, սպիտակ, համը փոթոթ, էգին արմատը 7-8 ճիւղ կը լինի, զունդ գունդ, գեղձի (glande) ձեւով, ինչպէս չրէչին արմատը . . . » : Դիոսկորիդէս կ'ըսէ նոյնպէս թէ փեկնան կ'ածի բարձր լեռներու վրայ եւ անմատչելի վայրեր :

Փեկնան ունի նոյնպէս ուրիշ անուններ յիշուած Հայրուսակի մէջ, խաչախիւս (արարուս. քաւաղիպի թարգմանութիւնը), փաշափարդ, արջփարդ (այլ կիւլի), ճշնարոս, կպրեք, փախախայսակ, կոճաւօրու :

ՏՈՔԹ. ՅՈՎ. Հ. ԱՐԹԻՆԵԱՆ

(1) Flore populaire, par Eugène Rolland, 1904, Paris.



Ք Ր Ո Ն Ի Կ

Երկրի ձայնը կը շարունակէ իր պայքարն ընդդէմ հայ « ազգային » յեղափոխութեան՝ եռանդով մը եւ տաղանդով մը որ լաւագոյն դատի մը արժանի էին : Պ. Տիրբան Զաւէն կը յամառի մտածել թէ Հայոց համար միակ յուսատու եւ գործնական ճամբան՝ Թուրք ազատականներու հետ միասին Թուրքիոյ ամբողջական վերանորոգման համար մաքառելն է : Արդ ոչինչ աւելի քիչ գործնական է քան Թուրքիոյ ամբողջական վերանորոգման կարելիութեան հաւատալը : Անգլիան իսկ, որ այդ երազը մտած է այնքան երկայն ատեն, այժմ յուսահատած է. անգլո-ուսոս բանակցութիւնները, որոնք այսօր կամ վաղը Օսմանեան պետութեան բազմազան պիտի դրոշմ ալ պիտի դրաղին, — եթէ արդէն իսկ սկսած չեն — իրենց նպատակ պիտի ունենան անշուշտ՝ Թուրքիան մասնակի կամ ամբողջապէս « Եզիպտոսացիներ » : Արդ, նոյն իսկ եթէ Հայոց համար մասնաւոր բեժիմ մը չհաստատուի — ինչ որ դեռ ապացուցուած չէ, — Թուրքիոյ եզիպտոսացու մը շատ աւելի կարելի, բազմազան եւ լաւագոյն բան մըն է քան ներքին սուտ վերանորոգումը՝ Թուրք միահեծան գերիշխանութեան տակ, իսկ եթէ Պ. Զաւէն կը կարծէ թէ ձեռք ձեռքի տալով Թուրքին հետ՝ պիտի կրնանք քանի մը տարուան մէջ Թուրքին հոգեբանութիւնն արմատապէս փոխել, անոր մտքէն ջնջել իր բռնակալ, տիրապետող, մոլեռանդ եւ հակաքաղաքակրթական ձգտումները, այդ ուրիշ հարց. պէտք է այն ատեն ընդունիլ որ Պ. Զաւէն դեռ հրաշքներու կը հաւատայ : Ըսի արդէն, եւ կը կրկնեմ, որ Թուրքերու հետ գործակցութիւնը մեզի համար կարելի կ'ըլլայ այն ատեն միայն երբ ազատական Թուրքերն ընդունին մեր « ազգային » ծրագրին օրինաւորութիւնը : Երբ անոնք մեր պատմական իրաւունքը ճանչնան, մենք կրնանք այն ատեն սրտանց աջակցել իրենց վերականգման : Թուրքիոյ ապագան վտանգի մէջ է, եւ Թուրքերը իրենց քաղաքական գոյութիւնը պահպանելու համար՝ աւելի խելացի բան չէին կրնար ընել բայց եթէ իրենց իսկ կամքով Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ կանգնել ինքնա-

վար նահանգ մը հայկական՝ որ այլ եւս անհնար պիտի դարձնէր Ռուսիոյ յառաջխաղացութիւնը եւ միանգամայն՝ Հայերը ջերմ բարեկամ կացուցանելով Թուրքին՝ պիտի կարենար իրօք նոյապէս Թուրքիոյ ամբողջութեան պահպանման եւ վերանորոգման : Եւ թող Պ. Զաւէն չժպտի՝ ծիծաղելի յաւակնտութիւն մը տեսնելով Հայուն վերագրուած այս շատ կարեւոր դերին մէջ : Հայը, փոքր, ցրուած, զինուորապէս տկար, բայց առաջնակարգ նշանակութիւն ունեցող տարրն է՝ Թուրքիոյ հարցին մէջ : Թուրքիան կարող է անհետանալ, բայց հայ ժողովուրդը՝ ո՛չ, որովհետեւ Թուրք զօրութիւնը հիմնուած է զէնքի վրայ, իսկ Հայութեան գոյութիւնը՝ գաղափարի մը, քաղաքակրթական հիմունքի մը վրայ : Եթէ Պ. Զաւէն կ'ուզէ օգտակար ըլլալ իր իսկ ընտրած այդ ուղղութեան մէջ, թող զազրի հայ ազգային շարժումը արհամարհելէ, — Հայը՝ միայնակ՝ զարեւրով պատմութիւն մը կերտած է, երբ դեռ Թուրքին անունը չկար, — թող զազրի եւրոպական միջամտութիւնը ցնորք մը նկատելէ, — Եւրոպան՝ անշուշտ ի՛ր շահերուն համար՝ ուշ կամ կանուխ միջամտած է Արեւելքի հարցին մէջ ու պիտի շարունակէ միջամտել, եւ կեանք, ամողջութիւն, ազատութիւն փչել Թուրքիոյ փոսած կազմածքին այս կամ այն մասին մէջ : Եւ ասիկա արդար է ու բնական, որովհետեւ Թուրքը կարող ցոյց տուած չէ ինքզինքը այդ անհրաժեշտութիւնը իր ձեռքով լրջօրէն կատարելու : Թող Պ. Զաւէն ուշադրութեամբ կարդայ այն շատ նուրբ ու բազմակողմանի նամակը զոր Պ. Տիրբան Բէլէկեան ուղղած էր Երկրի ձայնին, եւ որ միակ ուղիղ ձեւն է Թուրքերու հետ համաձայնութեամբ գործելու թէղին, եւ հասկանալի՝ նոյն իսկ անոնց համար որ այդ թէզը իրենց ձգտումներուն ամենէն սիրելին չեն նկատեր : Թող Պ. Զաւէն, որ այնքան լաւ թրքերէն գիտէ որքան հայերէն, փոխանակ Եւրոպան դատափետելու եւ հայկական շարժումը քարկոծելու, Թուրքերուն խօսի իրենց լեզուովը, իրենց յանցանքն ու մոլեռանդ կուրուքիւնը ցոյց տայ իրենց, հասկնէ անոնց որ եթէ կ'ուզեն իրենց պետութեան գոյութիւնը փրկել, պէտք է իրենց զինուորական տիրապետողի գոռոզութիւնը մէկդի դնեն եւ ընդունին ազգային ինքնավարութեան սկզբ-

բունքը Հայոց համար, ինչպէս Ալպանացոց, Արաբներուն՝ եւն: Թուրքիան, տեսակ մը Աւրստորիայի փոխուած, կրնայ ապրիլ: Կա՛մ այդ, եւ կա՛մ վերջնական քայքայում՝ վաղը կամ մէկ դարէն, բայց անխուսափելի: Մտածենք եւ զգանք ու գործենք՝ իբր Հայ, ինչ ալ ըլլայ թեզը. այդ է կարեւորը:

« Հնչակ »ի վերջին թիւին մէջ, Պ. Սապահ-Գիւլեան նուիրած է տաճկահայոց հարցին հմտալից յօդուած մը: Ինքն ալ համաձայն է որ Թուրք ազատականներու հետ գործակցութիւնը ոչ Թուրքիան կարող է վերանորոգել, ոչ ալ Հայոց ո եւ է օգուտ բերել: Բայց Պ. Սապահ-Գիւլեան՝ ինքն ալ կը յամառի մնալ ուրիշ պիտի մը մէջ, պնդելով թէ տաճկահայոց դատը պէտք է զատել ընկերվարականութենէն եւ թէ նոյն իսկ միմիայն ընկերվարականութեան վրայ հիմնուելով է որ այդ դատը կարելի է լուծել: « Չուտ ազգայնական, զուտ հայրենասիրական սկզբունքներով չէ որ, կը գրէ, հայկական դատը առաջ մղել կարելի է . . . : Սօցիալիզմ, ահա՛ շարժիչ եւ առաջ մղող ազդակը հայկական դատին. սօցիալիստական սկզբունքներից զուրս ամէն ինչ մեղ կը տանի զէպի խաւար, զէպի անստուգութիւն, զէպի պատրանք, զէպի գառանցանք, եւն: . . . Եթէ մի գաղափար կայ որ ամենամեծ վտանգն է սպառնում տաճկահայ դատին, այդ զուտ ազգայնական նացիօնալիստական գաղափարներով առաջնորդուելն է: Ոչինչ այնքան շփոթիչ եւ անտարբերութիւններ ու նոյն իսկ թէ՛նամութիւններ չի յարուցանել որքան բարձրօրէն միաստակար այդ մտքի կիրառութեան ամենաթեթեւ ձգտումն անգամ: Նախ՝ ոչ մի ինտիլիգենտ մարդ իրեն թոյլ չի տալ, եթէ նա վերջին աստիճանի թթու նացիօնալիստ եւ խաւարամիտ չէ, եթէ դասակարգային մագնաւոր շահեր եւ հակումներ չունի, մտնել մի քաղաքական կուսակցութեան մէջ, ուժ տալ մի Դատի որ իրեն հիմունք կ'ունենայ մարմնացած անարդարութիւնը: Երկրորդ՝ սեպհականազուրկ հայ պիւղացին, մարաբան, գիւղական պրօլետարը ինչ մի զրդապատճառ պիտի ունենան

ազդակ հանդիսանալ մի Դատի որ իրենց լաւագոյն ոչինչ ունի քերելիք բաց ի լծից, որ ունին արդէն, անուան տարբերութիւնը նշանակութիւն չունի այդտեղ: »

Այս սողերուն եզրակացութիւնը այն է որ եթէ նոյն իսկ վաղը հայկական անկախ թագաւորութիւն մը հիմնուէր, Պ. Սապահ-Գիւլեան եւ նմանները ոչ միայն գո՛ւ պիտի չըլլային, այլ անտարբեր ու մինչև անգամ կասկածոտ ու դժգոհ զէմքով մը պիտի նկատէին այդ իրողութիւնը. . . չէ՞ որ հայկական թագաւորութեան մէջ եւս՝ աղքատներ եւ հարուստներ պիտի գտնուէին: Բայց ենթադրենք որ սօցիալիստական զրութիւնը հաստատուեցաւ Պ. Սապահ-Գիւլեան կը կարծէ թէ այդ երանաւէտ շրջանն մէջ՝ այլ եւս սպառնելի ու խելացիներ, տգեղներ ու գեղեցիկներ, հուժկուներ եւ տկարներ, քաջաբողջներ ու ցաւագարներ պիտի չգտնուի՞ն: Այդ յոյսը կրնայ տալ մեզի Պ. Սապահ-Գիւլեան. ո՛չ. ուրեմն ընկերվարականութիւնը պիտի չիրագործէ մարդկային « բացարձակ » հաւասարութիւնը. ուրեմն եւ ընկերվարական բեժիմն ալ պիտի չարունակէ ըլլալ « մարմնացած անարդարութիւն »: Ընկերվարականութիւնը ուրիշ բանի չի ձգտիր ու չի կրնար ձգտիր բայց եթէ մարդկութեան վէրքերէն մին՝ չքաւորութիւնը՝ ջնջելու. այդ բաղձանքը, այդ ազնիւ բաղձանքը մարդիկ ունէին՝ ընկերվարականութեան ստեղծումէն շատ առաջ. ընկերվարականները իբր ատոր համեմուտ միջոց կ'առաջարկեն իրենց սիստեմը, որուն գործնականութիւնը վարկածային է: Իսկ ինչի՞ կը ձգտին անոնք զոր Պ. Սապահ-Գիւլեան « խաւարամիտ, թթու նացիօնալիստ եւն. » կը կոչէ. բուժելու ընկերական ուրիշ խոշոր վէրք մը, ազդի մը ստրկացումը՝ տիրող բռնաւոր ցեղի մը տակ. միթէ այս հարցը՝ ինքնին՝ նուա՞գ կարեւոր, նուա՞գ ցաւադին է քան բռնաւորական հարցը, միթէ բոլորովին չի՞ բաւեր ազնիւ ու արդարասէր սրտեր խանդավառելու. միթէ՞ նոյն իսկ՝ աւելի ազնիւ, անշահախնդիր եւ իտէպլական չէ՞: Ու ո՛րքան կը սխալի Պ. Սապահ-Գիւլեան կարծելով թէ հայ գիւղացին՝ քաղաքական ազատագրման մէջ միմիայն լուծի անուանական փոփոխութիւն տեսնելով անտարբեր պիտի մը:

նայ . իր այդ ենթադրութիւնը հիմնովին ար-
ուեստական , բանագրութիւն է եւ չի համապա-
տասխաներ որոշ ու ծանօթ իրականութեան .
հայ չօգտեալ չի գափոխականը որ մինչև այսօր
իր արեւը թափած է հայկական գատին համար ,
այդ բանն ընթաց է ամէն բանէ առաջ եւ գրեթէ
ապրամիրթօրէն՝ ազգասիրական զգացումէն
մղուած , պեղին ազատութիւնը վերահաստատե-
լու համար : Այսինքն կամ Աստուծոյ լեռնա-
կանները , խեղճ պղպատ մարդիկ , սոցիալիզմին
ի նշ ըլլալը չեն գիտեր , իրենց կեանքը թուրք
կամ քրիստոնոսութեան դէմ մարտաբերու համար
է որ վրանգի գրած են . Սերոր մը , Անգրանիկ
մը , Մուրա մը , երբ գործած են երկրին մէջ ,
միմիայն այդ զգացումին հպատակելով է որ
գործած են : Ասոնք « իրողութիւն » են , մինչ
Պ. Սաբահ-Գիւլեանի հաստատումները՝ ճարպիկ
բայց մնամէջ սոփիզմ : Իսկ սոփիզմէն աւելին ,
պարզ տղայամտութիւն է՝ յայտարարելը , ինչ-
պէս կ'ընէ Պ. Սապահ-Գիւլեան , թէ հայկական
գրաւը ինքն իսկ՝ իր լուծումը գտնելու համար
միմիայն սոցիալիզմի վրայ հիմնուելու է : Այս
մասին սրբէն գրած եմ , եւ զեռ պիտի գրեմ՝
ուրիշ ազգի . աւելի մաքրամասն . առ այժմ
աւելորդ է ծանրանայ այս կէտին վրայ : Պիտի
գիտել տամ միայն որ մեզի բազմակից ազգերը
ազատագրուած են՝ առանց սոցիալիզմի վրայ
հիմնուելու , ու թերեւս ճիշդ որովհետեւ սոցի-
ալիզմով զբաղելու մասնակ չկորսնցուցին եւ
իրենց անբողջ սիրան ու հոգին ազգային ազա-
տագրութեան բոլորանուէր ընծայեցին : Աս ալ
« իրողութիւն » մըն է , որուն դէմ ամենէն
փայլուն ֆրանկերը ստուծ են՝ գործնական մարքի
մը համար : Եւ այս « իրողութիւնը » այնքան
ակնհայտ է , որ Պ. Սապահ-Գիւլեան ինքն ալ
իրեն հակասելով՝ կը յիշէ զայն . « Ֆրանսական ,
գերմանական , իտալական (կրնայ նաեւ աւել-
ցնել՝ յունական , սերպիական , կրետական ,
եւն .) յեղափոխութիւնների իրական ազդակը
այդ երկիրների բուրժուազիան լինելով՝ ժամա-
նակի ոչ-բուրժուա , աշխատուոր դասակարգը
նրան ոչ թ տուեց , օրնեց բուրժուազական ազա-
տութիւններ ձեռք բերելու համար : » Իրաւ է
որ այս ըսելէ առաջ , Պ. Սապահ-Գիւլեան զու-
շուէթիւնը կ'ունենայ սա հարցումն ուղղելու .
« Բայց ո՞ւր է այդ հարցում , ունեւոր , բուր-
ժուա դասակարգը որ յանձն պիտի առնէ ազգակ
հանդիսանալ հայկական գատին : » Ու կ'արձա-
կէ սա վճիռը , որ սխալ է . « Հայկական խնդ-
րին ծնունդ եւ կեանք տուողը եղել է եւ է հայ
գիւղացին , հայ արհեստաւորը , հայ սեպհակա-
նազուրկը , եւն . » : Թէ հայկական գատին այս
փերջին քառորդ դարու յեղափոխական փուլին
մէջ հայ ունեւոր դասակարգը չափազանց քիչ
եւ այն ալ գրեթէ միշտ զօտով՝ մասնակցած ,
աջակցած է , ստիկա ճիշդ է՝ ի մեծ ամօթ այդ
դասակարգին Բայց ճիշդ չէ որ հայկական խնդ-
րին ծնունդ տուողը եղած է հայ « փրոլէթէրը » .
հայկական խնդրին , — այսինքն Հայութեան
քաղաքական ազատագրութիւնը ձեռք ձգելու

խնդրին — հիմնադրները կղած են՝ գրեթէ
տարամիրթօրէն՝ ոչ թէ սեփականազուրկ մարա-
ներ , այլ « ջոջ » եր , Իսրայէլ Օրի վաճառականը ,
պարսկահայ մէլիքները , Դաւիթ բէկ , Արղըթ-
եանց , Աշարակեցի , Մխիթարեան քերթող-
ները , Կրիմեան , Վարժապետեան , Պլշիկիսաշ-
լեան , Օսեան , Զէյթունի « իշխան » ները , եւն .
եւն . բոլորն ալ տեսակ մը « քափիթալիսթներ »
զբանական կամ մտաւորական տեսակէտով , ե-
րոլորն ալ՝ զուտ ազգային զգացումէն ստաջ-
նորդուած : Իսկ յեղափոխական նոր գործունե-
ղութեան մէջ , հայ գիւղացին , փրոլէթերը իրօք
մեծ դեր է կատարած՝ անձնազոհութեան ամե-
նաստուար բաժինն ստանձնելով՝ բայց յանուն
« ազգային զգացման » , իսկ իրեն հետ՝ մար-
տած են Հայեր , որ ոչ քափիթալիսթ են ոչ փր-
լէթէր — պէտք չէ մտնալ այդ դասակարգն ալ
որ ամենախոշոր զանգուածներէն մին է ազգի
մը , այսինքն փոքրիկ հողատէրներ , արհեստա-
ւորներ , համեստ առեւտրականներ , ուսուցիչ-
ներ , կղերականներ , ամէն կարգի մտաւորա-
կաններ :

Սոփիզմները վէկղի զննէք , հայկական դա-
տը կը լուծուի միայն այն ատեն երբ ըմբռնենք
որ — անունն իսկ ցոյց կուտայ — անոր հի-
մունքը ազգային զգացումն է , երբ յաջողինք
անոր շուրջը խմբել բոլոր Հայերը՝ առանց « եւ
է խտրութեան Առանց ստոր » « իտաւար , պատ-
րանք ու զառանցանք » միայն կը գտնենք :

Եթէ գտնուին Հայեր որ այս հարցէն աւելի
չանկկան եւ խանդավառող գտնեն բանւորներու
բազմին բարեօրման հարցը , մտքէս իսկ չեմ ան-
ցընի գիրենք ետ կեցընել ու մերնին այդ իրենց
սիրական թէգին նուիրելէ . ամէն մարդ ազատ
պէտք է ըլլայ իր նախասիրած իտէալին հետա-
պնդելու : Բայց յանուն ազատութեան՝ պէտք է
որ մեր սոցիալիստները գիտնան յարգել հայկա-
կան գատը « Հայու պէս » ըմբռնողներուն ճրգ-
տու մը , եւ ազգայնականութեան դէմ չմարա-
ոին պաշտօնական օսկանին մէջ կուսակցու-
թեան մը զոր « ազգասէր » ներ հիմնած են , եւ
որուն զբոյսակին տակ հաղարաւոր Հայեր մտած
են « ազգային » իտէալին սիրոյն :

Հայ յեղափոխական կուսակցութեանց մի-
ութեան կամ համերաշխ գործակցութեան հարցը
հետզհետէ աւելի լաւ ճամբու մէջ մտնել կը
թուի Պարսկաստանի Իրօզակեան եւ հին Հըր-
չակիտան քոմիսթէներուն սրտաշարժ ու գեղեցիկ
մերձեցումը շատ յուսատու երեւոյթ մըն է . եւ
կ'ապացուցանէ՝ անգամ մը եւս՝ որ եթէ վա-
րիչները կամենան՝ ամբողջական միութիւնն ալ
շատ կարելի է , քանի որ մասնական եղբայրա-
ցում մը հարաւոր կըլաւ՝ փոխադարձ համաձայ-
նութեամբ , նոյն այն Պարսկաստանին մէջ որ
ամիսներ առաջ Իրօզակեանք ու Հնչակեանք
իրար կը ջարդէին :

Մեր յեղափոխական մամուլին մէջ ի նպատ
միութեան յօդուածները կը բազմապատկուին ,

Եւ հետզհետէ աւելի գերծ ամէն վերապահումէ վեր. Հնչակեանց « Հնչակ »ը, Ձայն Հայրենեացը, ինչպէս եւ Դրօշակեան Ռազմիկը եւ Հայրենիքը, ինչպէս հին Հնչակեանց « Հնչակ »ը ջերմօրէն կը բաղձան միութեան իրականացումը : « Երիտասարդ Հայաստան »-ի մէջ կրեցող քանի մը անհարկի յօգուածները բաւական չեն խանգարել այս միութենասիրական ընդհանուր ներդաշնակութիւնը : Ճշմարտապէս ցաւալի նօթ մը՝ այս բոլոր նոր եւ ուրախառիթ պայմաններուն մէջ, վեր. Հնչակեանց ներքին պառակտումն է, որ այս օրերս սուր կերպարանք մը ստացած է : Այն պահուն ուր բոլոր կուսակցութեանց միջեւ համերաշխութիւն հաստատել կ'ուզուի, ամենամանախորժ անակնկալ մըն է այդ պառակտումը ճիշդ այն կուսակցութեան մէջ որ ցարդ ընդհանուր միութեան ամենէն ջերմ բաղձացողը եղած էր : Ոչինչ գիտեմ այդ պառակտումը պատճառորոգ իրողութիւններէն. ասինք մը ի վեր, արտասահմանի թերթերէն ոմանց մէջ դժգոհութեան ու սուղքի ձայներ կը բարձրանային Եգիպտոս գոմարուած վեր. Հնչ. Ընդհ. պատգամաւորական ժողովին եւ հոն ընտրուած կեդրոնական վարչութեան գէմ. ոչ մէկ որոշ տեղեկութիւն ունենալով այդ ժողովին եւ այդ վարչութեան մասին, կարծիք չէի կրնար յայտնել : Բայց այժմ Պոսթոնէն ուղարկուած « Պաշտօնական(?) յայտարարութիւն » տիտղոսուած գրութիւն մը, եւ Հնչակի ու Ձայն Հայրենեացի վերջին թիւերուն մէկ քանի յօդուածները այդ մթութեան մէջ քիչ մը լոյս կը սփռեն, եւ այդ լոյսը՝ գէթ ինծի համար բաւական պայծառ կը թուի : Ես սա յայտնի է որ Ձայն Հայրենեացի խմբագրատան վրայ նորընտիր կեդր. վարչութեան գէմ ապստամբող հատուածին կողմէ գործուած աւազակային յարձակումը Ամերիկացւոց հանդէպ մեր ամբողջ ազգը, մեր դատը, մեր պատիւը խայտառակութեամբ եւ ամօթով ծածկելու արգիւնքը միայն կրնայ ունենալ, եւ թէ ատեն է վերջապէս ըմբռնելու որ կուսակցական եւ կենթակուսակցական շահերէն շտա վեր կայ « ազգին » շահը, եւ թէ ամէն անհատ կամ կուսակցութիւն կամ հասուած որ, կրթիւրու բոլորքման սպարէզ տալով, կը վնասէ ազգային շահուն, կը դատապարտուի հանրային կարծիքէն : Ասկից զատ, դասելով եղելութիւնը երկու կողմի հրատարակութիւններէն, նկատելով անունները զոր այդ հրատարակութիւնները մէջտեղ կը նետեն, կը տեսնենք որ մէկ կողմէ կը գտնուին ճշմարիտ յեղափոխական գործիչներ, Արզուեան, Բարսեղամեան, եւն. միւս կողմէ՝ դժգոհներու խմբակ մը, իր գլուխն ունենալով թղթէ յեղափոխական մը, Պ. Ս. Պարթեւեան, որ հոգին ըլլալ կը թուի այս փոքրիկ ապստամբութեան (Պոսթոնէն արձակուած պաշտօնական(?) յայտարարութիւնը իր լորձնառատ գրչին անտարակուսելի մէկ ժայթքումն է) : Հարցը դժուարալուծելի չէ ուրեմն Պ. Պարթեւեան կ'ապստամբի ճիշդ այն մարդոց գէմ որ զինքը քանի մը տարի

առաջ՝ հանելով տիղմին մէջէն ուր թաթխուած էր մինչեւ վրդը՝ տարին յեղափոխական կուսակցութեան մը խմբագրութեան ղեկին բարձրացնել. այդ բարի մարդիկը կը կարծէին որ նոր եւ ազնիւ միջավայրի մը մէջ՝ այդ պարոնին նկարագրի թերութիւնները պիտի սրբագրուէին եւ իր գրական կարողութիւնները օգտակար պիտի կրնային ըլլալ հայկական դատին : Բայց Պ. Պարթեւեան ապացուցուց որ սրբագրուել զիտցող մարդոցմէն չէ : Ոչ միայն ինքը չմաքրուեցաւ, այլ կարելի է ըսել ազտուեց այդ նոր միջավայրը ուր կը մանէր : Քանի մը զրական գեղեցիկ կտորներու հետ, արտագրեց անթիւ էջեր ատելութեան, անուանարկու մի, եւ շարաւոտ գեղեկութեան « Տէրտունին » որուն գէմ վերջի վերջոյ անհրաժեշտ դատեցի բողոքել, « Տէրտունին »-ն որ Ձ. Հային մէջ Գրիտաստիոր Միքայէլեանը « թօփալ Գրիտաստիոր », Դրօշակեան վարիչները « ազգասպան », Պ. Ռուբէն Զարդարեանը « մարդասպան ու դաւաճան », Ակնցիները « շահամու », Ռուսահայերը « ոչխարի պէս ջարդուող » կը հռչակէր եւ Կովկասի Հայոց խորհուրդ կուտար թաթարուհիները պղծել, « Տէրտունին » ինքն իսկ Պ. Պարթեւեանն էր : (Իր ստանունին քօղը չպատուեցի այդ պահուն անձնական բանակոտի ո եւ է երեւոյթ շտալու համար քննադատութեանս) : Թէ վեր. Հնչ. կուսակցութիւնը յանցաւոր էր թոյլ տալուն համար որ Պ. Պարթեւեան փոխանակ կուսակցութեան ուլոյն ու ձգտումներուն թարգմանն ըլլալու իր փամֆլէթագրի մաղձը անսանձօրէն թափէր կուսակցութեան օրկանին մէջ, այդ անտարակուսելի է : Այսօր, հաւանաբար արդիւնեւ կուսակցութեան սիւնները կաղմող անձերը որոշում տուած են այդ թարախի աղբիւրը նետացնել իրենց միջավայրէն, Պ. Պարթեւեան « որջացող » ու « հաղարաւոր տոյարներ մարտող » կը հռչակէ անձ մը զոր վեց ամիս առաջ՝ իր աշխարհի առաջին յեղափոխականը պիտի զիւցազնուրդէր : Հարցը, կը կրկնեմ, պարզ է չեմ գիտեր ո՞վ են այն Հնչակեանները որ այդ ապստամբութեան կը մասնակցին. եթէ այնպիսի մարդիկ են որ իր յեղափոխական Պարթեւեան մը Արզուեանէ մը կամ Բարսեղամեանէ մը գանազանել չեն գիտեր, վեր. Հնչ. կուսակցութեան համար « զտում » մըն է այդ պիտիներուն հեռացումը. եթէ կան իրենց մէջ ազնիւ անձեր որ խաբուած են, անոնք չպիտի ուշանան անջատուելու այդ արտասահմանեան յեղափոխականի տիպարներէն որոնք Հայերու գէմ հաչկու մէջ միայն ցոյց տուած են իրենց ազգասիրութիւնը, ու պիտի երթան խմբուել անոնց շուրջ որոնք գործի դաշտին մէջ, թուրք բռնութեան գէմ, իրենց կեանքը վտանգելով ապացուցած են յեղափոխական անունին արժանի ըլլալին : Կ'ենթադրեմ որ հին Հնչակեանք եւ Դրօշակեանք ալ այսպէս պիտի մտածեն : Հայ յեղափոխականներու ընդհանուր համերաշխութիւնը, զոր կը բաղձանք իրեն նպատակ ունի ոչ թէ արտասահմանեան փամֆլէ-

Թագիրներու ջոկատ մը պատրաստել , այլ ձեռք ձեռքի տուած երթալ « գործի դաշտը » եւ « գործել » : Որչափ ալ անախորժ ու տխուր ըլլայ այդ պառակտումը , հայ յեղափոխական Միութիւնն արգիլելու ո եւ է բնաւորութիւն չունի ուրեմն ըստ իս :

Ապստամբութիւն մըն ալ տեղի ունեցաւ Վինետկի Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ : Արտասահմանի հայ թերթերը մանրամասնորէն խօսեցան այդ եղելութեան վրայ , եւ պէտք չունիմ պատմելու դայն : Մուրատ-Ռափայէլեան վարժարանի մասին առաջին քննադատութիւնը Անահիթի մէջ երեցաւ սարիներ առաջ : Կ'երեւայ թէ գպրոցը շարունակեր է մնալ միւսնոյն անկարգ գրութեան մէջ : Այս անգամ սպստամբութիւնը աւելի ուժգին ձեւով է կատարուեր . աշակերտները , դիտարաց , ոտաբուսիկ , խմբովին գացեր են մինչեւ վանքը , իրենց բողոքը յայտնելու են վանահայրին : Վանահայրը զիրենք սիրով մտիկ է ըրեր , զգացեր է որ անոնց բողոքին մէջ իրաւացի կէտեր կան , եւ խոստացեր է բարենորոգումներ մտցնել դպրոցին մէջ : Ասոր վրայ , դպրոցին սնորհը՝ Հ. Սարեան , իրեն հետ ունենալով երեք Մխիթարեաններ , կը ձգէ կ'երթայ Վինետկէն , — նոր սպստամբութիւն մըն ալ ինքը յարուցանելով , — պատերազմ կը հռչակէ Միաբանութեան դէմ , եւ այժմ Պիոս Ժ. պապին կը դիմէ՝ անկից խնդրելով հարցին լուծումը : Այս բոլորը շատ տխուր է . եւ խորապէս ցաւալի է ինծի համար՝ տ'անել Հ. Սարեանի հետ Հ. Սրբէն Ղազիկեանը , սպստամբ Վինետկի վանքին դէմ : Ինչ ալ ըլլայ հարցը , Մխիթարեանները իրենք իրենց մէջ , կամ գէթ հայ շրջանակի մէջ , կարգադրելու էին վէճը : Մուրատ-Ռափայէլեան վարժարանը , թէպէտ կաթողիկէ միաբանութեան մը զեկալարութեան յանձնուած , հայ « աղբային հաստատութիւն մըն է . Պիոս Ժ. քանոր մէջ մտցնելը ակործանի չէ մեր ազգային զգացման : Հ. Ղազիկեան , ուսումնասիրութեան ու գրականութեան մարդ , վանքին զարդերէն մէկը . ինչ ընելու գացեր է այդ galèreին մէջ , չեմ հասկնար . խենդութեան հով մըն է կարծես որ կը փչէ կոր Հայերուս վրայ :

Այսպէս կամ այնպէս , Մխիթարեանց արաւայրը որոշած ըլլալ կը թուի արմատապէս բարենորոգել Մուրատ-Ռափայէլեան վարժարանը : Այդ սրշումը քիչ մը ուշ է արուած , բայց անգամ մը որ արուած է՝ կը հաւատամ որ գործադրուի : Կիւրեղեան արքահայրը այս վերջին 7-8 տարիներուն մեջ « ուզեց » որ Բագմալեայ վերանորոգուի , Միաբանութիւնը վերսկսի իր սրահան , գեղարուեստական ու ազգասիրական նախկին փայլուն գործունէութիւնը , եւ՝ խրատուսելով հին ու նոր ուժերը որ կան վանքին մէջ՝ ըրաւ ինչ որ ուզեց : Այս վերջին շրջանին մէջ , Ս. Ղազարու մտաւորական

գործունէութիւնը շատ բեղուն ու շողշողուն եղաւ . ապերախտութիւն պիտի ըլլար ասիկա ուրանալը : Կը մաղթեմ որ նոյն կորովով , նոյն բացարձակ բարի կամեցողութեամբ՝ արքահայրը կարգ զնէ , կեանք փչէ Մուրատ-Ռափայէլեան վարժարանին մէջ : Ասոր համար , անհրաժեշտ է որ արքահայրն ամէն բանէ առտջ ի նկատի ունենայ սա գլխաւոր հանդումանքը՝ « Մուրատ-Ռափայէլեան վարժարանը հայ ազգային կրթական հաստատութիւն մըն է . » կրօնական խրատութիւնը պէտք է բացարձակապէս վտարուի անկից : Մխիթարեան Միաբանութիւնը կաթողիկէ է , բայց կառկարարները այդ գումարն անոնց յանձնած են՝ ՀԱՅ աղբի (եւ ոչ թէ միայն հայ-կաթողիկէներու) աղքատ պատանեաց ձրի կրթութիւն տալու համար . Պիոս Ժ. պապը , որ ճշմարիտ հաւատացեալ մըն է , չեմ կարծեր որ կտակարարի մը սրբազան կամքին խեղաթիւրումը պահանջելու մեղքը գործել ուզէ : Իժարդդարար , Մխիթարեանները ընդհանրապէս կաթողիկէ պատանիներ նախընտրած են ընդունիլ ձրի , լուսաւորչականները՝ վճարմամբ . ընդունելով այսուհետեւ ո եւ է տղայ որ Հայ է եւ օժտուած , ու կրօնքի դասերու համար՝ միմիայն կաթողիկէներուն աւանդելով կաթողիկէ պատանիները , Մխիթարեանները թէ՛ խեղափոխութիւն պարկեշտ վարմունք մը ունեցած պիտի ըլլան : Իսկ թէ որքան անհրաժեշտ է որ առողջարանական պայմանները , դասատուներու ընտրութիւնը , ընդհանուր բարեկարգութիւնը այդ դպրոցին մէջ բարեփոխին , այս մասին աւելորդ իսկ է վիճիլ . այդ կը պահանջէ դպրոցին շահը , Մխիթարեանց շահը , ազգին շահը , եւ այդ կը պահանջէ կառկարարներուն կամքը . ու որովհետեւ կառկարարները իրենց կամքին հետ ձգած են բաւականաչափ գումար մը զայն իրականացնելու համար , Մխիթարեանց բարի կամեցողութիւնը միայն պէտք է ուրեմն որպէս զի այդ նուիրական կամքը լիովին կատարուի : Ազատ երկիր , դրամ , ուսեալ եւ ազգասէր միաբանութիւն մը , ահա պայմաններ որոնց մէջ՝ դպրոց մը կարող է եւ պէտք է անթերի հաստատութիւն մը գտնայ . կը մաղթենք , ու կը յուսանք , որ այսպէս ալ պիտի ըլլայ :

Գահիրէի Լուսարեւին մէջ , խօսելով Լա Հէյի յոռաջիկայ համաժողովին մասին , Պ. Արփիարեան « դիմումներու » օգտակարութեան փութին վերադառնալով՝ պահիկ մը , կ'առաջարկէ որ Հայերը իբր պատգամաւոր այնտեղ զրկեն Պ. Փիէր Բիլեարը , Մուրատը եւ Սնորհանիկը :

Անտարակոստի է որ Հայոց հարցը , ինչպէս ո եւ է « քաղաքական միջազգային հարց » չպիտի մտնէ Լա Հէյի Համաժողովին օրակարգին մէջ : Այդ կրնայ կարելի դառնալ եթէ մեծ պետութիւն մը՝ վեհանձնութեան արտասովոր

ժեսթով մը՝ յանդուզն քայլ մը առնէ, ու ո եւ է արդէն զրուած հարցի հետ կապելով Հայոց հարցը, կողմնակի կերպով զայն յանկարծ դնէ Համաժողովին առջեւ. առիկա Ամերիկայի նախագահ Բուզվէլթը կամ Անգլիոյ թագաւոր էտուարտ է.ը միայն կրնան ընել, եթէ ուզեն. հաւանական չէ որ այդպիսի քայլ մը առնեն: Համաժողովի յայտագրին մէջ Հայոց հարցը մեր ձեռքով մտցնել մեզի համար անկարելիութիւն է ուրեմն. բայց կ'ըմբռնեմ որ այդ մեծ ու հանգիսաւոր գումարման առթիւ՝ Հայերը պատգամաւորներ ունենան Լա Հէյի մէջ, Հայոց հարցին վրայ բոլոր պետութեանց պատուիրակներուն ուշադրութիւնը ի մասնաւորի հրաւիրելու, համակրանք յարուցանելու, ուշիմ թելադրութիւններ ընելու համար: Այդ տեսակէտով համաձայն եմ Պ. Արփիարեանին թէ պէտք է Հայերը այդ պահուն ներկայացուցիչներ ունենան « քուլիսի մէջ » գործելու համար: Այդ մասին՝ արդէն այստեղ՝ բարեկամական շրջանակի մը մէջ խորհուած է, եւ Քիլեարի անունը արտասանուած է՝ իբր ներկայացուցիչ հայկական դատին: Եւրոպացի մը որ կ'երթայ Եւրոպացիներու մօտ պաշտպանել Հայոց դատը, խոր ազդեցութիւն կարող է գործել Արփիարեան կաւեցնէ Մուրատի եւ Անդրանիկի անունները Քիլեարի անունին վրայ: Գաղափարը շատ լաւ է. միայն կ'առաջարկեմ որ այդ երկու ազնիւ գործիչներուն միանայ նաեւ Վեր. Հնչակեան ծանօթ գործիչ մը, օրինակի համար՝ Պ. Միհրան Սվազլեանը. Պ. Սվազլեան հանրածանօթ է եւ ամենուն համակրելի՝ իր ազգասէր փրոփական տեսիլի գործունէութեամբ, որ կը սկսի այնպիսի տան մը երբ Հնչակեան ու Դրօշակեան կազմակերպութիւնները դեռ հազիւ թէ գոյութիւն ունէին. իր անկեղծ ազգասիրութիւնը, իր քաջ ծանօթութիւնը անգլիերէնի եւ ֆրանսերէնի, իր եւրոպացած մարդու նորը վարւողութիւնը, քաղաքական մարդոց հետ իր ունեցած սերտ յարաբերութիւններով մարդուած փրոփական տեսիլի յատկութիւնները եւ իր Վեր. Հնչակեան կուսակցութեան հեղինակաւոր գործիչներէն մին ըլլալու հանդամանքը, լաւ ընկեր մը եւ գործակից մը պիտի կացուցանեն զինքը Պ. Քիլեարին, Մուրատին եւ Անդրանիկին: Պ. Քիլեար պիտի ներկայանայ իբր ներկայացուցիչ հայասէր Եւրոպացուց, Անդրանիկ, Մուրատ եւ Սվազլեան՝ իբր ներկայացուցիչ հայ յեղափ. երեք կուսակցութեանց. այդ քառեակը կարող է օգտակար ըլլալ Լա Հէյի մէջ:


Ո՛րքան լաւ կ'ըլլար որ Լա Հէյ երթալէ առաջ այդ չորս անձնաւորութիւնները նախապատրաստական տեսակցութիւն մը ունենային, իրենց տեսութիւնները պարզելու եւ բաղդատելու, Եւրոպայի ներկայացուցիչներուն իրենց ըսելիքը համախոհաբար ճշգրտելու համար. այս նախնական համաձայնութիւնը անհրաժեշտ է: Եւ այդ նախապատրաստական խորհրդակցութիւնը՝ սա ուրիշ մեծ օգուտն այ պիտի ունենար որ երեք կուսակցութեանց ամենէն կարեւոր գործիչներէն

երէն երեքը՝ ազգօգուտ եւ անդրակուսակցական հարցի մը շուրջ խմբուած, գործակցութեան մէջ իրար ճանչնալով, փոխադարձ համակրութեամբ կապուելով, պիտի անհունասպէս դիրքացնէին եւ փութացնէին հայ յեղափոխական կուսակցութեանց Համաժողովի ծրագրին իրականացումը, զոր ամենքս կը բաղձանք: Կարելի չէ՞ որ արդեօք որ Մուրատ հաճէր ինքն իսկ հրաւիրել միւս երեք անձնաւորութիւնները՝ Լա Հէյի համար խորհրդակցական գումարումի մը:

Ա. ՉՊԱՆԵԱՆ

Յ. Գ. — Վերջին պահուն Թիֆլիսի ժամանակին մէջ, հրատարակուած կը տեսնեմ ազդ մը որով հին Հնչակեան կուսակցութեան Ռուսաստանի եւ Կովկասի պատգամաւորական ժողովը եւ Հ. Յ. Դաշնակցութեան Արեւելեան բիրտն միասնաբար կը յայտարարեն թէ համաձայնութեամբ արդէն իսկ լիազօր մարմին մը կազմած են « մշակելու միջոցներ, միանգամ ընդ միշտ վերջ տալու միջկուսակցական անմիտ թշնամական յարաբերութիւններին եւ եղբայրասպանութիւններին: » « Այդ մարմնի անմիջական գործը կը լինի, կը շարունակէ ազդը, ուղարկել գաւառները իր լիազօր անդամներին եւ ներկայացուցիչներին՝ քննելու եւ լուծելու առկախ մնացած բոլոր խնդիրները որ սլաճառ են դառնում վերոյիշեալ թշնամութիւններին: »

Մեր ուրախակցութիւնները եւ շնորհաւորութիւնները կը յայտնենք այն ազնիւ անձերուն որ նախաձեռնութիւնն ունեցած են դէպ ընդհանուր միութիւն այս կարեւոր քայլը եւս առնելու:



Le Gérant : FRÉDÉRIC MACLER
 Imp. D. DOGHAMADJIAN
 18, Rue des Gobelins, Paris.

ԻԱ. ՏԱՐԻ

Հ Ա Ն Դ Է Ս Ա Մ Ս Օ Ր Ե Ա Յ

Ք Ե Ր Ք Ը

մտնելով իր գոյութեան ջերմ տարեշրջանը կը մտայ հաւատարիմ իւր նպատակին որ է հայ գրագէտ դասակարգին նպաստամատոյց ըլլալ զարգացման ճամբուն վրայ, ներկայացնելով անոր ազգային եւ օտարազգի գիտնականաց մտայ զեղեցկագոյն եւ պէս պէս ծաղիկները :

Տարեկան բաժնեգրին է 15 ֆրանք, 6 բուրլի :

ՄԵՐ ՅԱՐԳԵԼԻ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐՈՒՆ

« Հանդէս Ամսօրեայի » գնոյն փոքր ինչ բարձրանալը կը յուսանք թէ առիթ չ'ըլլար մեր յաճանորդաց թուոյն նուազելուն : Հայ գիտնականաց նուիրում ուսումնաթերթը յայտնի է՝ մէկալ ամէն թերթերէն Ա.Ի.Ն.Ի ԲԱՋԱԼԵՐՈՒԹԵԱՆ պէտք ունի, ըստ որում ՄԻԱՅՆ գիտնական հասարակութեան մատչելի է որ դժբաղդարար տակաւին փոքրաթիւ քանակ մը կը կազմէ : Սեբրուսանն պիտի ջանանք « Հանդէսը » միշտ նոյն բարձրութեան մէջ ՊԱՀԵԼ եւ ՇԱՐՈՒՆԱԿԵԼ, եթէ բաժանորդաց արդէն իսկ անձուկ սահմանը առաւել եւս չանձկանայ :

Այս առթիւ կը խնդրենք մեր այն յարգոյ բաժանորդներէն, որ տակաւին իրենց անցեալ տարուան բաժնեգրինը վճարած չեն, նոյնին առաքումը փութացընել :

ԽՄԲ. « ՀԱՆԴԷՍԻ », ,

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ « ԱՆԱՀԻՏ »Ի

- Թիւ 1. — Նահապետ Բուշակի Դիւանը, սիրոյ երգեր, խրատական եւ այլաբանական երգեր, պանդուխտի երգեր. Գննական ուսումնասիրութեամբ մը հրատարակեց Ա. Չօպանեան. 3. ֆր
- Թիւ 2. — Մկրտիչ Պեշիկպաշեանի Քերթաւածներն ու ճառերը, ծանօթագրութիւններով հրատարակեց Ա. Չօպանեան. 4 ֆր. 50

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԳՐԳԻՐ

LES MASSACRES D'ARMENIE, témoignage des victimes; recueil de lettres, traduites en français par A. TCHOBANIAN: préface de GEORGES CLEMENCEAU, Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

L'ARMENIE, SON HISTOIRE, SA LITTÉRATURE, SON RÔLE EN ORIENT par A. TCHOBANIAN, avec une introduction d'ANATOLE FRANCE. Librairie du Mercure de France, 1 ֆր.

ZEITOUN, DEPUIS LES ORIGINES JUSQU'A LA GRANDE INSURRECTION DE 1895 par AGHASSI: Traduction française d'A. TCHOBANIAN: préface de VICTOR BERARD Librairie du Mercure de France. 3 ֆր. 50

POEMES ARMÉNIENS ANCIENS et MODERNES, traduits en français par A. TCHOBANIAN, et précédés d'une étude de GABRIEL MOUREY sur la Poésie et l'Art arméniens. 2 ֆր.

CHANTS POPULAIRES ARMÉNIENS, traduction française avec une introduction par A. TCHOBANIAN; préface de PAUL ADAM. Librairie Paul Ollendorff.

Ouvrage couronné par l'Académie Française

3 ֆր 50

ԱՆԱՀԻՏ Ի բաժանորդագրութեան պայմանները

ԱՆԱՀԻՏԸ կը հրատարակուի ամիսը անգամ մը :

Բաժանորդագրինն է տարեկան՝ 10 ֆրանք (Ֆրանսա), 12 ֆրանք (օտար երկիրներ), 2 տոլար (Սմերիկա), 2 ռուպլի (Ռուսիա) :

Ղեցամսեայ՝ 5 ֆրանք (Ֆրանսա), 6 ֆրանք (օտար երկիրներ), 4 տոլար (Սմերիկա), 3 ռուպլի (Ռուսիա) :

Յօդուած եւ բաժանորդագրին զրկել հետեւեալ հասցէին ,

A. TCHOBANIAN

17, Rue La Bruyère

Paris

« ԱՆԱՀԻՏ » Ի ԳՈՐԾԱԿԱԼՆԵՐԸ

Թիֆլիս	Պարոն Լեւոն Մելիք-Աղամեանց
Բագու	» Ստեփան Ալչրճեան
Ռուսնուզ	» Գառնիկ Մաղմանեան
Գառնիք	» Միհրան Աբգարեան
Ճիլիպէ	» Թազուր Հինդլեան
Դաւրիզ	» Վ. Բժշկեան
Ուօֆնկրն	» Տ. Մասճեան
Իսր Բենպրին	» Գարրիէլ Մուշէղեան
Իսր Ուօքրքաուն	» Կ. Մալխասեան
Սեմրըլ Ճօլս	» Նշան Մինասեան
Չիքալօ	» Ս. Մուրատեան
Նեուէ	» Յ. Արոզեան
Ուօքր	» Մինաս Գարրիէլեան
Ճրէզնօ	» Գ. Նալպանտեան
Նիւ Պրիքէյն	» Ս. Սաչտըլեան
Փրովիսէնս	» Աւագ Կարապետեան
Նիւ Ծօրֆ	» Եղիա Գուգուճեան